


ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ



ԿԵԼՍԱՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ

6

**АРАМ АШТОВИЧ
КАЛАНТАРЯН
БИОБИБЛИОГРАФИЯ**

ВВЕДЕНИЕ, БИБЛИОГРАФИЮ И АННОТАЦИИ СОСТАВИЛИ
У. МЕЛКОНЯН, Н. АКОПЯН, А. ЖАМКОЧЯН, Ф. БАБАЯН,
Д. МИРИДЖАНЯН, Н. МХИТАРЯН

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HONOURED SCIENTISTS

6

**ARAM KALANTARYAN
BIOBIBLIOGRAPHY**

INTRODUCTION, BIBLIOGRAPHY AND
ANNOTATIONS COMPOSED BY
H. MELKONYAN, N. HAKOBYAN, A. ZHAMKOCHYAN,
F. BABAYAN, D. MIRIGANYAN, N. MXHITARYAN

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН – 2016

PUBLISHING HOUSE "GITUTYUN" OF NAS RA
YEREVAN – 2016

1188236

016 : Ե 929 Քառարեցության և 997.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Աշխատին Ակադեմիա
ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ Աշխագրության Ինստիտուտ

ՎԱՍՏԱԿԱԾԱՏ ԳԻՏԱԿԱՆՆԵՐ

6


ԱՐԱՄ ԱՃՈՏԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԸ Հ. ՄԵԼքոնՅԱՆԻ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
Հ. ՄԵԼքոնՅԱՆԻ, Ն. ՀԱԿՈԲՅԱՆԻ, Ա. ԺԱՄԿՈՉՅԱՆԻ,
Ֆ. ԲԱԲԱՅԱՆԻ, Դ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻ, Ն. ՄԻՒԹԱՐՅԱՆԻ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016



ՀՏԴ 01:902
ԳՄԴ 91.9:6
Ա 830

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական հանձնախումբ՝
Պ. Ավետիսյան (նախագահ), **Ս. Հարությունյան**,
Գ. Գրիգորյան, **Գ. Կորախյանյան**

Պատասխանատու խմբագիր՝ **Հ. Մելքոնյան**


- Ա 830 Արամ Քալանթարյան: Կենսամատենագիտություն: (Վաստակաշատ գիտնականներ): Կազմողներ՝ Հ. Մելքոնյան, Ն. Հակոբյան, Ա. Ժամկոյյան, Ֆ. Բարյան, Դ. Միրիջանյան, Ն. Միսիթարյան: Երևան, «Գիտություն» հրատ., 2016.-96 էջ:

Գրքույկը նվիրված է անվանի հնագետ Արամ Քալանթարյանի հիշատակին և ներառում է նրա անցած ուղին ու գիտական աշխատությունների կարճառութ վերլուծությունը: Այն ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երախտավորների մատենագիտական շարքի վեցերորդ հատորն է: Նախատեսված է հնագետ-պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 01:902
ԳՄԴ 91.9:6

ISBN 987-5-8080-1234-9

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2016



ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Անվանի հնագետ-պատմաբան,ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Քալանթարյանը ծնվել է 1937 թ. Մեծ եղեռնից փրկված և Արխագիայում հանգրվանած ակնեցի մանկավարժի ընտանիքում:

1954-1959 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1961-1964 թթ. հնագիտություն մասնագիտությամբ ուսանել է գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ աշակերտելով հայագիտության ամենաառաջատար գիտնականներից Մելիքն՝ պրոֆեսոր Կարո Ղաֆարյանին: Նրա դեկանարությամբ Ա. Քալանթարյանն ստացել է հայագետ-պատմաբանի հիմնավոր կրթություն՝ մասնագիտանալով Հայաստանի միջնադարյան հնագիտության, պատմության ու վիմագրագիտության մեջ: Այդ շրջանում նա ակտիվորեն մասնակցել է իր ուսուցչի դեկանավարած՝ միջնադարյան Հայաստանի

հոչակավոր մայրաքաղաք Դվինի հնագիտական պեղումներին, որոնք և կանխորշել են ապագա գիտնականի հետազօ՞ ասպիրանտից մինչև պեղումների հմուտ ու բազմափորձ դեկավարի ուղին: Դեռևս ասպիրանտական տարիներից Ա.Քալանթարյանն ակտիվորեն մասնակցել է նաև հնագիտական մի շարք նշանավոր հուշարձանների՝ Գառնիի, Արմավիրի, Արտաշատի պեղումներին: Իր մասնագիտության անմասցորդ նվիրված վաստակաշատ գիտնականն անձամբ դեկավարել է Դվինի, Օշականի, Սպիտակի, Պոտղիի, Գողարանի, Կոթիի արշավախմբերը:

1964թ. Քալանթարյանը որպես կրտսեր գիտաշխատող ընդունվել է ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հին և միջնադարյան հնագիտության բաժին: 1966թ. հաջողորդայմբ պաշտպանել է «Դվինի նյութական մշակույթը 5-8-րդ դդ.» թեմանագուայն թեզը:

1969-1971թթ. եղել է Հայպետշինի հուշարձանների վերականգնման գիտարտադրական արվեստանոցի գիտահետազրութական բաժնի վարիչը և գործուն մասնակցություն ունեցել հուշարձանների վերականգնման ու գիտական փաստաթղթերի կազմման աշխատանքներին: Այս շրջանում նա դեկավարել է Տաթևի հուշարձանախմբի պեղումները, մասնակցել Դսեղի ազգագրական թանգարանի ստեղծման աշխատանքներին: 1986-1993թթ. Արամ Քալանթարյանը դեկավարել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի նորակառույցների հնագիտության բաժինը, որի խնդիրն էր հետևել, կորսադից փրկել և ուսումնասիրել այն հուշարձանները, որոնք հայտնվում էին շինարարական հրապարակներում: Այս տարիներին էր, որ ի հայտ եկան Քալանթարյան գիտնականի կազմակերպչական մեծ ունակությունները: Նրա գործուն դեկավարությամբ բաժինը կարճ ժամանակում վեր է ածվում ընդարձակ ենթակառուցվածքի և ինստիտուտում դառնում հզոր միավոր: Նրա մասնակցությամբ հանրապետության նորակառույցներում պայմանագրային եղանակով աշխատել է շուրջ 40 արշավախումբ, որի պեղումներով փրկվել են այնպիսի կարևորագույն հուշարձաններ, ինչպիսիք են Հին Շիրակավանը, Քուչակը, Հողմիկը, Քարաշամբը, Լճաշենը, Բերդը, Վերին Նավերը, Գետաշենը, Երնջատափիր, Արորին և այլն: Ա.Քալանթարյանի կենսագրության մեջ առանձնանում են Հնագիտության և ազգագրության ինստիտու-

տում նրա քեղոն ու տքնածան տնօրինության տարիները (1993-2006 թթ.): 1990-ականներն անկախության, տնտեսական դժվարությունների այն տարիներն էին, երբ քայլայվում և փակվում էին գիտական կենտրոնները: Այս շրջանում Հազարամյան և ազգագրության ինստիտուտում ոչ միայն կադրերի հոսք տեղի չունեցավ, այլև կազմակերպչական հմուտ դեկավարման շնորհիվ զգալի չափով աշխուժացան գիտահետազոտական ու գիտագործական աշխատանքները:

Ա.Քալանթարյանը միաժամանակ ինստիտուտին կից գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն էր: Նրա դեկավարությամբ խորհուրդը ծավալել է ակտիվ գիտագործական աշխատանք, կազմակերպվել են տասնյակ առենախոսությունների պաշտպանություններ: Ա.Քալանթարյանը նաև մի քանի այլ ինստիտուտների գիտական խորհուրդների անդամ էր, դեկավարում էր հայագիտական թեմատիկ ծրագրերի փորձագիտական հանձնաժողովի աշխատանքները: Կյանքի վերջին տարիներին ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի փոխնախագահն էր:

Մեծ է Քալանթարյանի վաստակը հայ միջնադարյան նյութական մշակույթի հետազոտման բնագավառում: Նրա մենագրությունները հատկապես նվիրված են Դվինի հնագիտական ուսումնասիրությանը, որտեղ՝ միջնադարյան քաղաքն ուսումնասիրվում է իր բոլոր գործառույթներով՝ արհեստ, կենցաղ, առևտուր, մշակույթ և այլն: Մեկը մյուսի հետևից տպագրված մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված են քաղաքի ճարտարապետական հուշարձաններին, արհեստագործական կյանքի բոլոր դրսնորումներին՝ մետաղամշակությանը, խեցեգործությանը, ապակեգործությանը, ուսուայնանկությանը և այլն: Ա.Քալանթարյանը ցույց տվեց, որ՝ Դվինին վիճակիւած էր քացանիկ դեր խաղալ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, հոգևոր ու մշակութային կյանքում:

Գիտնականը քազմից զեկուցումներով հանդես է եկել հնագետների և պատմաբանների հանրապետական, նախակին միութենական ու միջազգային տարբեր գիտաժողովներում: Նրա աշխատանքները ճանաչում են գտնել հայրենական և արտասահմանյան մասնագետների շրջանում:

1970թ. «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարով լույս է տեսնում «Դվինի նյութական մշակույթը 7-8 դդ.» մենագրությունը, որտեղ հեղինակը համապատասխան պարզաբանում է ավատադիրական քաղաքի ամբողջական պատկերը՝ այն չհամարելով ավարտուն և վերջնական։ Նա գրում է, որ ուսումնասիրությունը նախնական է և հետագայում՝ նորանոր գտածոներով հարատանալուց հետո, լրացումների ու պարզաբանումների կարիք կունենա, անշուշտ, դրանցից բխող եղանակությունը։

1976թ. լույս է տեսնում Ա.Քալանթարյանի հեղինակած «Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970 թթ.» հաշվետվություն-ուսումնասիրությունը։ 1964-1970 թթ. անընդմեջ պեղումներ կատարելով քաղաքի այս հատվածում՝ նա մենագրության մեջ հանդագումարի է բերում հնագիտական արդյունքը՝ եզրակացություններն ամփոփելով համապատասխան բաժիններում։ Հանգամանորեն ներկայացված են բացված մեծ կառույցի մանրամասները, շինարարական առանձնահատկություններն ու նյութերի թվագրությունը՝ VIII-IX դդ.։ Արիեստների՝ մետադամշակության, խեցեգործության, ապակեզրության, հալիճապակեզրության բաժիններում հետազոտված առարկաները տեսակավորված են ըստ գործածական կերպի։

1982թ. նա ուսերեն հրատարակում է «Դվինի վաղ միջնադարյան կնքադրոշմները» մենագրությունը, որն ընդգրկում է Սասանյան տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի (V-VII դդ.) նյութական մշակույթի կարևոր բնագավառներից մեկը՝ կնիքագործությունը։ Դրանցով վավերացվում էին իրավական, առևտրական և պետական այլ կարգի փաստաթղթեր։ Կիրառական արվեստի այս ճյուղը ներկայացված է Դվինում հայտնաբերված 41 կնքադրոշմներով։ Հեղինակը Դվինի հավաքածողի բարձրարձեք լինելը հիմնավորում է շերտագրական որոշակի հորիզոններից (V-VII դդ.) հայտնաբերելու հանգամանքով, քանի որ աշխարհի բազմաթիվ թանգարաններում գտնվող հազարավոր նմուշների զգալի մասը պատահական գտածոներ են։

1991թ. Ա.Քալանթարյանը «Միջնադարյան Դվին քաղաքը» թեմայով ատենախոսության համար, որը կարևոր ներդրում էր միջնադար-

յան Հայաստանի քաղաքների հնագիտական հետազոտությունների պատմության մեջ, ստանում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1970-80-ական թթ. Ս. Եսայանի հետ նա պեղումներ է իրականացնում Օշական գյուղի Մերձակա Դիդի կոնդ հնավայրում: Այս նշանավոր հուշարձանի՝ 1971-1983 թթ. պեղումների արդյունքներն ամփոփվեցին «Օշական I» (ոռուերեն, Ս. Եսայանի համահետինակությամբ) արժեքավոր աշխատության մեջ: Գրքում ներկայացված է մ.թ.ա. VII-VI դդ. բնորոշ հատակագծային, ծավալատարածական լուծումներով ամրոցը, որի վերին շերտում պահպանված միջնադարյան շինությունները (IV-VIII դդ.) հիմնադրել են Ամատունի նախարարները:

1988 թ. Հ. Զանհովայանի համահետինակությամբ Ա. Քալանթարյանը իրատարակում է «Հայաստանի առևտրական կավերը VI-XII դդ.» ոռուերեն աշխատությունը: Միջնադարյան Հայաստանն ուներ ապակու տեղական հարուստ արտադրություն: Գտնվերով արևելքարևմուտք առևտրական բանուկ ճանապարհներին՝ Հայաստանն այդ ուղիներով կապվում էր ժամանակի առևտրաարհետագործական և մշակութային խոշոր կենտրոնների հետ: Այդ հանգանանքը նկատի առնելով՝ հետինակները ձգտել են վեր հանել միջնադարյան Հայաստանի տեղու ու դերն այդ համատեքստում:

Նշանավոր գիտնականի վաստակը մեծապես գնահատվել է միջազգային գիտական շրջանակներում, ինչին նպաստեց նաև 1996 թ. Փարիզում Դվինի պատմությանն ու հնագիտությանը նվիրված «Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունը» մատենաշարով իրատարակված «Dvin Histoire et archaeologie de la ville medievale» ֆրանսերեն ստվարածավալ մենագրությունը: Աշխատության աղբյուրագիտական հետքը հնագիտական պեղումներն ու մատենագրական վավերագրերն են, որոնք լուսաբանում են քաղաքի պատմության մի շարք անհայտ և քիչ հետազոտված խնդիրներ: Դվինի հազարամյա պատմությունը (IV-XIII դդ.) պարբերացվել է հայ և օտար աղբյուրների հաղորդումների հիման վրա:

Ներածությունից և ութ գլուխներից քաղկացած աշխատությունը գիտական աշխարհին է ներկայացնում Դվինի ճարտարապետությունը, շերտագրությունը, դրամաշրջանառությունը, կսիրագործությունը

և քաղաքային գրադարձությունը՝ մետաղամշակությունը, խեցեգործությունը և ապակեգործությունը:

2005 թ. Հ. Մելքոնյանի համահեղինակությամբ Ա.Քալանթարյանը հրատարակել է «Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ.» ուսումնասիրությունը, որը գիտական արժեքին զուգահեռ կարևոր ձեռնարկ է բուհերի ուսանողության համար: Այն ընդգրկում է նշված թվականներին Հայաստանի տարածքում տարբեր դարաշրջանների հուշարձանների հնագիտական պեղումները, մեծ թվով նորահայտ հնավայրեր, ինչպես նաև հազեցած է ժամանակագրական սանդղակներով ու գրականության ստվարածավալ ցանկով:

Ա.Քալանթարյանի բեղուն գործունեության անքակտելի մասն են կազմում ավելի քան երկու տասնյակ գիտական ժողովածուների, անվանի հայագետների (Քաջքերունի, Աշխ. Քալանթար, Կ. Ղաֆարյարյան) աշխատությունների կազմում ու խմբագրումը: Ա.Քալանթարյանը երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ-ում, դեկանվարել ասպիրանտների և հայցորդների գիտական թեմաներ՝ մեծապես նպաստելով կադրերի պատրաստման գործին:

Անգնահատելի է Ա.Քալանթարյանի դերը ինստիտուտի վերջին տարիների այնպիսի ուշագրավ հրատարակությունների գործում, ինչպիսիք են՝ «Գինին հայոց ավանդական մշակույթում» (2005 թ.) և «Հին Հայաստանի ոսկին» (2007 թ.): Ա.Քալանթարյանն իր կազմակերպչական հմտությամբ նպաստել է ինստիտուտի գիտական աշխատանքների վերընթացին: Համեստ, շիտակ բնավորության, ընկերներին օգնելու պատրաստակամության և գիտական վաստակի շնորհիլ նա ինստիտուտում մեծ հարգանք ու հեղինակություն էր վայելում: Վերջին տարիներին Ա.Քալանթարյանը ինստիտուտի տնօրենի խորհրդականն էր և գործուն մասնակցություն էր ունենում թե՛ ինստիտուտի գիտակազմակերպչական և թե՛ գիտահետազոտական աշխատանքներին: Ա.Քալանթարյանը մահացել է 2010 թ. մարտի 26-ին:

ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Ծնվել է 1937 թ. օգոստոսի 25-ին Սովորում քաղաքում:

1954–1959 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում:

1960–1961 թթ. իրքն ավագ տնտեսագետ աշխատել է Սովորում պետական վիճակագրական վարչությունում:

1961–1964 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1966 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1964–1969 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իրքն կրտսեր գիտաշխատող:

1969–1971 թթ. աշխատել է ՀՍՍՀ պետշինի հատուկ գիտավերականգնողական արվեստանոցում՝ իրքն գիտահետազոտական բաժնի վարիչ:

1971 թ. վերադարձել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ և աշխատել իրքն կրտսեր գիտաշխատող:

1972 թ. աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իրքն ավագ գիտաշխատող:

1971–1983, 2002 թթ. ղեկավարել է Օշականի հնագիտական արշավայումքը:

1977–2009 թթ. ղեկավարել է Դվինի հնագիտական արշավայումքը:

1976–1979 թթ. ղեկավարել է Սպիտակի հնագիտական արշավայումքը:

- 1986–1993** թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իբրև նորակառույցների հնագիտության բաժնի վարիչ:
- 1991**թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:
- 1993–2006** թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ իբրև տնօրեն:
- 1996** թվականից դասավանդել է ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում իբրև բաժնի պրոֆեսոր: Տարիներ ի վեր հանդիսացել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի պետական ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ:
- 2004**թ. դեկանվարել է Պտտղնիի հնագիտական արշավախոսմբը:
- 2006**թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:
- 2007–2008** թթ. դեկանվարել է Գոգարանի հնագիտական արշավախոսմբը:
- 2008–2009** թթ. դեկանվարել է Կորդիի հնագիտական արշավախոսմբը:
- 2008–2010** թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի նախագահի տեղակալ:
- Մահացել է **2010** թ. մարտի 26-ին Երևանում:

АРАМ КАЛАНТАРЯН

Известный историк, археолог, член-корреспондент НАН РА Арам Ашотович Калантарян родился в 1937 году в семье спасшегося от геноцида и нашедшего прибежище в Абхазии учителя из Акна. Арам Калантарян прошел плодотворный путь беззаветно преданного науке заслуженного ученого. В 1954 году он поступил на исторический факультет Ереванского государственного университета, который закончил в 1959 году. В 1961-1964 гг. прошел аспирантуру при институте археологии и этнографии Академии наук по специальности археология у одного из ведущих арменоведов – профессора Каро Григорьевича Кафадаряна. Под его руководством Арам Калантарян прошел прекрасную школу историка-арменоведа широкого профиля. В указанный период он под руководством своего учителя принимал активное участие в раскопках прославленной столицы средневековой Армении-города Двина. Все это и предрешило будущее ученого, прошедшего путь от аспиранта до многоопытного ученого и искусного археолога. Начиная с аспирантских лет А. Калантарян активно участвовал в раскопках ряда известных памятников – Гарни, Армавира, Арташата. Он руководил археологическими экспедициями Двина, Ошакана, Спитака, Птгни, Гогарана, Коти.

В 1984 г. А. Калантарян поступает на работу в отдел древней и средневековой археологии института археологии и этнографии в качестве младшего научного сотрудника. В 1966 г. он успешно защищает кандидатскую диссертацию по теме «Материальная культура Двина V-VIII веков».

В 1969-1971 гг. А. Калантарян занимает должность заведующего научно-исследовательского отдела Научно-производственной реставра-

ционной мастерской при Госстрое Армении и принимает деятельное участие в восстановлении исторических памятников и создании научной документации. В этот период он руководил раскопками Татевского монастырского комплекса, участвовал в работах по созданию Дсехского этнографического музея.

В 1986-1993 гг. Арам Калантарян руководит отделом новостроек института археологии и этнографии, в задачу которого входили контроль, изучение и спасение исторических памятников, оказавшихся на территории строительных площадок. Именно в эти годы проявились большие организаторские способности А.Калантаряна. Под его активным руководством в короткое время отдел из нескольких сотрудников перерастает в обширную структуру и становится мощной единицей в институтском организме. С участием указанного отдела на новостройках республики на договорной основе было организовано около сорока экспедиций, которые, в результате раскопок, спасли для науки такие важные памятники, как Ширакаван, Кучак, Охмик, Карапшамб, Лчашен, Лори берд, Верин Навер, Геташен, Ернджатап, Акори и др.

В научно-практической биографии А.Калантаряна особо выделяются годы его усердной и плодотворной работы на посту директора института археологии и этнографии (1993-2006). В 90-ые годы, в период кризиса и экономических трудностей, на грани уничтожения оказались многие научно-исследовательские центры. В указанные годы в институте не только не было утечки кадров, но и, благодаря особому организаторскому таланту директора, значительно оживились научные и практические работы. Калантарян одновременно являлся председателем действующего при институте специализированного совета по присуждению ученых степеней. Под его руководством совет развернул активную научно-практическую деятельность, организовывая защиты десятков диссертаций. А.Калантарян являлся членом научных советов нескольких институтов, руководил работами арменоведческих тематических программ, экспертной комиссии. В последние годы своей жизни А.Калантарян являлся заместителем председателя научно-исследовательского совета НАН РА.

Велика заслуга Калантаряна в области исследования армянской средневековой материальной культуры. Он является автором нескольких монографий, в частности, посвященных археологическому изучению Двина. В этих работах объектом специального изучения становится средневековый город со своими ремеслами, бытом, торговыми связями, культурой и др. А. Калантарян показывает, что Двин сыграл особую роль в политической, экономической, духовной и культурной жизни армянского народа.

В 1970 г. в серии «Археологические памятники Армении» вышла в свет его монография «Материальная культура Двина VII-VIII веков». В этой монографии перед автором стояла задача создания цельной картины феодального города на основе веских аргументаций и выводов.

В 1976 г. публикуется отчет-исследование А. Калантаряна «Двин I. Раскопки центрального квартала 1964-1970 годов». В ней А. Калантарян подытожил весь археологический материал раскопок, непрерывно проводимых в течение 1964-1970 гг., на указанном участке городища. В частности, описаны и исследованы части и детали «большого строения», а также дана датировка материала VIII-IX веками. В разделах, посвященных металлообработке, керамическому, стеклодельному и фаянсовому производству, предметы исследованы и классифицированы по их функциональному значению.

В 1982 г. он на русском языке публикует монографию «Раннесредневековые буллы Двина». Книга посвящена печатям – одной из важнейших отраслей материальной культуры Армении периода Сасанидского владычества (V-VII вв.). В Двине была найдена крупная коллекция булл в составе 41 экземпляра. Особая ценность двинской коллекции состоит в том, что она обнаружена в конкретной стратиграфической ситуации V-VII веков, в то время, как большая часть хранящихся в различных музеях мира многотысячных булл найдена случайно.

В 1990 г. А. Калантарян защищает докторскую диссертацию на тему «Средневековый город Двин», которая стала серьезным вкладом в изучение архитектуры средневековых городов Армении.

В 1970-80-ых годах А. Калантарян вместе с С. Есаяном проводил раскопки на территории памятника Дида-конд по соседству с селением

Ошакан. Крепость на основе анализа объемно-пространственных решений датируется VII-VI вв. до н.э. В результате раскопок открыты также средневековые постройки, связанные с деятельностью князей Аматуни.

Результаты раскопок этого замечательного памятника были подытожены в ценной работе «Ошакан I» (на русском языке в соавторстве с С. Есаяном). В 1988 г. А. Калантарян вместе с Р. Джанполадян на русском языке издает книгу «Торговые связи Армении в VI-XIII вв.». В средневековой Армении стеклоделие имело богатые традиции. Располагаясь на оживленных, связывающих Восток с Западом, торговых путях, Армения имела контакты с крупными торговыми-ремесленными и культурными центрами. Авторы книги стремились показать роль и место Армении в указанном контексте.

Заслуги выдающегося ученого по достоинству были оценены в международных научных кругах, чему особенно способствовало издание в 1996 г. в Париже на французском языке солидной монографии «Dvin®», посвященной истории и археологии Двина. Источниковедческой базой работы являются данные археологических раскопок и письменные источники, позволяющие осветить многие неисследованные проблемы, связанные с политической историей, архитектурой, градостроительством, денежным обращением, торговлей, ремеслами города. В книге дана также основная периодизация тысячелетней истории Двина.

В 2005 г. в соавторстве с У. Мелконяном А. Калантарян издал книгу «Археологические работы в Армении в 1990-2003 годах». Книга используется как практическое пособие для студентов. Она охватывает раскопки, проведенные в указанные годы на территории памятников различных эпох, а также новооткрытые памятники. Книга снабжена хронологической шкалой и большим списком литературы.

Неотъемлемой частью плодотворной деятельности А. Калантаряна стало редактирование и составление более двух десятков научных сборников и трудов выдающихся арменоведов (Качберуни, Аш. Калантара, К. Кафадаряна).

Ученый выступал с докладами на многих республиканских, бывших союзных и международных научных конференциях. Его работы нашли признание в кругах отечественных и зарубежных специалистов.

А.Калантарян долгие годы вел курсы по археологии и арменоведению в ЕГУ, руководил научными темами аспирантов и соискателей, способствуя тем самым подготовке научных кадров. Трудно переоценить роль А.Калантаряна в организации и составлении таких институтских научных изданий, как «Вино в традиционной культуре армян» (2005 г.) и «Золото древней Армении» (2007 г.) в качестве одного из авторов и редактора.

А.Калантарян ежедневно привносил свой научно-организаторский талант в рост научного потенциала всего коллектива института. Благодаря своему скромному и открытому характеру, готовности помочь своим коллегам и товарищам по работе, крупным заслугам в области науки, А.Калантарян пользовался большим уважением и авторитетом среди членов всего коллектива. В последние годы он был также консультантом директора института и проявлял активное участие в научной и организационной жизни института. А.Калантарян ушел из жизни 26-го марта 2010 года.

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АРАМА АШТОВИЧА КАЛАНТАРЯНА

- 25-ое августа 1937 г. – родился в городе Сухуми.
- 1954–1959 гг. – годы учебы на историческом факультете ЕГУ.
- 1960–1961 гг. – работал старшим экономистом в Сухумском государственном статистическом управлении.
- 1961–1964 гг. – учился в аспирантуре при институте археологии и этнографии АН Арм. ССР.
- 1966 г. – получил степень кандидата исторических наук.
- 1964–1966 гг. – работал младшим научным сотрудником института археологии и этнографии.
- 1969–1971 гг. – работал зав. отдела в реставрационной мастерской при Госстрое Арм. ССР.
- 1971 г. – вернулся на работу в институт археологии и этнографии.
- 1971–1983, 2002 гг. – руководил ошаканской археологической экспедицией.
- 1977–2009 гг. – руководил двинской археологической экспедицией.
- 1976–1979 гг. – руководил спитакской археологической экспедицией.
- 1983–1993 гг. – занимал должность зав. отдела новостроек института археологии и этнографии.
- 1991 г. – получил ученую степень доктора исторических наук.
- 1993–2006 гг. – занимал должность директора института археологии и этнографии.
- 1996–2010 гг. – преподавал на кафедре археологии и этнографии ЕрГУ.
- 2004 г. – руководил птгнийской археологической экспедицией.
- 2006 г. – избрался член-корреспондентом НАН РА.
- 2007–2008 гг. – руководил гогаранской археологической экспедицией.
- 2008–2009 гг. – руководил котийской археологической экспедицией.
- 2008–2010 гг. – работал заместителем председателя научно-издательского совета НАН РА.
- 26-го марта 2010 г. скончался в Ереване.

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

ХРОНОЛОГИЧЕСКИЙ СПИСОК ТРУДОВ

1964

- 1.** Նորահայտ պաշտամունքային կոթողներ Գեղամա
լեռներում, «Տեղեկագիր հաս. գիտ.», Եր., 1964, №8, էջ 85-88
(հեղինակակից՝ Լ. Բարսեղյան, Ժ. Խաչատրյան):

Գեղամա լեռներում 1909թ. ականավոր հետազոտողներ Ն. Մատի և
Յա. Սմիռնովի կողմից «Վիշապ» անվանված ձկնակերպ կոթողների
հայտնաբերումն այդօրինակ հուշարձանների վերաբերյալ բազմաթիվ
տեսակետների ու տեսությունների հիմք դարձավ: Հայագիտության
համար առանձնապես հետաքրքիր է այն, որ այս պաշտամունքային կո-
թողները Հայկական լեռնաշխարհից դուրս չեն հանդիպում: 1963թ. Գե-
ղամա լեռների բարձրադիր շրջաններում նոր կոթողների հայտնաբեր-
ման և ուսումնասիրման նպատակով արշավախումբ ստեղծվեց: Հայտ-
նաբերվեցին բազալտից և անդեղիտից հինգ նոր կոթողներ, որոնց
վրա քանդակված են եզան և ձկան գլուխների մանրամասն պատկեր-
ներ: «Վիշապների» ուսումնասիրությունը և թվագրության հստակե-
ցումը մինչ օրս հայագիտության կարևոր խնդիրներից են:

- 2.** Զվարքնոցի միջնադարյան խեցեղենը, ՊԲՀ, Եր., 1964,
№4, էջ 225-230 (հեղինակակից՝ Գ. Կարախանյան):

Հոդվածում ներկայացված է Զվարքնոցի պեղումների ժամանակ
հայտնաբերված և հուշարձանի թանգարանում պահվող խեցեղենը: Այն
բաժանված է հետևյալ խմբերի՝ շինարարական, հասարակ և ջնա-
րակապատ: Զվարքնոցի թանգարանում հատկապես շատ են հարք և
կիսակլոր կղմինդրի օրինակները, որոնք հիմնականում նման են Հա-
յաստանի տարբեր հնավայրերից հայտնաբերվածներին: Հատկապես
ուշագրավ է մարդու դիմապատկերով ճակտոններից մեկը: Հայտ-

նարերված կարասները, կճումները, սափորները, ճրագները, սնդկամաններն ու խուփերը լրացնում են Դվինի և Ասիի նմանատիպ անոթների ցանկը:

Զնարակապատ խեցեղենի օրինակները թվագրվում են IX-XIII դդ.՝ իրենց գրության հետ ուղարկված Դվինում, Ասիում, Գառնիում: Նյութի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Զվարթնոցը եղել է խեցեղենի արտադրության առանձին կենտրոն:

1965

3. Պաշտամոնքային անոթ Դվին քաղաքի պեղումներից, «Տեղեկագիր հաս. գիտ.», Եր., 1965, №2, էջ 95-97:

Հոդվածը վերաբերում է 1961թ. Դվինի Միջնաբերդում պեղումների ժամանակ հայտնաբերված կավե փոքրիկ սրվակին, որը բերված է Զմյուռնիայից կամ նրան հարող շրջաններից: Կաղապարով պատրաստված անոթի երկու կողերին պատկերված է Անդրեաս առաքյալը, ինչը վկայում է նաև անոթի վրայի արձանագրությունը: Նմանատիպ անոթները վաղ միջնադարում շատ տարածված էին Բյուզանդական կայսրության սահմաններում և նախատեսված էին սրբազն ջուր կամ ձեթ տեղափոխելու համար: Հավանաբար հիշյալ անոթն այդպես է հասել Դվին: Այն հայտնաբերվել է V-VI դդ. թվագրվող շերտից:

4. Պաշտպանական սպառագինությունը վաղմիջնադարյան Հայաստանում, «Տեղեկագիր հաս. գիտ.», Եր., 1965, №10, էջ 68-74:

Հենվելով հնագիտական գտածոների, առաջին հերթին՝ Դվինից պեղված նյութերի և մատենագրական վկայությունների վրա, հեղինակը տալիս է հայկական միջնադարյան որոշ գինատեսակների, պաշտպանական զրահների տիպարանությունը, ներկայացնում դրանց թվագրությունը՝ կապելով տարածաշրջանի համանան նյութերի հետ: Դվինից հայտնի գինատեսակների ժամանակագրական սահմանները որոշվում են ուղեկցող նյութի օգնությամբ: Հեղինակի կարծիքով միջնադարում զենքի արտադրության հիմնական ավանդույթները ծագում են ավելի վաղ ժամանակներից, մասնավորապես ուրարտական շրջանից:

5. Զենքերը 5-8-րդ դդ., ՊԲՀ, Եր., 1965, №5, էջ 241-248:

Պեղումներով հայտնաբերված զենքի և հայկական միջնադարյան մատենագրական աղբյուրների քննությամբ ճշտվում է վաղմիջնադարյան գինատեսակների թվագրությունը: Հողվածում ներկայացված են հարձակողական զենքերը: Առաջարկվում է նետապարների նոր դասակարգում՝ եռանիստ, ճանկավոր, ոռմրածն, ձվածն, քառանիստ: Նիշակները ևս բաժանված են մի քանի տեսակների: Փորձ է արվել նկարագրելու պեղումներով դեռևս չհայտնաբերված, բայց մատենագրությունից հայտնի զենքի տեսակները, դրանց օգտագործման ձևերը:

1967

6. Раскопки центрального квартала гор. Двина (1964-1965 гг.), ИФЖ, Ер., 1967, №1, стр. 214-221:

1964թ. պեղումները Կենտրոնական թաղամասում իրականացվել են Կաթողիկե եկեղեցոց արևմուտք: Երկու տարվա ընթացքում բացվել են մոնումենտալ կառույցի հյուսիսային, հարավային և արևմտյան պատերը: Ծինությունն ունի 31մ երկարություն, պատերի հաստությունը՝ 1,35 մ է, իսկ պահպանված բարձրությունը՝ 60-80 սմ: Կառույցը կազմված է սյունասրահից (7×7 մ) և տնտեսական նշանակության սենյակներից: Այս սենյակներում պեղվել են տնտեսական հորեր, որոնցում հայտնաբերված հարուստ և բազմազան հնագիտական նյութերը թվագրվում են VIII-IX դդ.: Հիշյալ կառույցը հավանաբար կործանվել է IX դ. երկրաշարժից:

7. Оրոտնավանքի խեցեղենը, ԼՀԳ, Եր., 1967, №4, էջ 67-76:

Օրոտնավանքի Սրբ Կարապետ եկեղեցո՛ երկրաշարժից փլված ծածկի շաղախի մեջ միջնադարում դրվել են տարատեսակ խեցանոթներ՝ թաղի վրա ընկնող ծանրությունը թերևացնելու նպատակով: Հողվածը նվիրված է հիշյալ խեցեղենի հետազոտմանը: Օրոտնավանքի խեցեղենը բաժանվում է երկու մեծ խմբի՝ շինարարական և կենցաղային: Վերջինս ստորաբաժանվում է հետևյալ տիպերի՝ կարասներ, կճումներ, սափորներ, կծեր, ձձումներ, կովկիթներ, տաշտեր: Քանի որ պատմագրությունից հայտնի է եկեղեցու կառուցման ստույգ թվականը (1007 թ.), ապա Օրոտնավանքի խեցեղենը կարող է համեմատական կարևոր նյութ դառնալ այլ հուշարձաններից հայտնի նմանատիպ անոթների թվագրությունը հստակեցնելու առումով:

1968

8. Ампула с изображением св. Андрея из Двина, СА, М., 1968, №1, стр. 274-276:

Դվին մայրաքաղաքի պեղումներով հայտնաբերված իրերի թվում առանձին, յուրահատուկ խումբ են կազմում պաշտամոնքային նշանակության գտածոները: Հետարքի են հատկապես ներմուծված իրերը, որոնք խոսում են քրիստոնյա աշխարհի հետ Դվինի սերտ կապերի մասին: Նմանօրինակ գտածոներից է սուրբ Զրի տեղափոխման համար նախատեսված փոքր անոթը՝ Սր Անդրե առաքյալի պատկերով և հունարեն արձանագրությամբ: Անոթը հայտնաբերվել է 1961թ. Միջնաբերդի գագաթի պեղումների ժամանակ և, ամենայն հավանականությամբ, փոքրաչափ ծագում ունի: Սրբերին նվիրված նման անոթները լայն տարածում ունեն Բյուզանդական կայսրության ողջ տարածքում և թվագրվում են V-VI դդ.:

1969

**9. Հնագիտական հազվագյուտ հայտնագործություն
Սևանի ավագանից, ԼՀԳ, Եր., 1969, №4, էջ 75-77
(հեղինակակից՝ Ժ. Խաչատրյան):**

1968թ. Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում հետախուզական շրջագայություն կատարելիս հեղինակները մասնավոր անձից ձեռք են բերել հողային աշխատանքների ժամանակ պատահականորեն հայտնաբերված գունազարդ մի կճուճ: Անոթի վրա պատկերված է կենդանիների հետապնդման տեսարան: Ձևով և կատարման տեխնիկայով այն նման է Հայաստանի տարբեր շրջաններից հայտնի մ.թ.ա. XVIII-XVI դդ. թվագրվող անոթներին: Հրատարակման ժամանակ անոքն իր զարդարմոտիվներով եզակի էր, ինչի համար էլ դարձել է առանձին քննարկման առարկա:

10. Դվին քաղաքի վաղմիջնադարյան շերտագրության հարցի շուրջ, ԼՀԳ, Եր., 1969, №5, էջ 57-67:

Դվին հնավայրում երկար տարիներ իրականացված պեղումները հնարավոր են դարձնում որոշակի դիտողություններ կատարել միջնադարյան քաղաքի շերտագրության վերաբերյալ՝ ենեղով գրավոր աղ-

բյուրներից, շինարարական տեխնիկայի առանձնահատկություններից ու հնագիտական նյութի ընձեռած հնարավորություններից: Հստ այդմ, Դվին քաղաքի վաղմիջնադարյան շերտագրությունն ունի երեք շինարարական փուլ: Առաջին շրջան՝ IV-V դդ., Կաթողիկե եկեղեցու շինարարություն, երկրորդ՝ V-VII դդ., Կաթողիկե եկեղեցու վերանորոգում, և երրորդ՝ VIII-IX դդ., բնութագրվում է արարական տիրապետության շրջանին բնորոշ հում մեծ աղյուսներով կառուցված շինությունների մսացորդներով:

11. Սովետական Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների քարտեզ-ուղեցույց (տեքստը նաև ուսու., անգլ., ֆր., գերմ.), Եր., 1983, պոլիգրաֆկոմքինատ:

Քարտեզ-ուղեցույցում ներկայացված է Խորհրդային Հայաստանի քարտեզը, որտեղ նշված են առավել նշանավոր պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձանները (պատկերագրադրումներով): Հուշարձանները ներկայացված են ըստ այդ ժամանակի Հայաստանի տարածքային բաժանումների՝ շրջանների: Քարտեզ-ուղեցույցն ունի նաև տեքստ, որտեղ հուշարձանները ներկայացված են ըստ ժամանակագրության՝ մ.թ.ա. VI-IV հազարամյակից մինչև միջնադարյան հայկական ճարտարապետության նշանավոր կոթողները: Քարտեզը վերահրատարակվել է մի քանի անգամ տարբեր լեզուներով:

1970

**12. Դվինի նյութական մշակույթը IV-VIII դդ., ՀՀՀ 5,
Միջնադարյան հուշարձաններ, պրակ I, Եր., 1970,
ՀՍՍՀ ԳԱ հրատ., 64 էջ:**

Հեղինակն այս աշխատությամբ փորձել է հնագիտական, մատնագիտական նյութի հենքի վրա ներկայացնել Դվինի վաղ միջնադարի նյութական մշակույթը: Դրանում առաջին անգամ քննվում են վաղ-միջնադարյան ավատատիրական քաղաքի ձևավորման ու զարգացման խնդիրները:

Ուսումնահիմքության ատադը հնագիտական է և քաղաքի բազմաճյուղ արհեստագործությունը ներկայացնում է բոլոր դրսնորումնե-

լույ: Քաղաքային կյանքի (տնտեսություն, արհեստագործություն) զարգացումը ենթադրում էր նաև առևտրամշակութային ընդգրկուն կապեր հարևանների հետ: Ա. Քալանթարյանը ներկայացրել է ավատատիրական քաղաքի կենսագործունեությունը՝ այն չհամարելով ավարտուն ու վերջնական: Նա արձանագրում է, որ ուսումնասիրությունը նախնական է և կարիք ունի հետագա լրացումների ու պարզաբանման համար, որոնք կիենավեն նորանոր գտածների և դրանցից բխող եզրահանգումների վրա: Աշխատանքն ունի համառոտ ակնարկ քաղաքի հիմնադրման, տեղադրության և պատմաքաղաքական կացության վերաբերյալ: Առանձնակի վերաբերմունքի են արժանացել բոլոր այն ուսումնասիրությունները, որոնք անդրադարձել են քաղաքի պատմությանը, ճարտարապետական հուշարձաններին և հնագիտական գտածոներին: Նյութական մշակույթ բաժնում տեսական վերլուծության են նսխարկվել հնագիտական գտածոները՝ մետաղ (աշխատանքի գործիքներ, զենք, զարդեր, սպասք և այլն), խեցեղեն և ապակի: Կատարված է նյութի կիրառական տեսակավորում, դասակարգում և թվագրում: Բննարկվել են նաև տեխնիկական բոլոր այն հնարքները, որ կիրառել են հայ արհեստավորները:

1971

13. Դվինի Կենտրոնական թաղամասի մատադե իրերը, ԼՀԳ, Եր., 1971, №6, էջ 62-67:

Հոդվածում ներկայացված են 1964-1968 թթ. Դվինի Կենտրոնական թաղամասի պեղումներով հայտնաբերված մետաղ իրերը: Դրանց ուսումնասիրությունը կարևոր է նախորդ շրջանի համեմատ VIII-IX դդ. Հայաստանի մատադամշակության զարգացման աստիճանը և առանձնահատկությունները հասկանալու առումով: Երկաթե և բրոնզե իրերի թվում ներկայացված են աշխատանքային գործիքներ (ունելի, բրիչ, գդալիկ, հալոց, դուր), զարդեր (մատանիներ, օղեր, կախիկներ), զենքեր (թրերի բեկորներ, տարբեր տեսակի նետապաքներ, սիրակներ), ճարմանդներ, զարդագամեր, սանձի մասեր և այլն:

**14. Դվինի IX դարի ջնարակած խեցեղենի հարցի շորջը,
ՊԲՀ, Եր., 1971, №1, էջ 263-271:**

Ըոդվածում քննարկվում են Դվինի ջնարակած խեցեղենի արտադրության հետ կապված որոշ հարցեր, որոնք հնարավոր է կատարել հուշարձանի հնագիտական հստակ շերտագրության շնորհիվ: Ջնարակած խեցեղենը բաժանված է երկու մեծ խմբի՝ տեղական և ներմուծված: Տեղական ջնարակած խեցեղենը իր հերթին բաժանված է բազմագույն, միազգույն և անզորով՝ նկարագրադիմակած տեսակների: Ներմուծված խեցեղենի մասին եզրակացություններն արկած են ինչպես նախորդ ուսումնասիրությունների համադրության, այնպես էլ հեղինակի անձնական դիտարկումների հիման վրա: Հեղինակը Դվինի ջնարակած խեցեղենը քննարկել է մերձավորարևելյան արիեսառագործական կենտրոնների արտադրանքի համատեքստում՝ եզրակացնելով, որ այն ոչ միայն չի զիջել, այլև ընթացել է վերջիններիս համարայլ:

**15. Եղվարդի Աստվածածին եկեղեցու հայճասալերը, ՊԲՀ,
Եր., 1971, №4, էջ 277-281 (հեղինակակից՝ Ա. Ժամկոյան):**

1969թ. Եղվարդի Սր Աստվածածին կրկնահարկ եկեղեցու վերականգնման ժամանակ հանվել են վեղարի տակ՝ թմրուկի վերին շարքի քարերի մեջ, տեղադրված հայճասալերը, որի շնորհիվ հնարավոր եղավ դրանց ուսումնասիրությունը: Հայճասալերը տարբեր են՝ քառակուսի, աստղաձև ու բազմանիստ: Դրանք արձանագիր են, ունեն բուսական, երկրաչափական ու կենդանական նոխ հարդարանք, թվագրվում են XIII-XIV դդ. և չեն վերաբերում եկեղեցու նախնական կառուցմանը: Հայճասալերը թմրուկի պատերի մեջ ագուցվել են XVIII դ. կատարված վերակառուցման ժամանակ:

1972

**16. Մարտոնու և Վարդենիսի շրջանների անտիկ և
միջնադարյան հուշարձանները, ԼՀԳ, Եր., 1972, №1,
էջ 58-67 (հեղինակակից՝ Ժ. Խաչատրյան):**

Մարտոնու և Վարդենիսի շրջանների հուշարձանների հայտնաբերման ու ուսումնասիրման նպատակով 1968թ. գիտարշավ կազմակերպվեց այդ շրջաններ: Հատկապես ուշագրավ էին Լիճը և Վերին

Գետաշեն գյուղերում արշավախմբի հայտնաբերած դամբարանադաշտերը՝ սալարկղային, կարասային, կավե դագաղներում կատարված թաղումներով, որոնք վկայում են անտիկ շրջանում Սևանի ավազանի խիտ բնակեցվածությունը և սերտ կապը հարակից շրջանների հետ, որոնք հարուստ են նաև միջնադարյան հուշարձաններով։ Դրանցից են Մաքենիսը և Կոթը, որոնք տարանցիկ կետեր են եղել Դվին-Պարտավ առևտրական ճանապարհին։ Խոշոր բնակավայրերի հետքեր են պահպանվել նաև Ծովինար, Ալուչալու, Վարդենիկ գյուղերի շրջակայքում։

1974

17. Տաթևի վանքի զանգերը և նրանց արձանագրությունները, Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Եր., 1974, էջ 115-119։

Տաթևի նշանավոր վանական համալիրում 1969թ. պեղումների ժամանակ գլխավոր Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան հատվածում հայտնաբերվել է երկու զանգ, որոնցից մեկն ունի ալիքաձև զարդագոտի։ Դրանք պղնձից են, կաղապարներում ձովված։ Զանգերն ունեն արձանագրություններ, որոնց համաձայն՝ Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օքրելյանի պատվերով պատրաստվել են 1302 և 1304թթ.։ Հայկական աղբյուրներում ու վիմագրերում զանգակատների կառուցման և զանգերի մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել։ Տաթևի զանգերի արձանագրություններին անդրադարձել են Ղ. Ալիշանը, Ս. Փափազյանը, Ե. Լալայանը, Ս. Բարխուդարյանը, սակայն կան որոշ անճշտություններ։ Հողվածում բերված են արձանագրությունների ամբողջական վերծանումները։

18. К вопросу о способах изготовления керамики в средневековой Армении. Арх. памятники феодальской Грузии, II, Тб., 1974, стр. 280-291.

1968թ. Դվինի հնավայրում հայտնաբերվել են խեցեղենի խոտան և թրծման ժամանակ օգտագործվող եռոտանիներ։ Տարածքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ խեցեղործական արտադրանքի արհեստանոցներն այստեղ են կենտրոնացված եղել։ Նյութը հնարա-

վորություն է տվել քննարկելու խեցեղենի պատրաստման ու ջնարակման եղանակները: Հայտնաբերված արհեստանոցները գտնվում են պատմական քաղաքի հարավարևմտյան թաղամասերում՝ պարիսպների մոտ, որով հեշտանում էին ջրամատակարարումը և ջրահեռացումը: Խեցեղենի պատրաստման համար օգտագործվել է խոշորահատիկ և մանրահատիկ կավ, որը թրծելուց հետո համապատասխանաբար ստանում էր կարմիր և դեղին գոյս: Նախնական ցածր ջերմաստիճանում թրծելուց հետո անորները պատվել են անզորով, որը մակերեսը դարձնում էր ավելի հարթ, իսկ ներկելու դեպքում՝ ավելի վառ երանգների: Նախշերը և արվում էին անգրապատումց հետո: Ջնարակը բարելուց հետո անորները դարձյալ թրծվում էին:

1975

19. Դվինի Կենտրոնական թաղամասի IX դարի հասարակ խեցեղենը, ՊԲՀ, Եր., 1975, №1, էջ 239-247:

Հողվածում քննության է առնված IX դ. խեցեղենը, որը կարծես անցումային փող է նախորդ և հաջորդ ժամանակաշրջանների միջև: Վաղ միջնադարում խեցեգործության մեջ նկատվող անկումը պայմանավորված էր արտադրական հին հարաբերությունների և քաղաքների անկումով: VIII դ. վերջից արհեստանոցային արտադրության մեջ նկատվում է որոշակի աշխուժացում, ինչն արտահայտվում է ջնարակած խեցեղենի լայն կիրառմամբ: Դվինի IX դ. խեցեղենը ճշգրիտ թվագրվում է հայտնաբերված դրամներով: Դրանք, ըստ ձևերի և կիրառության, բաժանվում են հետևյալ խմբերի՝ լայնարեան կժեր, սափորներ, կճումներ, քրեղաններ, ծորակավոր անորներ, խոփիեր, ձիթաճրագններ և այլն:

20. Դվինի Կենտրոնական թաղամասի պեղումները 1971-1973, ԼՀԳ, Եր., 1975, №7, էջ 89-99:

Հեղինակը ներկայացնում է հաշվետու տարիներին Դվինի Կենտրոնական թաղամասում բացված կարևորագույն հուշարձաններից մեկի՝ V դ. պալատական կառույցի պեղման մանրամասները: Լորջ ընդհանրացումներ են արվել այս շինության կիրառական նշանակության, կառուցման և ավերման մանրամասների վերաբերյալ: Դեռևս անավարտ պեղումների վրա հիմնված մեկնարանությունները հե-

տագայում հաստատվեցին նոր տվյալներով, և քաղաքի Կենտրոնական թաղամասի այս հատվածը ներկայացավ որպես հայոց պատմության մի դրվագի՝ Դվինում կաթողիկոսարան հիմնելու, ապա այն գրադաշտական մեխանի վերածելու ուշագրավ պատմության խոսուն վկա: Միջնադարյան հնագիտության համար կարևոր են հոդվածում ներկայացված շերտագրական հետազոտությունները:

21. Նոր նյութեր Թումանյանի շրջանի պատմական հուշարձանների, ԼՀԳ, Եր., 1975, №9, էջ 93-99:

1969թ. հուշարձանների վերականգնման հատուկ արվեստանոցի արշավախումբը հետազոտական աշխատանքներ է կատարել Թումանյանի շրջանում: Դսեղ, Զկալով, Մարց, Լորուս և այլ գյուղերում ուսումնասիրվել է շուրջ 75 հուշարձան: Հետախուզվել են ինչպես բրոնզեդարյան հուշարձանները՝ ամրոցներ, դամբարանադաշտեր, այնպես էլ միջնադարյան համալիրները, գյուղատեղիները, գերեզմանացներն ու խաչքարերը: Դսեղ և Մարց գյուղերի շրջակա հուշարձանները հիմնականում կապվում են Մամիկոնյանների տան վերջին շառավիղների անվան հետ, ովքեր XIII դ. այստեղ շինարարական լայն գործունեություն են ծավալել: Նրանք Դսեղում կառուցել են Բարձրաքաջ Ար Գրիգոր Վահարը, Մարցի Իգաւտակի եկեղեցին: Հետազոտված տարածքը հայտնի է խաչքարային հնքնատիպ մշակույթով: Այս հուշարձանների ուսումնասիրության շնորհիվ հավաքվել են նաև վիմագրական նյութեր: Արշավախումբը կատարել է չափագրական աշխատանքներ, հուշարձանների անձնագրավորում:

22. Նոր մոնումենտալ շինության պեղումները Դվինում, հայ արվեստի ու ճարտարապետության պրոբլեմներին նվիրված նստաշրջան, Եր., 1975, էջ 21-22:

1971-1974թ. Դվինի Կենտրոնական թաղամասում Մայր տաճարից հարավ-արևմուտք գտնվող այունազարդ դահլիճի բացումը խիստ կարևոր նշանակություն ունեցավ Դվինի պատմության ուսումնասիրության համար: Այս նորահայտ շինությունը հնարավորություն տվեց վերանայելու Դվինի աշխարհիկ ճարտարապետական կառույցների, մասնավորապես VII դ. կաթողիկոսական պալատի կառուցման ստույգ թվականը:

23. Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970 թթ., Եր., 1976, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 115 էջ:

Դվինի Կենտրոնական թաղամասը V-IX դդ. եղել է քաղաքի վարչաքաղաքական և հոգևոր կենտրոնը: Տարիներ շարունակ այս ճարտարապետների ու հնագետների կողմից գիտական համբուլքան է ներկայացվել եռանակ և միանավ ելեղնեցիների, ինչպես նաև կաթողիկոսական պատկերով:

1964-1970 թթ. անընդմեջ պեղումներ կատարելով քաղաքի այս հատվածում՝ հեղինակը հանրագումարի է քերել հնագիտական արդյունքը՝ եզրակացություններն ամփոփելով համապատասխան բաժիններում: Հանգամանորեն ներկայացված են բացված մեծ կառույցի մանրամասները, շինարարական առանձնահատկություններն ու նյութերի թվագրությունը՝ VIII-IX դդ.: Աշխատությունը բաղկացած է մետաղամշակություն, խեցեգործություն, ապակեգործություն և հախճապակեգործություն բաժիններից, որոնցում ըստ գործածական կերպի, հետազոտվել են վերոհիշյալ արհետների նմուշները: Առանձին դեպքերում իրերը նկարագրվել են մանրամասնորեն, նշվել են գործածության ժամանակը, այլ հուշարձաններից հայտնաբերված զուգահեռնները: Խեցելենը ներկայացված է առանձին խմբերով ու ենթախմբերով: Հասարակ խեցելենի դասակարգման հիմքում դրվել է ոչ միայն որակական հատկանիշների, այլև անորների որոշ չափորոշչների հաշվառում՝ դրանցից ըլսեցնելով այս կամ այն խեցեգործական կենտրոնը որոշելու ամփոփիչ հետևողաբար ներկայացված է: Հայտնաբերված հախճապակին հիմնականում ներմուծված է: Շարադրանքում հիմնավորվել են դրանց ծագման ակրները՝ Իրան, Իրաք, Եգիպտոս: Ապակեգործությունը լուսարանող բաժնում առարկաները ներկայացված են համակողմանի քննությամբ՝ հաշվի առնելով դրանց կիրառական նշանակությունը, հաճախ հիմնավորում իրականացվել է մատենագրական վկայություններով:

Կենտրոնական թաղամասի պեղումներին նվիրված այս հետազոտությունը կարևոր նշանակություն ունի հայոց մայրաքաղաք Դվինի պատմական մի փուլի (VIII-X դդ.) տնտեսական և առևտրամշակութային կյանքի մասին գաղափար կազմելու համար:

**24. Стеклянные сосуды из Двина, АО 1975 г., М., 1976,
стр. 508-509 (соавтор: Р. Джанполадян).**

Հեղինակները ներկայացրել են Դվինի Կենտրոնական թաղամասում հայտնաբերված երկու կոտրատված ապակե բաժակներ, որոնք գեղարվեստական ու տեխնիկական մշակման հետաքրքիր նմուշներ են: Դրանցից մեկը բաց կապտավոն թափանցիկ ապակուց անոթ է՝ հարթ հատակով և գլանաձև իրանով, մյուսն անգույն ապակուց է և ունի փորագիր զարդեր: Նյութի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ այս բաժակները հարդարանքով, ապակու որակով ու մշակմամբ տարբերվում են Դվինի տեղական ապակեգործական արտադրանքից և ներմուծված են մերձավորարևելյան որևէ երկրից:

**25. Позднеурартское погребение Ошаканского могильника,
ИЖФ, Ер., 1976, №3, стр. 268-275 (соавтор: С. Есаян).**

Աշտարակի շրջանի Օշական գյուղի կենտրոնում բարձրացող և տեղացիների կողմից Դիդի կոնդ անվանվող բլրի լանջերին գտնվում են տարբեր դարաշրջանների դամբարանադաշտեր: Հողվածում քննված է ուշագրավ դամբարաններից մեկը, որտեղ հայտնաբերվել է 27 կմախր: Հետարքին այն է, որ յուրաքանչյուր կմախրի տակ որված է եղեկ հատուկ կոտրված կավե սարկոֆագի բեկոր: Այս գտածոյի հիման վրա կարելի է փաստել, որ արդեն VI դ. սկզբից սովորույթ է դառնում հանգույաներին կավե սարկոֆագներում թաղելը: Քանի որ դամբարանում այդքան շատ սարկոֆագ հնարավոր չէր տեղավորել, ուստի այդ բեկորներով կավե սարկոֆագների պատրանք են ստեղծել: Դամբարանից հայտնաբերված հնագիտական նյութերը բաղկացած են խեցեղնից, զենքից ու զարդերից, որոնց հիման վրա թաղումը թվագրվում է մ.թ.ա. VII-VI դդ.:

**26. Античный некрополь Ошакана, ВОН, 1976,
Ер., №12, стр. 27-40 (соавтор: С. Есаян).**

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը 1971 թ.-ից սկսած Օշական գյուղի Դիդի կոնդ հնավայրում պեղումներով բացել է ուրարտական ամրոց և վաղմիջնադարյան բնակավայր: Բլրի լանջերը, որտեղ գտնվում է հուշարձանը, ծածկված են տարբեր դարաշրջանների դամբարաններով: Հողվածը նվիրված է անտիկ դամբարանադաշ-

տին: Հայտնաբերված դամբարանները բացահայտեցին կառուցրողական մի շարք առանձնահատկություններ, հիշյալ շրջանի թաղման նոր տեսակներ և հարուստ հնագիտական նյութեր (խեցեղեն, աշխատանքային գործիքներ, զարդեր, կնիքներ):

27. Античный могильник Ошакана, XIV международная конференция античников Социалистических стран, «Эйрене», тез. док., Ер., 1976, стр. 149-150 (соавтор: С. А. Есаян).

Զեկույցը նվիրված է Օշականի անտիկ դամբարանադաշտում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի պետումներին: Դամբարանները հիմնականում թարարկդային են, հանդիպում են նաև կրոմլեխներ և կարասային թաղումներ: Դամբարաններից հայտնաբերվել են հարուստ հնագիտական նյութեր, այդ թվում՝ խեցեղեն անորներ, զենքեր, զարդեր: Հատկապես ուշագրավ են երկու պատկերակիր կնիքները: Պեղումներով հստակեցվել են, որ անտիկ շրջանում Օշականի բնակչությունը թաղումները կատարել են տարբեր տիպի կառույցներում և միմյանցից տարբեր թաղման ծեսով, որը հավանաբար պայմանավորված էր բնակչության սոցիալական շերտավորվածությամբ:

**28. Раскопки в Ошакане, АО 1978 г., М., 1979, стр. 520-521
(соавторы: С. Есаян, Л. Биягов, А. Пилипосян).**

Օշականում 1978 թ. պեղումները կենտրոնացվել են մ.թ.ա. VII-V դարերի պալատական համալիրների շրջակայքում: Բացվել են համալիրի երկրորդ մուտքը, բակից մուտք տանող չորս դրուերն ու երեք փոխկապակցված սենյակներ: Համալիրի գրեթե բոլոր հատվածներում, հատկապես դրուերի և օջախների մոտ հայտնաբերվել են ֆալիկ կոթողներ, պտղաբերությանը նվիրված կոտրեր և մարդու տուֆակերտ երկու քանդակ:

Մ.թ.ա. IV-III դդ. սահմանագծին ավերված համալիրի տեղում առաջանաւ է անտիկ դամբարանադաշտ, ինչի մասին վկայում են այդ շրջանին վերաբերող թաղումները:

**29. Раскопки Двинской экспедиции, АО 1978 г., М., 1979,
стр. 521 (соавторы: Н. Акопян, А. Жамкочян, Ф. Бабаян,
Г. Кочарян).**

Հորդվածն ամփոփ ներկայացնում է Դվինի 1978 թ. պեղումների արդյունքները: Կենտրոնական թաղամասում բացվել է V դ. կաթողիկոսական պալատի արևմտյան թևին կից շինությունը: Հարավային բուրգի և Միջնաբերդի արևմտյան լանջի պեղավայրերում աշխատանքներն ընթացել են XII-XIII դդ. շերտերում:

**30. О работах спитакской экспедиции, АО 1978 г., М., 1979,
стр. 522-523 (соавтор: Г. Саркисян).**

Սպիտակի միջնադարյան քարայրային բնակավայրն այն եզակի հուշարձաններից է, որտեղ կարելի է ծանոթանալ վիմափոր ճարտարապետության ամենատարբեր ձևերին: Համալիրում կան երկհարկ և եռահարկ սենյակներ, որոնք հաղորդակցվում են գաղտնություններով, միջանցքներով ու քարե աստիճաններով: Սենյակներում կան դեկորատիվ խորշեր, օջախներ և հորեր: Կեղծ կամարները, մուտքերն ու լուսամուտներն ունեն մշակված հարդարանք: Քարայրային բնակատեղին աչքի է ընկնում հնագիտական հարուստ նյութով:

**31. Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքները
1977 թ., ՊԲՀ, Եր., 1979, №2, էջ 263-269:**

1979-ին պեղումները կենտրոնացվել են քաղաքի երեք հատվածներում՝ Միջնաբերդի արևմտյան լանջ, Միջնաբերդի հարավային պարսպի շրջան և Կենտրոնական թաղամաս: Միջնաբերդի արևմտյան հատվածում բացված արհեստավորական թաղամասի պեղումները հնարավորություն են տվել այն ճշգրիտ թվագրելու XII դ. 50-ական և XIII դ. 20-ական թթ.: Պեղվող հատվածում պահպանվել են աղյուսե պատերի մնացորդներ, օջախներ, թրծման վառարաններ, որոնք փաստում են այստեղ արտադրական համալիրի գոյությունը: Հարավային պարսպի շրջանում պեղվել է աշտարակի ներսը՝ պարզելու պարսպի և կից շինությունների կապը: Կենտրոնական թաղամասում պեղումները կենտրոնացվել են Կաթողիկէ եկեղեցու հարավարևմտյան մասում գտնվող V դ. կաթողիկոսական պալատի շրջանում: Պալատի արևելյան մասում՝ այոնագարդ սրահին կից, բացված երկու

մեծ սրահի պատերն ունեցել են սվաղ՝ փորագիր զարդերով: Դվինի
Վ. պալատի այսնազարդ դահլիճը, ի տարբերություն վաղմիջնա-
դարյան այլ պալատների, չորս կողմից շրջապատված է եղել սենյակ-
ներով: Կենտրոնական թաղամասում հարուստ գտածոներով է ներ-
կայացվել նաև IXդ. շերտը: 1977 թ. կարևոր գյուտերից էր նաև դրա-
մական գանձի հայտնաբերումը Կենտրոնական թաղամասից մոտ 100
մ դեպի հարավ գտնվող դաշտից:

1977

32. Հնագիտական ուսումնասիրություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նախրիի շրջաններում, ԼՀԳ, Եր., 1977, №4, էջ 77-93 (հեղինակակիցներ՝ Գ. Արեշյան, Կ. Ղաֆարարյան, Հ. Սիմոնյան, Գ. Տիրացյան):

ԳԱԱ հնագիտության և ազգագրության, արվեստի ինստի-
տուտների և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի
համատեղ արշավախումբը նոր հուշարձաններ հայտնաբերելու և հե-
տազոտելու նպատակով 1975 թ. երթուղային արշավներ է իրականաց-
րել Նախրիի և Աշտարակի շրջաններում: Հայտնաբերվել են մի շարք
հետապալետոլիթյան ուշագրավ հուշարձաններ, որոնք բաժանվել են հե-
տևյալ տիպերի՝ միաշերտ, երկշերտ, բազմաշերտ բնակավայրեր,
դամբարաննադաշտեր, միջնադարյան կոթողներ, եկեղեցիներ, այլ
հուշարձաններ: Դրանց հետազա ուսումնասիրությունը կարևոր լրա-
ցումներ ու ճշգրտումներ կկատարի հիշյալ շրջանների մշակութային
պատկերն ամբողջացնելու առումով:

33. Սասանյան կնքադրոշմների և դրանց կիրառական որոշ կողմերի մասին, ՊԲՀ, Եր., 1977, №3, էջ 195-205:

Հեղինակն ուսումնասիրության նյութ է դարձրել միջնադարյան
կավե կնիքներն ու կնքադրոշմները: Վաղ միջնադարում կնքադրոշմ-
ները լայն տարածում են ունեցել Սասանյան Իրանում և նրա ազդե-
ցության տակ գտնվող հարեւան երկրներում: Հայաստանում սասան-
յան ուշագրավ կնքադրոշմներ են հայտնաբերվել Դվինի պեղումնե-
րից: Կնքադրոշմների կիրառական նշանակությունը հետազոտել են
բազմաթիվ գիտնականներ: Կնիքների գործածության մասին վկայու-

թյուններ ունեն հայ և արար պատմիչները: Ասձնական կնիքներ են ունեցել արքաները, ազնվականներն ու իշխանները, ուզմական առաջնորդները, հոգևորականները, առևտրականները: Կարաղրոշմ-ներով են կնքվել պետական հրովարտակները, արքայական հատուկ հրամանները, առևտրական պայմանագրերը, նամակները, նվիրատ-վական փաստաթղթերը:

**34. Следы стекольного производства в раннесредневековом
Двине, ИФЖ, 1977, Ер., №4, стр. 166-174
(соавтор: А. Костанян).**

Դվինը միջնադարյան Հայաստանի ապակու արտադրության կարևորագույն կենտրոններից էր, որի արտադրանքը սերտորեն կապված էր մերձավորարևելյան ապակեգործական արհեստանցնե-րի հետ: Քաղաքի Կենտրոնական թաղամասում 1973-1974 թթ. իրակա-նացրած պեղումներով V դ. կաթողիկոսական պալատի սյունազարդ դահլիճում բացվեցին թրծած աղյուսե պատերով շինության մնացորդ-ներ, որում հայտնաբերվեցին ապակե անորների խոտան, լուսամուտի ապակիներ, հալոցներ, օրսիդիանի բնեկորներ: Հիշալ նյութերը փաս-տում են այստեղ ապակու արտադրության արհեստանցի գոյության մասին, որը կառուցվել է VII դ.՝ Դվինի Սր Գրիգոր Եկեղեցու վերան-րոգման և նոր կառուցվող կաթողիկոսարանի շինությունների լուսա-վորության նպատակով: Ապակիների քիմիական և լուսապատկերային վերլուծությունները փաստում են, որ դրանց հումքը տեղական է:

**35. Դվինի 1975-1976 թթ. պեղումների արդյունքները,
Հայկական ՍՍՀ-ում 1975-1976 թթ. դաշտային հնագիտական
աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների
թերթը, Եր., 1977, էջ 33-35:**

Հաշվետու շրջանում (1975-1976 թթ.) հնագիտական աշխատանքնե-րը նպատակ ունեին հստակեցնելու Դվին քաղաքի շերտագրությունը և քաղաքաշինությանն առնչվող որոշ հարցեր: Հատկապես ուշագրավ էր մ.թ.ա. I հազ. թվագրվող արձանների հայտնաբերումը, որոնք խիստ սակավ են հանդիպում այլ հուչարձաններում: Ամրողությամբ ավարտվեցին Կենտրոնական թաղամասում բացված V դ. կաթողիկո-սական պալատի սյունազարդ դահլիճի պեղումները: Այն աշխարհիկ

ճարտարապետության եզակի կառույցներից է: Ստորին բերդում պեղվել են նաև քաղաքի գոյության վերջին շրջանին վերաբերող տնտեսական, բնակելի, արտադրական շինություններ, որոնք կարևոր են բնակչության ստորին խավերի կենցաղի վերաբերյալ դիտարկումներ կատարելու համար:

**36. Ապակու արտադրության հետքեր վաղմիջնադարյան
Դվինում, Հայկական ՍՍՀ-ում 1975-1976 թթ. դաշտային
հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված
գեկուցումների թեզեր, Եր., 1977, էջ 35-36
(հեղինակակից՝ Կ. Կոստանյան):**

1973-1974 թթ. Դվինի Կենտրոնական թաղամասում բացված V դ. կաթողիկոսական պալատի սյունազարդ դահլիճում գտնվել են թթված աղյուսով կառուցված օջախի մսացորդներ: Այդ հատվածում հայտնաբերված ապակու խոտանը, օրինակ բեկորները, հալոցները, մոխրի և փայտի կուտակումներն ապակու արտադրության մասին ենթադրության հիմք են տալիս: Քիմիական և լուսապատկերային վերլուծությունները փաստում են, որ ապակու հումքը տեղական է՝ հավանաբար բերված Դվինին մոտ գտնվող որևէ վայրից: Արհեստանոցը թվագրվում է VII դ.:

1978

**37. Դվինի 1975-1976 թթ. պեղումները, I համար, Եր., 1978, №2,
էջ 99-106 (հեղինակակից՝ Կ. Ղաֆարյան):**

Հոդվածը նվիրված է Դվինի 1975-1976 թթ. պեղումներին: Կենտրոնական թաղամասում բացված V-VI դդ. պալատի սյունազարդ դահլիճն ակներևաբար կառուցվել է V դ. 70-ական թթ., երբ քաղաքը Հայաստանի հոգևոր կենտրոն դարձավ: Պեղումներով վերջնականապես ճշգրտվել են թաղամասի ժամանակագրության երեք հիմնական փուլերը՝ V-VI, VII-VIII և IX դդ.: Հայտնաբերվել են հարուստ հնագիտական նյութեր՝ խեցեղեն, ապակի, աշխատանքային գործիքներ, զարդեր և այլն: Պարզվել է նաև, որ Միջնաբերդի ստորոտը խիտ բնակեցված է եղել XII-XIII դդ.: Այստեղ բացվել են տնտեսական նշանակության կառույցներ, բնակելի տներ, գտնվել է առատ հնագիտական նյութ: Ուշադրության է արժանի թրծման վառարանով խեցեգործական արհես-

տանոցի հայտնաբերումը: Այս արշավախմբի կարևոր գոտածոներից են նաև Միջնաբերդից արևելք՝ դաշտում՝ պատահարար հայտնաբերված քարե երկու արձանները, որոնցից առաջինը թրու և դաշտոյնով զինվոր է, իսկ երկրորդը՝ ձեռքերը կրծքին ծալած կին:

**38. Օշականի վաղմիջնադարյան բնակավայրը, ԼՀԳ,
Եր., 1978, №3, էջ 79-91 (հեղինակակից՝ Ս. Ա. Եսայան):**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը 1970-80-ական թթ. պեղումներ է իրականացրել Օշականի Դիդի կոնդ կոչվող բլրի գագաթին գտնվող ուրարտական ամրոցում, Նրա հյուսիսային ստորոտի պալատական համալիրներում և շրջակա դամբարանադաշտերում:

Ամառունի իշխանական տունը, IV դ. Օշականն իրրև պարզ ստանալով՝ պահպանել է ուրարտական ամրոցի հիմնական հատակագիծը՝ կատարելով որոշ փոփոխություններ: Հարավային թևի ուրարտական սենյակներում կառուցվել են լրացուցիչ միջնորմներ: Հարավարևմտյան հատվածում կան միջնադարյան կառույցի հետքեր և ջրամբարներ: Արևելյան հատվածում օգտագործվել է պարսպից դուրս գտնվող քարանձավը: Ամրոցի կենտրոնում՝ բլրակի վրա, կառուցվել է միանավ, թաղակապ եկեղեցի:

VIII դ. Ամառունիները դրւու են գալիս քաղաքական ասպարեզից: Հնարավոր է, որ այդ ժամանակ ամրոցն ավերված լիներ արաբական զորախմբերի կողմից: Պեղումներով հայտնաբերված միջնադարյան խեցեղենը, ըստ կիրառական նշանակության, բաժանվում է հետևյալ խմբերի՝ կարասներ, կճուճներ, սափորներ, թասեր, խոփեր: Այստեղ գտնվել են նաև կղմինդրի բազմաթիվ օրինակներ, թևավոր խաչերի բեկորներ: Օշականի պեղումները կարևոր են պատմական Արագածոտնի վաղմիջնադարյան նյութական մշակույթի հետազոտման համար:

**39. Новые Материалы о дворцовых сооружениях
раннесредневековой Армении, Доклад на II международном
симпозиуме по армянскому искусству, Ер., 1978, стр. 11
(նոյն հոդվածը հրատարակվել է նաև ֆրանսերենով):**

Հոդվածում քննության է առնվում միջնադարյան հայ աշխարհիկ ճարտարապետության մի բնագավառը՝ պալատաշինությունը: Հան-

գամանալից ներկայացվում են Դվինի գույգ՝ V և VII դդ. պալատական շինությունները, դրանց ծավալատարածական, ճարտարապետական լուծումները, շինարարական տեխնիկան, կառուցման և ավերման պատմությունը, պեղման հանգամանքները, կապը համաժամանակյա նմանատիպ հուշարձանների հետ:

1979

40. Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքները 1977թ., ՊԲՀ, Եր., 1979, №2, էջ 263-269:

Հողվածը նվիրված է Դվինի 1977թ. պեղումներին: Աշխատանքները Միջնաբերդի ստորին հատվածում շարունակվել են XII-XIII դդ. շերտերում: Պեղավայրն աչքի է ընկնում կառուցապատումների՝ բնակելի և տնտեսական շինությունների, արտադրական համալիրների խիտ ցանցով, որը վերաբերում է քաղաքի պատմության վերջին շրջանին: Բերդապարհսպանների մոտ արտադրական համալիրների գոյությունը գերազանցապես հատուկ նշանակություն ունի և կապվում է առաջին հերթին ջրամատակարարման ու ջրահեռացման հետ:

Քաղաքի Միջնաբերդի հարավային մասում պեղումները նշանավորվել են միջնադարյան հարուստ և բազմազան խեցեղենով: Կենտրոնական թաղամասում աշխատանքները շարունակվել են V դ. կարողիկոսական պալատի շրջակայքում: Պեղված նյութերի մեջ մեծ թիվ են կազմել ջնարակած անորները, մերձավորակնելյան կենտրոններից ներմուծված շողյուն խեցեղենը, ապակին: Արշավախմբի կարևոր գուածոններից էր նաև դրամների մեծ զանձը:

41. Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքները 1977-1978 թթ., 1977-1978 թթ. հնագիտական դաշտային աշխատանքներին նվիրված նստաշրջան, Եր., 1979, էջ 26-27:

Դվինի 1977-1978 թթ. պեղումները զգալի նյութեր են ընձեռել միջնադարյան քաղաքաշինության և տնտեսության բազմակողմանի ուսումնասիրության համար: Հարավային բուրգի շրջանում պեղումներն ընթացել են ամենավերին՝ XIII-XIV դդ. շերտերում: Կենտրոնական թաղամասում պեղվել է V դ. պալատի շրջակայքը: Ի տարբերություն վաղմիջնադարյան նոյնատիպ պալատների՝ Դվինի V դ. կա-

ոռոյցի կենտրոնական այունազարդ դահլիճը չորս կողմից շրջապատված է եղել սենյակներով:

42. Սպիտակի արշավախմբի պեղումների արդյունքները, 1977-1978 թթ., 1977-1978 թթ. հնագիտական դաշտային աշխատանքներին նվիրված նատաշրջան, Եր., 1979, էջ 32-34 (հեղինակակից՝ Գ. Սարգսյան):

Սպիտակի արհեստական քարանձավակներից բաղկացած միջնադարյան բնակավայրն ընդարձակ բնակելի համալիր է՝ իր արհեստագործական կառույցներով, քարավանատնով, եկեղեցով: Հայտնաբերված հնագիտական նյութը, ինչպես նաև ողջ համալիրն իրեն բնորոշ ճարտարապետական հարդարանքով թվագրվում է XII-XIII դդ.:

43. Սպիտակի վիմափոր բնակավայրը, Մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական չորրորդ կոնֆերանս, Եր., 1979, էջ 137-139 (նույնը՝ ոռուսերեն, էջ 216-218):

Հեղինակն անդրադարձել է Սպիտակի քարայրային բնակավայրի պեղումներին, ճարտարապետությանը, թվագրությանը: Ճարտարապետական մտահղացմամբ, հատակագծային հորինվածքով ու ներքին հարդարանքով Սպիտակի բնակավայրն աղերսվում է: Ասիի ստորգետնյա քաղաքի և Վրաստանի նոյնատիպ, համաժամանակյա հուշարձանների հետ (Վարձք): Կիրառական տեսակետից վիմափոր բնակավայրում երևան են գալիս շինուայինների չորս տիպեր՝ պաշտամունքային, հասարակական, բնակելի և արտադրական: Զարգացած արտադրական կյանքի մասին են վկայում հայտնաբերված խարամը, արտադրական տարբեր հարմարանքները, ինչպես նաև նյութական մշակույթի մասնարդները՝ խեցեղեն, երկարէ գործիքներ, զենքեր, պղնձեն, ոսկեն զարդեր:

1980

44. Ապակեգործությունը Հայաստանում 5-8-րդ դդ., ԼՀԳ, Եր., 1980, №7, էջ 85-98:

Հնագիտական հարուստ ու բազմազան նյութը թոյլ է տալիս խոսելու վաղ միջնադարում Հայաստանում զարգացած ապակեգործության մասին, որի խոշորագույն կենտրոնը Դվինն էր: Հողվածը նվիր-

ված է այստեղ հայտնաբերված ապակյա իրերին, որոնք անմիջական գուգահեռներ ունեն մերձավորարևելյան և անդրկովկասյան նյութերի հետ՝ վկայելով տարածաշրջանի երկրների ակտիվ շփումների մասին։ Դվինից գտնվել են տեխնոլոգիական գրեթե բոլոր հայտնի՝ սառը մշակման, կաղապարի մեջ և ազատ փշման, մողակի հնարներով պատրաստված ապակյա անոթներ։ Ըստ անոթների ձևի՝ առանձնացվում են սրբակները, թասերը, բաժակները։ Տեղական ապակեգործության մասին են վկայում հայ և օտար պատմիչները, իսկ 1973-1974թթ. Դվինի Կենտրոնական թաղամասում բացվել է VII դ. ապակեգործական արհեստանոց։

45. Սպիտակի վիմափոր բնակավայրը, «Գիտություն և տեխնիկա», Եր., 1980, №3, էջ 21-26 (հեղինակակից՝ Գ. Սարգսյան)։

1977թ. պեղումներ են իրականացվել Սպիտակ քաղաքից մոտ 10 կմ հեռավորությամբ գտնվող ժայռափոր բնակավայրում։ Բացվել են պաշտամունքային (եկեղեցի, տապանատուն), հասարակական (քարվանսարուն), արտադրական (օջախ-վառարաններ, հորեր) և բնակելի նշանակության շինություններ։ Հայտնաբերված հնագիտական նյութերով և հատկապես դրամներով բնակավայրը թվագրվում է XIII-XIV դդ.։ Այն իր կառուցղական տեխնիկայով և ճարտարապետությամբ եղակի հուշարձան է և կարևոր նշանակություն ունի միջնադարյան նմանօրինակ բնակավայրերի ուսումնասիրության առումով։

1981

46. Դվինի 1979-1980թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հայկական ՍՍՀ-ում 1979-1980թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզեր, Եր., 1981, էջ 36-37։

1980թ. Դվինի Կենտրոնական թաղամասում պեղումները շարունակվել են V-VI դդ. պալատի արևմտյան թևում, որտեղ բացվել է VI դ. կրակապաշտական տաճար՝ տուֆակերտ ատրուշանով։ Միջնաբերդի ստորին հատվածի պեղումները կենտրոնացված էին XII-XIII դդ. բնակելի համալիրում։ Հարավային բուրգի հարևանությամբ աշխատանքներն ընթացել են X-XI դդ. շինության նորաբաց պատի շուրջը։ Այս չափազանց հետաքրքիր պատի չափսերն արդեն (30X4 մ) խոսում

Էին շինության կարևորության մասին և հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտություն առաջացնում:

1982

47. Раннесредневековые буллы Двина, АРА 13, Средневековые памятники, вып. V, Ер., 1982, изд. АН АССР, 68 стр.

Գիրքը վերաբերում է Հայաստանի Սասանյան տիրապետության ժամանակաշրջանի (V-VII դդ.) նյութական մշակույթի կարևոր բնագավառներից մեկին՝ կսիրազործությանը: Կսիրներով վավերացվում էին իրավական, առևտրական և պետական այլ կարգի փաստաթղթերը: Կիրառական արվեստի այս ճյուղը ներկայացվել է Դվինում հայտնաբերված 41 կնքադրոշմներով, որոնցից 37-ը վերաբերում է սասանյան, իսկ 4-ը՝ արաբական ժամանակաշրջանին: 41 կնքադրոշմների վրա 178 կսիրների հետքեր կան, որոնցից 138-ը՝ ուշասանյան, իսկ 40-ը վաղարաբական են: Հեղինակը Դվինի հավաքածուի բարձր արժեքը հիմնավորում է շերտագրական որոշակի հորիզոններից (V-VII դդ.) հայտնաբերելու հանգամանքով, քանի որ աշխարհի բազմաթիվ թանգարաններում գտնվող հազարավոր նմուշների զգալի մասը պատահական գտածոներ են:

Առաջին գլխում հայկական առյուրների հենքով և սասանյան «Դատաստանագրքի» մեջ պահպանված վավերագրերով դրոշմակնիրները հիմնավորվում են որպես սոցիալ-տնտեսական, առևտրական կյանքի տարրեր կողմերը լուսաբանող երևոյթ: Միաժամանակ վավերագրերի բնույթի վերլուծության հիման վրա դրանք շեշտում են այս կամ այն անձի ինքնությունն ու իրավական դիրքը: Շարադրանքի էական բաժիններից մեկը կնքադրոշմների սիմվոլիկային նվիրված գլուխն է, որում քննության են ներարկվել դրանց վրայի պատկերները: Նյութի պատկերագրական քննությունն արվել է Հայաստանի և Սասանյան Իրանի հայտնի հուշարձանների քանդակների, դրամների, կսիրների, ոսկերչական առարկաների համեմատական վերլուծության հիման վրա: Կարևոր են IX դ. շերտերից հայտնաբերված արաբական կնքադրոշմները, որոնք կրում են արաբերեն արձանագրություններ և մինչ օրս հայտնի են միայն Դվինից:

48. Спитакское пещерное поселение. Доклад на международном симпозиуме по проблемам охраны и реставрации пещерных комплексов. Ер., 1982, стр. 17-19.

Զեկույցը նվիրված է Սպիտակի քարանձավային բնակավայրի հետազոտությանը, դրա ճարտարապետությանը, շինությունների տիպարանությանը, հնագիտական նյութի մեկնաբանությանը: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ քանակությամբ խարամ, արտադրական տարրեր հարմարանքներ, ինչպես նաև նյութական մշակույթի ուշագրավ մսացորդներ՝ խեցեղեն, երկաթե գործիքներ, զենքեր, պղնձե, ոսկրե զարդեր, որոնք վկայում են զարգացած արտադրական կյանքի մասին:

49. Рубцы на глиняных стенах. Наука в СССР, М, 1982, №5, стр. 88-94.

Հոդվածի նախաբանում տրված է Դվինի հնագիտական ուսումնասիրության պատմությունը (Նիկողայոս Մատ, Խաչիկ Դադյան, Սմբատ Տեր-Ավետիսյան, Կարո Ղաֆադարյան): Համառոտ տրված է նաև հուշարձանի ժամանակագրությունը՝ վաղ բրոնզից մինչև, ըստ Փակստու Բուզանդի և Մովսես Խորենացու, հայոց Խոսրով II (332-339 թթ.) արքայի կողմից Դվինի բլրի վրա միջնադարյան քաղաքի հիմնադրումը: Քաղաքը ծաղկում և զարգանում է Արշակունիների ժամանակ ու հատկապես հայոց եկեղեցու հայրապետների նստավայր դառնալուց հետո: Իբրև վաղ միջնադարի ճարտարապետության դասական նմուշներ՝ Ա. Քալանթարյանն օրինակ է բերում Սր Գրիգոր կաթողիկե եկեղեցին, միանավ բազիլիկ եկեղեցին, Արշակունիների գահանիստ դահլիճը և քարավանատունը: Հոդվածում հակիրճ ներկայացվում են Դվինի պատմության, տնտեսության, մշակութային վերելքի, զարգացման փուլերի, պեղումների առանձին դրվագների, հնագիտական նյութերի և այլ հարցեր: Ասվում է, որ բավականին գործ է արվել, սակայն, լինելով Արևելքի խոշորագույն քաղաքներից մեկը, Դվինը շատ բան է թարցնում իր մեջ, և հնագետների հետազատունները դեռևս շատ անելիք ունեն:

**50. Դվինի 1978-1979թ. պեղումները, ԼՀԳ, Եր., 1982, №2,
էջ 54-65:**

Հոդվածում ամփոփվել են պեղավայրի երեք հիմնական տեղամասերի՝ Հարավային բուրգի, Միջնաբերդի արևմտյան լանջի և Կենտրոնական թաղամասի պեղումների արդյունքները։ Կատարվել է Դվինի շերտագրության, քաղաքային առևտրի, արհեստագործության հետ կապված բազմակողմանի մեկնաբանություն։

1979թ. բացվել է զիպսե սվաղով պատի մի անլյուն, որը մեծ չափեր ունեցող շինության մի հատվածն է։ Հետագա պեղումների խնդիրը դարձել էր այս շինության ճշգրիտ թվագրության, կիրառական նշանակության և հատակագծային լուծման պարզաբանումը։ Միջնաբերդի արհեստավորական թաղամասից պեղվել է XII-XIII դդ. մետաղագործական, խեցեգործական բազմազան նյութ։ Կենտրոնական թաղամասում՝ V դ. կաթողիկոսական պալատի արևմտյան մասում, հնագիտական աշխատանքներն ուղղվել են շինարարական և մշակութային շերտերի հստակեցմանը, նյութի ուսումնասիրությանը։ Քաղաքի այս հատվածում բացվել է կառուցապատումների խճողված պատկեր, որն ընդգրկում է անտիկ շրջանից մինչև IX դ. վերջն ընկած ժամանակահատվածը։

**51. Դվինի 1980թ. պեղումների հիմնական արդյունքները,
ԼՀԳ, Եր., 1982, №12, էջ 87-94:**

1980թ. պեղումները Դվինում շարունակվել են երեք հիմնական տեղամասերում։ Միջնաբերդի ստորին հատվածի պեղումները վերահստատում են այն կարծիքը, որ քաղաքի այս հատվածը եղել է առևտրաարհեստավորական թաղամաս։ Գտնվել են XII-XIII դդ. բնորոշ խոհանոցային հասարակ խեցեղեն, մասսայական արտադրության ջնարակված անոթներ։ Հարավային բուրգի պեղումները կենտրոնացվել են IX-X դդ. շինության պատի բացման աշխատանքների վրա։ Շերտագրության համար հիմնական կովանը X-XI դդ. ջնարակված խեցեղենն է։

Կենտրոնական թաղամասում պեղումներից հայտնաբերվել են կավե և ապակյա անոթների բազմաթիվ նմուշներ։ Դրանց մեծ մասը կրկնում է նախորդ տարիների պեղումներից գտնված հանրահայտ

ձևերը, սակայն առանձին անոթներ Դվինում առաջին անգամ են հայտիալում: Ուշագրավ են զարդարուն կաղապարի մեջ պատրաստված IX դ. անոթները, ապակյա դամպարներն ու նկարազարդ բաժակները: Պատմահնագիտական ակնարկ է անցկացվում Դվինի V-VII դդ. պատմության մասին:

**52. Պատկերազարդ աղյուսներ Աղցից, Մշակույթի և արվեստի պրոբեմներին նվիրված հանրապետական հինգերորդ կոնֆերանս, Եր., 1982, էջ 212-213
(սույնը՝ ուսւերեն, էջ 335-336):**

Ձեկույցը նվիրված է Աղցի հայ Արշակունի թագավորների վաղմիջնադարյան դամբարանի շրջակայթից հայտնաբերված կավել սալիկներին: Դրանք իրենց պատկերազրությամբ հայ իրականության մեջ սասանյան արվեստի ազդեցության տիպիկ օրինակներ են և զուգահեռներ ունեն Իրանի IV-V դդ. նյութական մշակույթում:

1983

**53. Դվինի պեղումների հիմնական արդյունքները, 1981-1982 թթ. դաշտ. հնագ. աշխ. նստ., Եր., 1983, էջ 43-45
(հեղինակակիցներ՝ Կ. Ղաֆարյան, Ն. Հակոբյան,
Ֆ. Բարայան, Ա. Ժամկոչյան, Հ. Զանփոլադյան):**

Այս տարիներին Դվինի արշավախումբը պեղումներ է իրականացրել նախորդ տարիներին պեղվող Կենտրոնական թաղամասում, Ստորին բերդում և Միջնարերդի հարավային բուրգի շրջանում, իսկ 1982 թ. սկսած՝ Միջնարերդի գագաթի վաղմիջնադարյան և հելլենիստական շերտերում: Այս վերջին հատվածում աշխատանքները կենտրոնացել են այն ժամանակ դեռ զահանիստ դահլիճ համարվող IV դ. շինության շրջակայթում: Միջնարերդի լանջերին պեղումները վեր են հանել ժամանակագրությամբ և մշակութային նկարազրով բոլորվին այլ նյութ: Թե՛ Ստորին բերդի, թե՛ Հարավային բուրգի պեղումներով բացված XII-XIII դդ. հնագիտական նյութն առնչվում է Դվինի պատմության այն շրջանին, երբ քաղաքը գտնվում էր մահմեդական կառավարիչների իշխանության տակ:

**54. Դվինի պեղումների հիմնական արդյունքները
(1981-1982թթ.), Հայկական ՍՍՀ-ում 1981-1982թթ. դաշտային
հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված
նստաշրջան, գեկուցումների թեզեր, Եր., 1983, էջ 43-45:**

1981-1982թթ. Դվինում հնագիտական աշխատանքները շարունակվել են նախորդ տարիներից պեղվող հատվածներում: Կենտրոնական թաղամասում աշխատանքներն իրականացվել են V դ. թվագրվող կաթողիկոսական պալատի շրջակայրում՝ հատակագծային պատկերը և շերտագրությունը հստակեցնելու նպատակով: Սակայն հետագա դարերի կառուցապատումների հետևանքով առաջմ հնարավոր չէ հստակ պատկեր կազմել այդ տարածքի վաղմիջնադարյան շերտագրության վերաբերյալ: Ստորին բերդում պեղումները շարունակվել են բնակելի և տնտեսական ուշագրավ կառույցներ ունեցող արհեստավորական թաղամասում: Միջնաբերդի հարավային բուրգի շրջանում կատարված պեղումներով հստակեցվել է գիպսե սկաղ ունեցող մոնումենտալ շինության թվագրությունը՝ IX-X դդ.: Որոշակի աշխատանքներ են տարվել նաև Դվինի հելենիստական շրջանի շերտագրությունը հստակեցնելու համար:

**55. Վաղ բյուզանդական դրամակշռույթին միավորների նմուշներ Դվինի պեղումներից, Հայկական ՍՍՀ-ում 1981-1982թթ.
դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին
նվիրված նստաշրջան, գեկուցումների թեզեր, Եր., 1983, էջ
38-39 (հեղինակակից՝ Ռ. Վարդանյան):**

Միջնադարյան Հայաստանի դրամակշռույթին միավորների հստակեցման համար կարևոր նշանակություն ունեն Դվինի պեղումներից գտնված դրամաշահերը: V-VII դդ. թվագրվող շերտերից գտնվել են ապակե, բրոնզե, քարե կշռաչափեր, որոնք ունեն խաչագարդ դրոշմներ: Դրանք քաշով համապատասխանում են բյուզանդական նոմինալ-էքսագիռնի միավորներին, որոնցով կշռվել է միայն ոսկին: Նման կշռաչափեր հայտնաբերվել են կայսրության ենթակա բոլոր երկրներում:

1984

56. Раскопки в Двине, АО 1982 г., М., 1984, стр. 442-443.

1982թ. Դվինի Հարավային բուրգի պեղավայրում արդեն բացված էր մոնումենտալ շինության պատի 40 մ երկարությամբ հատվածը: Այս շինությունն ավերվել է ՏԻդ.: Տեղում հայտնաբերվել է Տ-Տ դդ. թվագրվող, անգորով նկարազարդված խեցեղեն: Ավելի վերին շերտերում նյութը XII-XIII դդ. է: Շերտերը թվագրվում են խեցեղենի, իլուզիվյան ու սեղուկյան դրամների օգնությամբ: Պեղումները շարունակվել են նաև Կենտրոնական թաղամասում և Միջնաբերդի արևմտյան լանջին: Այս վերջին հատվածում պեղվել է արդեն չորրորդ քաղաքացիական մեծ տունը՝ իրեն կից բնակելի և տնտեսական շինություններով:

57. К вопросу о хронологии поливной керамики средневековой Армении. Душетская научная конференция, Тб., 1984, стр. 155-158.

Հետարաբական շրջանում քաղաքական կյանքի բարելավումը, տնտեսության և առևտրի զարգացումը Մերձավոր Արևելքում ու Միջին Ասիայում արտադրական նոր հարաբերությունների ձևավորման հիմք են դառնում: Նյութական մշակույթում դա պայմանավորվում է նաև և առաջ ջնարակած խեցեղենի երևան գալրվ: Հայաստանում ամենավաղ ջնարակված խեցեղենը IX դ. է՝ սկզբում բազմագոյն, ապա՝ միագոյն օրինակներով: X դ. անգորապատ խեցեղենի արտադրության սկիզբն է: Նոյն դարի վերջին և XI դ. սկզբին ջնարակված խեցեղենը ներկայանում է փորագիր զարդերով: Եվս մեկ դար անց այս տեխնիկան դառնում է գերակշռող, իսկ արդեն XIII դ. սկզբին նահանջ է ապրում՝ պայմանավորված խեցեղեն արտադրանքի մասսայականացմամբ:

58. Раскопки Двина. АО 1984 г., М., 1986, стр. 434-435.

Հողվածումներկայացված են Դվինի 1982թ. պեղումների արդյունքները: Աշխատանքներն իրականացվել են քաղաքի միանգամից չորս պեղավայրերում՝ Միջնաբերդի գագաթին և արևմտյան լանջին, Կենտրոնական թաղամասում ու Հարավային բուրգի ներսում: Հասգիտական նյութն ընդգրկում է հազարամյա պատմությամբ մի լիկ պարբերաշրջան՝ IV-XIII դդ.: Արշավախումբը հետախուզական աշ-

խատանքներ է կատարել Դվինից ոչ հեռո՞ւ Տիկնունի ամրոցում, որտեղ հայտնաբերվել են թրծած աղյուսից շինություններ, պատուհանների գունավոր ապակիների մնացորդներ:

1985

59. Глиняные плиты с изображением из Ахца, ИФЖ, Ер., 1985, №4, стр. 227-231.

1972-1974թթ. ՀՍՍՀ պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության կողմից Աղջրում իրականացրած մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութերի թվում առանձնահատող հետաքրքրություն են ներկայացնում կավե սալիկները: Դրանք պատրաստված են կաղապարներում և ունեն տարրեր կենդանիների պատկերներ: Պատկերազարդ սալիկները կիրառվել են հասարակական նշանակության շնորհերի ներքին հարդարման համար: Սալիկների վրա պահպանվել են արծվի, խոյի, արջի, ուղտի և այլ կենդանիների պատկերներ տարրեր բոյսերի միջավայրում: Նմանատիպ սալիկներ հայտնի են Հայաստանի այլ վայրերից ևս: Աղջրի սալիկների պատկերները շատ ավելի իրական են և կրում են սասանյան քանդակի ազդեցությունը:

60. Работы двинской экспедиции, АО 1983 г., М., 1985, стр. 497.

1983թ. շարունակվել են Դվինի Կենտրոնական թաղամասի արևմտյան, հարավային և հյուսիսային հատվածներում V դ. պալատի հետ կապված շինությունների մնացորդների հետազոտությունները: 893թ. երկրաշարժից ավերված կացարանների վերին շերտերում հայտնաբերվել են տարրեր ապակյա առարկաներ ու խեցեղեն անոթներ: Բացվել է նաև ջրահեռացման համակարգ՝ կապված ինչ-որ արտադրության հետ: Միջնաբերդի գագաթին պեղվել են նաև անտիկ և վաղավատատիրական շերտերը, որոնցից յուրաքանչյուրում կան մոնումենտալ շինությունների հետքեր:

61. Դվինի արշավախմբի 1983-1984թթ. աշխատանքների հիմնական արդյունքները, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, գեկուցումների թեզեր, Եր., 1985, էջ 43-44:

1983-1984թթ. Դվինի պեղումները դարձյալ միտված էին քաղաքաշնության, հնավայրի շերտագրության վերաբերյալ խնդիրների բացահայտմանը: Կենտրոնական թաղամասում հատակեցվել են V դ. կաթողիկոսի պալատին կից շինությունների գործառութային նշանակությունը և կապը պալատի հետ: Բացվել են կրակապաշտական մեհյանի հյուսիսային պատի որոշ հատվածներ: Չարոնակվել են Հարավային բուրգի, Միջնաբերդի արևմտյան շրջանի պեղումները, որտեղ կան հետաքրքիր կառուցների մնացորդներ, հնագիտական նյութեր: Քաղաքի արևմտյան թաղամասերից մեկում բացվել է թղթման հնոց, որը կարևոր է խեցեգործական արտադրանքի ընթացքը պարզեցնելու համար: Հետախուզական պեղումներ են իրականացվել Տիկնունի ամրոցում, որտեղ հայտնաբերված նյութերը հիմնականում թվագրվում են XIII-XIV դդ.:

62. К характеристике новооткрытых гражданских сооружений города Двина. IV международный симпозиум по армянскому искусству, тезисы докладов, Ер., 1985, стр. 140-141 (соавтор: К. Кафадарян).

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը հայկական վաղքրիստոնեական ճարտարապետության ճևավորման կարևոր կենտրոններից է: Պեղումներով բացված V դ. կաթողիկոսական պալատն էական փոփոխությունների է ենթարկվել VI դ.: Արևմտյան հատվածում կառուցվել է կրակապաշտական տաճար, որը կործանվել է 572 թ. պարսից պետության դեմ հայերի ապստամբության հետևանքով: Միջնաբերդի հարավային հատվածում պեղվել է հասարակական նշանակության մեծ շինություն, որի պատերի պահպանված բարձրությունը հասնում է 7 մ-ի: Ըստ շերտագրական պատկերի՝ այն հիմնադրվել է V-VI դդ. և ունեցել վերակառուցման երեք հիմնական շրջան: Վերջնականապես ավերվել է X-XI դդ.: Քաղաքի XII-XIII դդ. ճարտարապետական և սոցիալ-տնտեսական կերպարի մասին որոշակի նյութեր են տալիս Միջնաբերդի արևմտյան հատվածի պեղումները: Այստեղ պեղվել է արհեստավորական մի ամբողջ քաղամաս:

1986

63. Դվինի 1981-1982թթ. պեղումների հիմնական արդյունքները, ԼՀԳ, Եր., 1986, №3, էջ 87-95:

Հողվածը նվիրված է Դվինի երկու տարվա պեղումների արդյունքներին, որոնց նպատակն էր հստակեցնել քաղաքի շերտագրական պատկերը, հետևողուններ անել հեղենսհստական շրջանի բնակավայրի և վաղմիջնադարյան մշակույթի տարրեր խնդիրների վերաբերյալ: Կենտրոնական թաղամասում պեղումները կենտրոնացվել էին V դ. կաթողիկոսական պալատի արևմտյան և հարավային հատվածներում: Այստեղ դեռևս 1980 թ. բացվել էր կրակապաշտական տաճար՝ ատրուշանի մսացորդներով: Շարոնակվել են նաև Ստորին քերդի արևմտյան հատվածի առևտրաարհեստավորական թաղամասի պեղումները: Բացվել են բնակելի և տնտեսական համալիրներ՝ թոնիքներով և օջախներով, հարուստ հնագիտական նյութերով: Ստորին քերդի պեղումները փաստում են, որ մոնղոլների կողմից քաղաքի ավերումից հետո այստեղ կյանքը մի քանի տասնամյակ ևս շարունակվել է: Քաղաքը պատմության ասպարեզից վերջնականապես դուրս է եկել XIII դ. 50-60-ականներին: Այս հատվածի պեղումները խիստ կարևոր են քաղաքաշինության ու միջնադարյան բնակելի տների ճարտարապետական տարրեր հարցերի ուսումնասիրության առումով: Բյրի գագաթին աշխատանքները վերսկավել են 1981-1982 թթ., բացվել է V-VI դդ. թվագրվող մի շինություն՝ զոյց խարիսխներով: Անմիջապես այս շերտի տակ բացվել է անտիկ շերտը՝ խեցենեսի բազմազան տեսականիով և պատերի մսացորդներով:

1987

64. Դվինի 1983-1984թթ. պեղումների հիմնական արդյունքները, ՊԲՀ, Եր., 1987, №1, էջ 136-146:

1983-1984 թթ. պեղումները Կենտրոնական թաղամասում շարունակվել են արդեն շուրջ 15 տարի պեղվող V դ. պալատական շինության տարածքում: Պալատի երեք կողմանում պեղվել են կավակերտ շինություններ, որոնք ավերվել են 893 թ. երկրաշրժից: Հետագայում այս տարածքը կրկին կառուցապատվել է: Պեղումները վեր են հանում ճարտարապետական խճողված պատկեր, ինչը նժվարացրել է հա-

տակագծային հստակ պատկերի ուրվագծումը: Գտածոներից ուշագրավ է բյուզանդական բրոնզե կշռաքարը՝ լատիներեն մակագրությամբ: Միջնաբերդի գագաթի և ստորոտի պեղումները տալիս են XII-XIII դդ. հարուստ նյութ: Աշխատանքները շարունակվել են նաև Հարավային Անձ բուրգի շրջանում: Պարզվել է, որ այստեղ պեղվող մոնումենտալ մեծ շինության հիմքերը դրվել են մ.թ.ա. 1-ին հազարամյակի շերտում: Ակսած վաղ միջնադարից (V-VI դդ.)՝ այս պարսպապատը բազմից վերանորոգվել և հավանաբար ավերվել է XI դ.:

1983-1984 թթ. Դվինի արշավախոսմբը հետախուզական պեղումներ է կատարել մոտակա Տիկնունի ամրոցում:

65. Դվինի 1985-1986 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, գեկուցումների թեզեր, Եր., 1987, էջ 57-58:

Դվինում աշխատանքները շարունակվել են նախորդ տարիներից պեղվող հատվածներում: Կենտրոնական թաղամասում որոշակիացել է IX դ. շերտագրությունն իր ճարտարապետությամբ և հնագիտական գտածոներով: Ստորին քերդում պեղումները շարունակվել են XII-XI-II դդ. թվագրվող խանդակի կառույցներում: Ստուգողական պեղումներ են իրականացվել Միջնաբերդի՝ IV դ. թվագրվող եռանավ մեծ շինության տարածքում: Հարավային բուրգի շրջանում պեղումները կենտրոնացվել են մոնումենտալ շինության ներսի հատվածում:

66. Եռանավ եկեղեցու պեղումները Դվինի Միջնաբերդում 1985 թ., Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, գեկուցումների թեզեր, Եր., 1987, էջ 59-60 (հեղինակակից՝ Կ. Ղաֆաղարյան):

1961-1962 թթ. Դվինի Միջնաբերդում բացված եռանավ շինության մասցորդները մասնագիտական գրականության մեջ մտել են որպես Արշակունի թագավորների գահանիստ դահլիճ:

1985 թ. շինության մանրամասն քննությունը պարզեց, որ այն բաղիկ եկեղեցիների վաղագույն օրինակներից է, հայ-սիրիական ճարտարապետական առնչությունների արդյունք: Կենտրոնական զահավորակները լայնորեն տարածված են վաղքրիստոնեական աս-

բական բազիլիկներում: Ըստ շերտագրական դիտարկումների՝ եկեղեցին կառուցվել է IV դ. 30-ական թթ., վերակառուցվել է V-VI դդ. և վերջնականապես ավերվել արարական արշավանքների ժամանակ:

1988

**67. Ошакан 1. Основные результаты раскопок 1971-1983 гг., АРА 18, Ер., 1988, изд. АН АССР, 131 стр.
(соавторы: С. Есаян, А. Карапетян).**

Աշխատությունը վերաբերում է Օշականի Դիդի կոնդ ամրոցի տարածքում 1971-1983 թթ. կատարած պեղումներին:

Առաջին գլխում ներկայացված են բյրի գագաթին բացված տուֆի խոշոր քարերով շարված, քառանկյունի հատակագծով, որմանակեցերի վրա դրված ուղղանկյուն աշտարակներով պարիսապներ ունեցող ամրոցի հյուսիսային, արևելյան և արևմտյան պարսպապատերը, արևելյան բակը, կենտրոնական փոքրիկ կացարաններն ու տաճարը: Հուշարձանի ներսում հյուսիսից հարավ անցնող պատով ամրոցը բաժանված է երկու թևի: Արևելյան կողմում մեծ սրահն է, հարավում՝ սենյակների շարքը, որոնք ունեցել են նկուղային հարկարաժիններ: Ամրոցն իր հատակագծային, ծավալատարածական լուծումներով և հնագիտական նյութի հիման վրա թվագրվում է մ.թ.ա. VII-VI դդ.: Բացվել են նաև միջնադարյան շինություններ, որոնք հիմնադրել են Ամատունի նախարարները: Բյրի ամենաբարձր կետում պահպանվել են ուղղանկյուն խորանով, միանավ փոքրիկ մատուի մասցորդները: Շրջակայրում թափված թևավոր խաչերի բեկորները, ծածկի կղմինդրը և կառույցի արևմտյան մասում հայտնաբերված թաղումները վերաբերում են IV-VIII դդ.: Աշխատության երկրորդ գլխում վերաբերում է Դիդի կոնդում բացված ուրարտական կառույցներին: Դրանք հինգ համալիրներից բաղկացած պալատական շինություններ են՝ աղոթարաններ, տաճարներ և պաշտամոնքային այլ կառույցներ: Սրանքները պյունազարդ են, հարթ ծածկով, լուսավորվել են երդիկների տակ տեղադրված փոքր պատուհաններից: Հատակը սալապատ է կամ հարթեցված հրաբխային խարամով: Ուրարտական պալատական շինությունները գոյատևել են մինչև մ.թ.ա. VI դ. սկիզբը: Երրորդ գլխում ներկայացված են անտիկ շրջանի դամբարանները: Դիդի կոնդի հյուսիսային լանջի փոքր բյրի

Վրա Օշականի անտիկ շրջանի Միջնաբերդն է՝ հիմնարկված մ.թ.ա. IV-III դդ.: Չորրորդ գլուխը վերաբերում է ուրարտական շրջանի դամբարաններին: Առանձին քննության են ենթարկվել տեղական և ներմուծված հայսնապակե անոթները, տարբեր տեսակի զենքերն ու զարդերը, խմբակային թաղումները, քարե կոտրերն ու ֆալոսները: Հինգերրորդ գլուխը քննարկվում է բրոնզ-վաղերկաթեղարյան դամբարաններից հայտնաբերված նյութը, որն անմիջապես աղերսվում է վաղուրարտական IX-VIII դդ. նյութերի հետ: Գրքում առանձին հավելվածով ներկայացված է Ա. Կանեցյանի «Օշականի ուրարտական կառուցների ճարտարապետությունը» բաժինը:

**68. Торговые связи средневековой Армении в VI-VIII вв.
(по данным стеклоделия), АРА 14. Средневековые
памятники, вып. VI, Ер., 1988 (соавтор: Р. Джанполадян).**

Միջնադարյան Հայաստանում ապակու հումքի բնական պաշարների շնորհիվ մշակվել են ապակու ստացման տեղական եղանակներ ու բաղադրատումներ՝ միաժամանակ հաղորդակցվելով հարևան երկրների (Առաջավոր Ասիա) ապակեգործական խոշոր կենտրոնների հարուստ փորձին, ձեռքբերումներին ու նորամուծություններին: Գտնվելով Արևմուտքն Արևելքին կապող առևտրական բանուկ ճանապարհների հանգուցակետում՝ Հայաստանն այդ ուղիներով կապվում էր ժամանակի առևտրաարհեստագործական և մշակութային խոշոր կենտրոնների հետ: Հեղինակները, նկատի ունենալով այս կարևոր հանգամանքը, փորձել են տալ միջնադարյան Հայաստանի տեղն ու դերն այդ ասպարեզում: Գործող առևտրական ուղիների վերաբերյալ տեղեկությունները մեզ են հասել Անանիա Շիրակացու «Միջնաչափիք» շնորհիվ: Հյուսիսային ճանապարհը Դվինից Պարտավի և Դերբեսդի վրայով ձգվում էր Արևելյան Եվրոպա: Արևելյան ճանապարհը Փայտակարանով դուրս էր գալիս Կասպից ծով ու Միջին Ասիա: Հիշյալ ճանապարհներից ամենակարևորը, անշուշտ, Արարսի հովտով անցնող «Արքունի ճանապարհն» էր, որը Պարսկաստանից Աստրապատական մայրուղով մտնում էր Հայաստան, ապա Նախճական, Դվին և Կարին քաղաքներով հասնում Փոսա դուն, այնտեղից էլ հոնաց աշխարհ՝ Բյուզանդիա: Այս քարավանային ուղի-

ներով Դվինը կապվում էր Պարսից ծոցի և աֆրիկյան խոշոր առևտրարիենտագործական կենտրոնների հետ: Ժամանակի երկու հզոր պետությունների՝ Սասանյան Իրանի և Բյուզանդիայի համար Հայաստանը ոչ միայն շուկա էր, այլև ապրանքափոխանակության կենտրոն: Արաբների ենթակայությանն անցնելուց հետո Հայաստանը առևտրական ուղիներով ձգվում էր դեպի արարական աշխարհ: Դրա փաստացի վկայությունն է VIII դ. քաղաքում գործող դրամահատարանը, որտեղ կտրվել են օմմայան դիրիեմսներ և ֆելսեր:

Դվինի ապակու հարուստ հավաքածուն բազմազանության շորհիվ մշտապես գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Աշխատությունն ունի համառոտ տեսական մաս՝ նվիրված միջնադարյան Հայաստանի VI-XIII դդ. առևտրական ճանապարհներին ու կապերին, քարտագրացուցակ, որտեղ յուրաքանչյուր առարկա ամենայն բժախնդրությամբ ներկայացված է իր բնորոշ հատկանիշներով, նկարագրական տվյալներով, թվագրությամբ ու համարելի գուգահեռներով: Լուծվել են նաև ծագումնաբանական խնդիրները: Դրսեկ լինելու դեպքում տրված է որոշակի վայրի անվանումը, որտեղից այն ներմուծվել է: Աշխատությունն ունի լուսանկարների և օգտագործած գրականության հարուստ ցանկեր: Գրված է երեք լեզվով՝ հայերեն, ուսւերեն, անգլերեն: Որպես առևտրական կապերի արզասիք՝ այս աշխատությունը լուրջ ներդրում է հայ հնագիտության մեջ:

69. Основные итоги раскопок города Двина, Кавказ и Византия, №6, Ер., 1988, стр. 253-267.

Հակիմ Ներկայացված են 1987-1988 թթ. Դվին քաղաքի պետրումները: Հեղինակն անդրադարձել է Դվինի ճարտարապետական կարևոր նշանակություն ունեցող հուշարձաններին, հնագիտական նյութին, շերտագրությանը և քաղաքի պատմությանը: Խեցեգործական և ապակեգործական արտադրանքը ներկայացված է մերձավորաբնեյան ու միջինասիական հնավայրերից հայտնի նյութերի համեմատությամբ:

70. Դարձյալ Դվինի հիմնադրման մասին, ԼՀԳ, Եր., 1988, №1, էջ 63-70:

Հեղինակը քննադատում է Ժ. Խաչատրյանի «Հելենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամույն վայրի և Դվին

քաղաքի հիմնադրման մասին» հոդվածը՝ հրատարակված ԼՀԳ ամսագրի 1982թ. երկրորդ համարում: Հենվելով պատմական աղբյուրների և պատմաշխարհագրական առավել ստույգ փաստերի վրա (օրինակ՝ գետի հունի փոփոխությունները կամ դրանց տեղադրությունը), նա հստակեցրել է Տիր աստծո տաճարի տեղի հարցը: Նա հիմնավորում է, որ Տիրի տաճարը կառուցվել է Մեծամոր գետի ձախ ափին՝ Արտաշատ-Վաղարշապատ մայրուղու կողքին, իսկ վերջինս, տեղագրական առանձնահատկություններից ենթերվ, չեր կարող հեռու գտնվել Դվինից: Ա.Քալանթարյանն անստույգ է համարում հոդվածագրի այն պնդումները, որ Դվինն «աննշան բնակավայր էր» և «Խոսրով Կոտակի կողմից չիմնադրվեց որպես մայրաքաղաք»: Հղելով հայ պատմիչներին և հենվելով հնագիտական նյութի վրա՝ նա կասկածից վեր է դնում այն իրողությունը, որ Դվինը՝ որպես քաղաք և մայրաքաղաք, հիմնադրվել է IV դ. 30-ական թթ. և, աստիճանաբար մեծանալով, V դ. առաջին կեսից դարձել է վարչաքաղաքական ու տնտեսական խոշոր կենտրոն:

71. Le palais du VIIe siecle de Dvin, Atti del quinto simposio internazionale di arte Armena, San Lazzaro-Venezia, 1988, p. 215-221.

Միջազգային գիտաժողովում ներկայացվել է Միջնադարյան Դվին քաղաքի պատմությունը: Այն էական նշանակություն է ունեցել հայ միջնադարյան հոգևոր և աշխարհիկ ճարտարապետության ձևավորման գործում: Հատկապես կարևոր է Դվինում V և VII դդ. կաթողիկոսական պալատների ուսումնասիրությունը: Առաջինը գտնվում է Կայողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք, իսկ երկրորդը՝ եկեղեցու հյուսիսային կողմում: VII դ. պալատը հայտնաբերվել է 1937-1939 թթ.: Այն կենտրոնական սյունասրահով կառույց է, որին կցված են տնտեսական ու բնակելի սենյակներ: Հատակագծային առումով պալատը դարերի ընթացքում որոշակի փոփոխություններ է կրել, իսկ X դ. վերածվել մզկիթի: Միջնադարյան պալատների հատակագծային և ծավալատարածական կերպարը որոշ շեղումներով ժողովրդական բնակելի շինությունների կառուցվածքում պահպանվում է մինչև XIX դ.:

**72. Древнее стекло Армении. Труды межд. конгресса по стеклу. Археометрия, Л., 1989, стр. 33-39
(соавторы: Р. Джанполадян, К. Костанян).**

Հոդվածում ներկայացված են հայ ապակեգործության հիմնական փուլերը՝ ուրարտական ժամանակներից մինչև միջնադար: Հեղինակներն անդրադարձում են միջնադարյան ապակեգործության հիմնական ուղղություններին, մատնանշում տեխնոլոգիական առանձնահատկությունները: Ուշագրավ են ապակեգործական նյութի քիմիական վերլուծությունները, որոնք հնարավորություն են տալիս ճանաչելու տեղական հումքի քիմիական բաղադրությունը, ապակու մշակման մեթոդները: Ասիից ու Դվինից հայտնաբերված ապակյա հարուստ արտադրանքը տեխնիկական ու գեղարվեստական առնչություններ ունի մերձավորաբեկյան տարածաշրջանի երկրների հետ:

**73. Պեղումներ Դվինի 7-րդ դ. կաթողիկոսարանի և 5-րդ դ. միանավ բազիլիկի տարածում, 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նատաշրջան, Եր., 1989, էջ 65-67
(հեղինակակից՝ Կ. Ղաֆադարյան):**

Կաթողիկոսարանի և միանավ բազիլիկի պեղումները կրկին անդրադարձում են այս շինությունների թվագրության ու ճարտարապետության հարցերին: 1948 թ. ընդհատված պեղումների վերսկսումը նպատակ ուներ հիմնավորելու այն, որ Կաթողիկե եկեղեցուց հյուսիս գտնվող պալատը ոչ թե V դ. կառույց է, ինչպես համարում են մի շարք մասնագետներ, այլ VII դ.: Դրա օգտին են խոսում պալատի հատակագծային հորինվածքը (խաչաձև, ոչ թե ուղղանկյուն) և տեղում գտնված հնագիտական նյութը: VII դ. պալատը ենթարկվում է շինարարական փոփոխությունների՝ չորս անկյուններից յուրաքանչյորում առանձնացվում են մեկական սենյակներ: 894 թ. երկրաշրջից հետո, երբ կաթողիկոսը հեռանում է Դվինից, այս վերածվում է մզկիթի:

Վդ. բազիլիկի պեղումներից պարզ դարձավ, որ նրա հյուսիսարևելյան հատվածում եղել է ոչ թե բաց սրահ, այլ բաց խորան: Ծենքը կառուցվել է հեթանոսական պաշտամոնքային կառույցի տեղում և համարվում է Դվինի վաղ մոնումենտալ շինություններից մեկը:

**74. Դվինի արշավախսմբի պեղումների հիմնական
արդյունքները, 1987-1988 թթ. դաշտային հնագիտական
աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական
նստաշրջան, Եր., 1989, էջ 82-83:**

Քաղաքի Միջնաբերդում պեղումները վեր են հանել շերտագրական հետաքրքիր պատկեր: Բացվել է մ.թ.ա. II – մ.թ. I դդ. հեղենիստական շերտը, որը հստակ սահմանազատվում է վաղմիջնադարյան շերտից: Սրա վերին հորիզոններում նկատվում են 640-ական թթ. արաբական արշավանքների ժամանակ տեղի ունեցած հրդեհի հետքերը: Նոյն այդ շերտում բացվել է 17 մ խորությամբ հոր-գաղտնաբան՝ լցված բազիլիկ ենեղեցու ծածկի կղմինդրներով: Ի տարբերություն սրա՝ Միջնաբերդի գագաթի արևմտյան հատվածում վաղմիջնադարյան շերտ գոյություն չունի. այն բնակեցվել է 894թ. երկրաշարժից հետո, իսկ X-XI դդ. շինությունները նստած են անմիջապես մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբի շերտի վրա: Պեղումները շարունակվել են նաև հարավային պարսպի մեջ բուրգի և Կենտրոնական թաղամասի պեղավայրերում: Դրանք կարևոր նշանակություն ունեցան ժամանակագրական, շերտագրական մի շարք հարցերի պատասխաններու համար:

1990

75. Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ժամանակագրության որոշ հարցեր, ՊԲՀ, Եր., 1990, №1, էջ 139-151 (հեղինակակից՝ Կ. Ղափաղարյան):

Միջնադարյան Հայաստանի քաղաքական ու մշակութային խոչըն կենտրոն Դվինը կարևոր դեր է խաղացել հայ աշխարհիկ և հոգևոր ճարտարապետության զարգացման գործում: Գրավոր աղբյուրների տվյալների համադրմամբ հնագիտական պեղումները հնարավորություն են ընձեռում որոշակի ճշգրտումներ կատարելու քաղաքի ճարտարապետական հայտնի հուշարձանների թվագրության հարցում: Հողվածում մանրամասն անդրադարձ է կատարվել Կաթողիկե տաճարի և միանավ ենեղեցու կառուցման ու վերակառուցման փուլերին: 1985թ. Միջնաբերդի գագաթի «Արշակոնյաց գահանիստ դահլիճ» անվանվող կառույցի մանրամասն քննությունից պարզվել է, որ

այն պաշտամունքային կառույց է և եռանավ քաղիլիկ եկեղեցիների վաղագոյն օրինակներից: Ճշգրտված են նաև Դվինի V և VII դդ. թվագրվող պալատների կառուցման ժամանակն ու վերակառուցման փուլերը:

1991

**76. Դվինի 1989-1990 թթ. պեղումների հիմնական
արդյունքները, ՀՀ 1989-1990 թթ. դաշտային հնագիտական
աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական
նստաշրջան, Եր., 1991, էջ 100-101:**

Պեղումները շարունակվել են Դվինի կենտրոնական թաղամասում և Միջնաբերդում: Աշխատանքները կենտրոնացվել են արևելյան հատվածում, որտեղ բացվել են անտիկ շինությունների մսացորդներ: Պեղվել են նաև Միջնաբերդի վերին պարսպի մի մասը որմանահեցով, որով ևս մեկ անգամ փաստվում է Միջնաբերդի՝ պաշտպանական երկու գոտի ունենալու հանգամանքը: Հյուսիսարևմտյան հատվածում ճշգրտվել են միջնադարյան շինությունների ճարտարապետական կերպարները, որոշակիացվել՝ միջնադարյան և անտիկ դարաշրջանների շերտերը: Հարավային բուրգի շրջանում շարունակվել են մոնումենտալ շինության պեղումները: Կենտրոնական թաղամասում բացվել են կրակապաշտական տաճարի որոշ հատվածներ: Այստեղ պեղվել է նվուզային սենյակ, ուր տանում են ութ աղյուսաշար աստիճանները: Այս կառույցը մեծ հետաքրքրություն է առաջացրել, և հետագա պեղումներով կհստակեցվեն դրա գործառութային նշանակությունն ու կապը տաճարի հետ:

**77. Le palais du VII siecle de Dvin, Atti dil quinto Simposio
Interdi Arte Armene -1988, Venezia - S. Lazzaro, 1992,
p. 215-224.**

Միջազգային գիտաժողովում ներկայացվել է Դվին քաղաքի պատմությունը, որն էական նշանակություն է ունեցել միջնադարյան հայ հոգևոր և աշխարհիկ ճարտարապետության ձևավորման գործում: Հատկապես կարևոր է Դվինում հայտնաբերված V և VII դդ. կաթողիկոսական պալատների ուսումնասիրությունը: Առաջինը Կաթողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք է, իսկ երկրորդը գտնվում է եկե-

դեցու հյուսիսային կողմում: VII դ. պալատը հայտնաբերվել է 1937-1939 թթ. պեղումների ժամանակ: Այն կենտրոնական սյունարահով կառույց է, որին կցված են տնտեսական ու բնակելի սենյակներ: Հատակագծային առումով պալատը դարերի ընթացքում որոշակի փոփոխություններ է կրել, իսկ Խ.՝ Վերածվել մօլիթի: Միջնադարյան պալատների հատակագծային ու ծավալատարածական կերպարը ժողովրդական բնակելի շինությունների կառուցվածքում որոշ շեղումներով պահպանվում է մինչև XIX դ.:

1992

78. Armenische und Sasanidische Bautätigkeit in Dvin, Archaeologische Mitteilungen aus Iran, Band 25, Berlin, 1992, p. 219-232 (co-author : N. Hagopian, A. Djamgocian, K. Ghafadarian).

Հոդվածում ամփոփված է վաղմիջնադարյան (V-VII դդ.) Դվինի երկու հատվածների մշակութային ու շինարարական պատկերը: 1970 թ. սկսած Սք Գրիգոր տաճարի հարավարևմտյան մասում իրականացված պեղումների շնորհիվ բացահայտվեցին Դվինի V դ. կառուցված կաթողիկոսական պալատի ավերակները: Այն մարզանական ժամանակաշրջանում դարձել էր մարզպանի նստոցը՝ կից կրակի տաճարով: VII դ. Կաթողիկեի հյուսիսարևելյան հատվածում կառուցվում է կաթողիկոսական երկրորդ պալատը, որի մտահղացումը պայմանավորված էր հայ եկեղեցու կանոնիկ սկզբունքներով, երբ արգելվում էր նախորդ պալատի սրբապետված տարածքում կաթողիկոսարանի վերականգնումը:

Վաղմիջնադարյան հաջորդ շինությունը հնավայրի Միջնաբերդի հարավային տարածքում՝ պարսպի բուրգերից մեջի հարևանությամբ բացված մեծ շինության բացահայտումն էր, որը ծավալատարածական չափերով և հայտնաբերված նյութական մշակույթի մասցորդներով V-VII դդ. կառույց է: Մի քանի վերանորոգումներ կրած կառույցի պատկերը ներկայացված է շերտագրական այն կտրվածքով, որն իրականացվել է շինության արևելյան պատին կից գտնվող տարածքի պեղումներով: Հոդվածն ուղեկցվում է հարուստ գծանկարներով, լուսանկարներով ու ճարտարապետական գծագրերով:

79. Les Données des Sources médiévales arméniennes sur la Macédoine, "Byzantinh Makedonia" (324-1430), Thessalonike, 1995. p.143-148.

«Բյուզանդական Մակեդոնիա (324-1430)» խորագրով գիտաժողովում կարդացած զեկուցումը Նվիլրված է Մակեդոնիայի մասին հայկական սկզբնադրյուրներում արծարծված հաղորդումներին: Առաջին անդրադարձը Ստրարոնից հասած հնավանդ տեսությունն է, որի համաձայն մ.թ.ա. XIII դ. փոռվագիշները, Փոքր Ասիայից շարժվելով, հաստատվել են Հայաստանում:

Հետինսակը կարևորել է նաև հայ մատենագրության էջերում հունական աղբյուրներից քաղված թարգմանությունները, հայկական միջավայրում Ալեքսանդր Մակեդոնացու մասին տարածված քանակություններով վեր հանել հայ-մակեդոնական քաղաքական հիշատակությունները: Մար Արաս Կատինայի պատմությունից քաղված մի հատվածում Մովսես Խորենացին հիշատակում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին Նինվեի արխիվներից խալրական մի ձեռագիր է թարգմանել տվել հունարեն: Մովսես Խորենացին, ավելի ոչ նաև Սամվել Անեցին իրենց պատմության էջերում թողել են մակեդոնական 23 թագավորների անուններ, որոնք նախորդել են Ալեքսանդր Մակեդոնացուն: Ցուցակի համաձայն՝ այն սկսվել է Կարանիսով և ավարտվել Ֆիլիպով:

Մովսես Կաղանկատվացու պատմության էջերից Ա.Քալանթարյանն առանձնացրել է Իլիոն քաղաքի և Թեսալոնիկի միջև տեղի ունեցած ընդհարումը, որն ավարտվել է իլիոնացիների հաղթանակով: Նոյն սկզբնադրյուրից նա ներկայացրել է մակեդոնացիների ծագման առեղծվածը, համաձայն որի վերջիններս սերվել են Հարեթի որդի Քիթումից: Երևանի Սատենադարանում պահվում է Ալեքսանդր Մակեդոնացուն վերաբերող 20 ձեռագիր: Սատենադարանի ֆոնդերում կան ձեռագրեր, որոնցում հիշատակվում են Դիոկղետիանոս և Մաքսիմիլիանոս կայսրերի ժամանակ քրիստոնեության համար նահատակված մակեդոնացի սրբերի՝ Ազապեկի, Էրինեի, Շիռնեի, Թեոդոլինեի, Վասսայի, Իրենի և այլոց անունները: Հոդվածում Ասողիկից, Արիստակես Լաստիվերցոց և ուրիշներից ուշագրավ վկայություններ են քերված Ալեքսանդր Մակեդոնացու վերաբերյալ: Իսկ հայկական կանոնա-

գրում և Վարդան Բարձրաքերդցու մոտ արձանագրված են Քաղկեդոնի ժողովին մասնակցություն բերած մակեդոնացի մետրոպոլիտ Սելյանի և Լուկասի անունները: Հիմսվելով հայկական սկզբնադրյութների, ձեռագրերի, ավանդագրույցների արձանագրած հարուստ տվյալների վրա՝ Ա. Քալանթարյանը ներկայացրել է հայ-մակեդոնական պատմամշակութային առնչությունները հնագոյն ժամանակներից մինչև XV-XVI դդ.:

1993

80. Հնագիտական հուշարձանները և նրանց պահպանության վիճակը, Հուշարձան, Բ., Եր., 1993, էջ 10-13 (հեղինակակից՝ Վ. Հարությունյան):

1980-ական թթ. հուշարձանների պետական մակարդակով պահպանության խնդիրը հրամայական է դարձնում նյութական մշակույթի պահպանման գիտահետազոտական նոր նախագծերի, նոր մոտեցումների մշակումը, վարչաօրենսդրական համակարգի բարեփոխումները: Այդ նպատակով ստեղծված ենթակառուցվածքային մարմիններն ու գիտական խմբերը փորձում են լուծել հուշարձանների պահպանության, ամրակայման, պեղման և ուսումնասիրության օրակարգային հարցերը: Զգալի արդյունքներին զուգահեռ՝ այս բնագավառում շատ հարցեր դեռևս պետական հոգածության, մասնագետի հետազոտողների և հասարակության լայն շերտերի ուշադրության ու խնամքի կարիքն ունեն:

1994

81. Հրայա Աճայանը հնագետ. Հր. Աճայանին նվիրված միջազգային գիտաժողով, Եր., 1994, էջ 47:

Սանկտ Պետերբուրգի պետական արխիվներից մեկում պահպանվող ակադեմիկոս Ն. Մատի հնագիտական օրագրում տեղեկություններ կան Դվինի քաղաքի պետրուսներին Հ. Աճայանի մասնակցության մասին: Վերջինս ներկա է գտնվել նաև Էջմիածնում իրականացվող հետազոտական աշխատանքներին դարձյալ Ն. Մատի արշավախմբի կազմում: Զեկույցը նվիրված է նշված պեղումներին Հ. Աճայանի մասնակցության վերաբերյալ փաստաթղթի հրապարակմանը:

82. Նոր տվյալներ Դվինի Սր Գրիգոր կաթողիկե եկեղեցու վերաբերյալ, 1991-1992թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1994, էջ 46-48 (հեղինակակիցներ՝ Կ. Ղաֆարարյան, Ն. Հակոբյան, Գ. Քոչարյան, Մ. Պետրոսյան, Ա. Հակոբյան):

Դվինի Կենտրոնական թաղամասում գտնվող Սր Գրիգոր եկեղեցու ամրակայման առիթով 1992թ. հետախուզական աշխատանքներ են իրականացվել կառուցի հիմքերի հատվածում՝ հետաքրքիր նյութերը ընձեռվելով եկեղեցու հատակագծային ու ծալվալատարական հարցերի նորովի մեջնարանման համար: Արդյունքում բացվել է հետաքրքիր պատկեր, ըստ որի վաղ բազիկի եկեղեցու հիմքերը հյուսիսային և հարավային պատերի արևելյան հատվածներում, ինչպես նաև ավագ խորանի հարավային ու հյուսիսային մասերում ընդհատված էին: Հստակ էր, որ դրանք ոչ թե բանդված էին, այլ հարթեցված, որի նպատակը դեռ պարզ չէր: Պարզվեց նաև, որ եկեղեցու նախնական շինության հիմքի բոլոր քարերը երկրորդական օգտագործման են: Հետևաբար՝ եզրակացություն արվեց, որ Կաթողիկե եկեղեցու տեղում կամ մոտակայքում գոյություն է ունեցել անտիկ շրջանի ինչ-որ մոնումենտալ կառույց, որի քարերը, հավանաբար այդ շինության ավերումից հետո, օգտագործվել են բազիկի շինարարության ժամանակ:

1995

83. Դվինի ուսումնասիրության պատմությունից, ՊԲՀ, Եր., 1995, №2, էջ 195-204:

XIIIդ. կեսերին՝ պատմության ասպարեզից դուրս գալուց հետո, Դվին քաղաքը երկար ժամանակ մոռացության է մատնվում: Դա տևում է մինչև XVII դ., երբ օտարերկրյա ճանապարհորդների և հայ հեղինակների աշխատանքներում հանդիպում են հիշատակումներ Դվինի ավերակների մասին: Հողվածում մանրամասն տրված են Դվինի մասին առաջին ճանապարհորդների տեղեկությունները, որոնցում նրանք փորձել են տալ նաև քաղաքի քարտեզը և հատակագիծը: Ներկայացված է Դվինի ավերակների առաջին պեղումների պատմությունը, որն սկսվում է դեռևս 1850թ. Կովկասի փոխարքայի դիվանատան աշխատակից Տոկարևի կողմից: 1899թ. Դվինում կարճատև պեղումներ է կատարել Ն. Մառը: Հետաքրքիր է, որ այս պե-

դումսերին մասնակցել է նաև Հ. Աճայանը՝ իր ձեռքով կազմելով Միջնարերդի հանույթը: 1907-1908 թթ. Դվինում պեղումներ է կատարել Խաչիկ Դադյանը, իսկ 1908 թ.՝ Բագրատ Խալաթյանը: Դվինի երկարատև գիտական պեղումները սկսվում են 1937 թ.:

**84. Դվինի գլանաձև պատվանդանները, հանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին, գեկուցումների թեզեր, Եր., 1995, էջ 94-97
(հեղինակակից՝ Ա. Փիլիպոսյան):**

Ներկայացված են Դվինի վաղերկաթեղարյան սրբարաններից մեկում 1970 թ. հայտնարերված գլանաձև երկու անոթները, որոնք գրականության մեջ հայտնի են հենակ, պատվանդան, հիմք, տակդիր, հրաբորքոք, բուրանոթ, զոհասեղան, զոհարան և այլ անոններով: Դրանք իրենց զուգահեռներն ունեն Հին Արևելքի և Միջերկրականի ավագանի հուշարձաններում: Վերոհիշյալ անոթներն օգտագործվել են որպես խնձարկման անոթներ, ենթադրաբար կիրառվել են նաև սրբազն հեղման արարողությունների ժամանակ:

1996

85. Dvin. Histoire et Archeologie de la ville Medievale, Civilisations du proche-orient, hors serie, volume 2, Paris, 1996, 192 p.

Աշխատության աղբյուրագիտական հենքը հնագիտական պեղումներն ու մատենագրական վավերագրերն են, որոնք նպաստում են քաղաքի պատմության անհայտ ու քիչ հետազոտված խնդիրների լուսաբանմանը: Հայ և օտար աղբյուրների հաղորդումների հիման վրա Դվինի հազարամյա պատմությունը պարբերացված է ժամանակագրական հետևյալ փուլերով՝ IV-VII, VII-IX, IX-XI և XII-XIII դդ.:

Շարադրանքում գիտական աշխարհին ներկայացվում են Դվին քաղաքի ճարտարապետությունը, շերտագրությունը, դրամաշրջանառությունը, կնիքագործությունը և քաղաքային գրադմոնքը՝ մետաղամշակությունը, խեցեգործությունը, ապակեգործությունը: 1937 թ. բացված ու գիտական աշխարհում վիճահարուց կարողիկուսական պալատի հարցը (V թե VII դ. պատկանելությունը) լուծվեց եռանակ բազիլիկայի արևմտյան հատվածում բացված հսկայածավալ դահլիճի հետակայացում հատվածում բացված հսկայածավալ դահլիճի հետակայացում:

զոտության շնորհիվ: Պատմական հավաստի աղբյուրների համադրումով հեղինակն ապացուցում է, որ այդ ավերակները պատկանում են V դ. կաթողիկոսարանին, որը քաղաքական իրադարձությունների հետևանքով հետազայում վերածվում է մարզպանի նստոցի: Քաղաքի շերտագրությունը տրվում է 1973 թ. սկսած ինչպես Միջնաբերդի, այնպես էլ Կենտրոնական թաղամասի պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութի հիման վրա:

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բազմազան կողմերը ներկայացնելու իմաստով աղբյուրագիտական բացառիկ արժեք ունեն կնքադրումները, որոնք Դվինում հայտնաբերվել են Միջնաբերդի ժամանակագրական որոշակի հորիզոններից (V-VII դդ.): Թեման ուսումնասիրվել է բոլոր առումներով՝ հնագետի, պատմաբանի և արվեստագետի բարեխիդճ մոտեցմամբ ու գիտական բարձր մակարդակով: Դվինի բնակչության հիմնական գրադարանները (մետաղամշակություն, խեցեգործություն, ապակեգործություն) ներկայացվել են համապատասխան գլուխներում, ժամանակագրական սանդղակով, որտեղ առանձնացված է տեղական ու ներմուծված արտադրանքը:

Հայ մշակույթի զարգացման օրինաչափություններն ընդգծելով՝ հեղինակն այն դիտարկել է հարևան ժողովուրդների սոցիալական ու հոգևոր կյանքում տեղի ունեցող ազդեցությունների և փոխազդեցությունների համատեքստում:

86. Եռանավ բազիլիկ եկեղեցին Դվինի Միջնաբերդում, ԼՀԳ, Եր., 1996, №3, 66-70 (հեղինակակից՝ Կ. Ղաֆադարյան):

1961-1962 թթ. Դվինի Միջնաբերդում բացվեցին եռանավ մեծ սրահի մսացորդներ: Շինության կենտրոնում ուրվագծվում էին կիսաբուրու հատակագծով ինչ-որ կառույցի հետքեր, որոնք վերագրվեցին այդտեղ տեղադրված ամբիոնի կամ գահավորակի: Ըստ այրմ Կ. Ղաֆադարյանը կառույցն անվանեց զահանիստ դահիճ և վերագրեց Արշակունի հայ թագավորներին: Այս տեսակետով մտավ գիտական շրջանառության մեջ մինչև 1983-1985 թթ., երբ լրացուցիչ ուսումնասիրություններով հստակեցվեցին շինության ճարտարապետաշինարարական առանձնահատկություններն ու շերտագրական պատկերը: Պեղումների ընձեռած նոր նյութերի և մշակութային փոխանչությունների լույսով վերանայվեց շինության գործառութային նշանակությունը:

Մինչ այդ աշխարհիկ ճարտարապետությանը վերագրվող շինությունը համարվեց հոգևոր կառույց և V դ. կառուցված հայկական եռանալ բազիլիկ սրահների վաղագոյն ձևերից մեկը: Իսկ սրահի կենտրոնական գահավորակը նման է հայկական կառույցին համաժամանակյա ասորական բազիլիկաներում լայն տարածում գտած գահավորակներին: Փաստորեն IV դ. թվագրվող այս շինությունը վաղքրիստոնեական եկեղեցի է և հայ-ասորական ճարտարապետական սերտ փոխհարաբերությունների արդյունք:

**87. Հայոց գունդը, 1993-1995 թթ. դաշտային հնագիտական
աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական
նստաշրջան, Եր., 1996, էջ 77-78:**

1954 թ. Դվինի Միջնաբերդի գագաթին գտնվող արաք ոստիկանի պլատական կառույցի հատակի տակ մոխրաշերտից հայտնաբերվել են կավե կնքաղրոշմներ: Ըստ հնագիտական նյութերի՝ շերտը թվագրվում է V-VII դդ.: Կնքներից մեկի վրա առկա է «տուն հայոց գնդին» պահավերեն դրոշմ-արձանագրությունը, որի քննությամբ հեղինակը ենթադրում է, թե «Տանուտիրական գունդն» Այրարատում առանձին վարչական միավոր էր: Կազմավորվելով մարզպանական շրջանում այն ենթադրաբար ներառում էր Ռատան, Մասյացոտն, Արագածոտն, Նիգ և Մոտակա այլ գավառները: Հավանաբար «Տանուտիրական գունդը» VI դ. վերափոխվել է «Հայոց գնդի», որը VII դ. 30-ական թթ. Սասանյան Պարսկաստանի անկումից հետո լուծարվել է:

**88. Դվինի կետնոսաձև անորթները և նրանց հինարևելյան
գուգահետները, 1993-1995 թթ. դաշտային հնագիտական
աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստա-
շրջան, Եր., 1996, էջ 78-79 (հեղինակակից՝ Ա. Փիլիպոսյան):**

Դվինի վաղերկաթեկարյան շերտի պեղումները փաստում են, որ հիշյալ շրջանում այն եղել է պաշտամունքային կենտրոն: Այդ են վկայում այստեղ հայտնաբերված չորս անորթները, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են կեռնու անվամբ: Միանք իրանի վերին հատվածում ունեն մի քանի անորթ-հավելումներ, որոնք հաղորդակից են մայր անորթին: Հավելումները մի քանի տեսակի են՝ սակորաձև, թասաձև, փողաձև: Դվինի օրինակները պատկանում են վերջին խմբին: Նման անորթների միայն սրբարաններում և դամբա-

րաններում հայտնաբերումը հիմք է տալիս ենթադրելու դրանց ծիսական նշանակության մասին: Ինչպես Հին Արևելքի երկրներում, Հայաստանում ևս դրանք օգտագործվել են պտղաբերություն և զարգացնք խորհրդանշող աստվածներին ձռնված ծիսական արարողությունների ժամանակ:

1997

89. Բ. Ն. Առաքելյան (ծննդյան 85-ամյակի առթիվ), ՊԲՀ, Եր., 1997, №1, էջ 224-226 (հեղինակակից՝ Գ. Սարգսյան):

Հոդվածը նվիրված է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հնագիտության և ազգագործության ինստիտուտի պատվավոր տնօրեն, մի շարք խորհուրդների անդամ Բարեկեն Նիկոլայի Առաքելյանի գիտական գործունեությանը: Նրա շնորհիվ անտիկ և միջնադարյան հնագիտությունը մեծ քայլ կատարեց: Բարեկեն Առաքելյանի մի շարք աշխատանքներ այժմ ել չեն կորցրել իրենց գիտական կարևորությունը:

90. Հայաստանի ոսկու հանքերը միջնադարում, Հին Հայատանի ոսկին, հանրապետական գիտական նստաշրջան, Եր., 1997, էջ 31-32:

Պատմական Հայաստանում ոսկու հանքերի մասին վկայում են հայ և օտար պատմիչները: Ուսկու արդյունահանման վկայություն է նաև ոսկի արմատով տեղանունների գոյությունը Հայաստանի տարբեր հատվածներում: Հոդվածը նվիրված է վերը նշված հարցերի հանգամանափակությանը:

1998

91. Կարո Ղաֆադարյան, Հին Հայաստանի մշակույթը, XI, հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումների թեկեր, պրոֆ. Կարո Ղաֆադարյանի հիշատակին, Եր., 1998, էջ 7-9 (հեղինակակից՝ Գ. Կարախանյան):

Հոդվածը նվիրված է բազմավաստակ գիտական, հայ հնագիտության և վիմագրության բնագավառում անգնահատելի ներդրում ունեցող Կարո Ղաֆադարյանի անցած գիտական ուղղություն: Նա մասնակցել է Վաղարշապատի, Ամբերդի, Երևանի Կաթողիկեի, Ավանի

տաճարի, Կարմիր բլուրի պեղումներին, գլխավորել է միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի պեղումները: Շուրջ 25 տարի ղեկավարել է Հայաստանի պատմության պետական թանգարանը: Երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական համալսարանում: Մեծ է նրա վաստակը հայագիտության տարբեր բնագավառների՝ վիմագրության, հայ ճարտարապետության պատմության, նյութական մշակույթի ուսումնասիրության գործում: Նրա մի շարք աշխատություններ առ այսօր սեղանի գիրք են միջնադարյան հնագիտություն և վիմագրություն ուսումնասիրողների համար, որոնցից են «Հայկական գրի սկզբնական տեսակները», «Ալիքմիան պատմական Հայաստանում», Երևանի, Հռվիաննավանքի, Սանահինի, Հաղպատի հուշարձաններին ու դրանց վիմագրերին նվիրված ուսումնասիրությունները և, իհարկե, երկիատոր «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատությունը:

92. Ծիծեռնակարերդի բնակավայրի 1998թ. պեղումների նախնական արդյունքները, Էրերունի-Երևան նստաշրջան, Եր., 1998, էջ 26-29 (հեղինակակիցներ՝ Հ. Հակոբյան, Ա. Փիլիպոսյան):

Ծիծեռնակարերդի միջնադարյան բնակավայրի բազմազան նյութը վերաբերում է IX-XIV դդ.: Բնակավայրն իր բարձր դիրքով հսկող դեր է ունեցել Հրազդանի կիրճի առափնյա հատվածում և նաև տնտեսական կապեր ժամանակի մշակութային կենտրոնների հետ:

93. Հնագիտական տերմինաբանության շուրջ, Հին Հայաստանի մշակույթը, XI, հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումների թեզեր, պրոֆ. Կարո Ղաֆաղարյանի հիշատակին, Եր., 1998, էջ 68-69:

Աղյուրագիտական նյութի քննությամբ հեղինակն անդրադառնում է միջնադարյան որոշ գինատեսակների անվանաբանությանը՝ որոշակի ճշգրտումներ են արվում զենքի երեք տեսակների անվանումների վերաբերյալ (սիզակ-տեզ, նետ-պլար և սուսեր-սուր): Նիզակը գրականության մեջ հաճախ նույնացվում է ծայրապանակի հետ, որն աղյուրներում հանդիպում է «տէզ» ձևով: Իրականում տէզը ոչ թե զենքի տեսակ է, այլ սիզակի մետադական ծայրն է: Երկրորդի՝

նետ-սլաք հարաբերության առումով հավանական է, որ սլաք անվանվել է նետի երկարեւ ծայրը: Սուսեր-սուր փոխհարաբերության առումով հեղինակը ենթադրում է, որ սուրը սուսերի կտրող մասն է, այսինքն՝ շեղը:

**94. Դրամական շրջանառությունը միջնադարյան Հայաստանում, Դրամական շրջանառությունը Հայաստանում, հանրապետական նստաշրջան, Եր., 1998, էջ 34-35
(հեղինակակիցներ՝ Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան):**

Դատումական աղբյուրներն ու հնագիտական նյութը վկայում են, որ միջնադարյան Հայաստանում դրամական շրջանառությունն ընդգրկել է հասարակական կյանքի ամենատարրեր ոլորտները, ինչպիսիք են առևտրական հարաբերությունները, իրավական համակարգը, դրամական տուգանքը՝ որպես պատժամիջոց, եկեղեցական կյանքը, եկեղեցուն տրվող դրամական նվիրատվությունները, վճարովի պատարագը, հարկային ոլորտը, դրամով գանձվող հարկատեսակները: Զեկույցը վերաբերում է վերը նշված խնդիրների մեկնարանությանը:

**95. Դվինի կաթողիկոսությունը, Հայաստանը և քրիստոնյա արևելքը, միջազգային գիտաժողով, Եր., 1998, էջ 18-19
(հեղինակակից՝ Ն. Հակոբյան):**

Հոդվածում հեղինակները դարձյալ բարձրացնում են Դվինում կաթողիկոսական աթոռի հաստատման հարցը: 460-ական թթ.՝ Հազկերտի մահվանից հետո, երբ փոխվեց Սասանյանների վերաբերմունքը հայերի նկատմամբ, կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Դվին, որը մարզպանական նստավայր էր: Այսպիսով, տեղի է ունենում հոգևոր և աշխարհիկ կենտրոնների մեկտեղում: Գյուտ Ա Արահեղացին (Ոթամեցի) դառնում է Դվինում նստող առաջին հայ կաթողիկոսը:

96. Торговля, денежное обращение и ремесла Двина в IV-XIII вв., Iran and Caucasus, Research papers from the Caucasian centre for Iranian Studies, vol. 2, Tehran, 1998, p. 13-24.

Դվինի պեղումների հիման վրա ներկայացվում են միջնադարյան քաղաքի առաջացման նախադրյանները և մինչև XIII դ. նրա ունեցած դերը որպես քաղաքական, մշակութային, տնտեսական, առևտրական կենտրոն: Այդ մասին են փաստում քաղաքի տարածքում հայտնա-

բերված դրամական գանձերը, արհեստագործական արտադրանքի բարձրարվեստ նմուշները: Դվինն առևտրական սերտ կապերի մեջ էր Իրասի, Բյուզանդիայի, ավելի ուշ շրջանում՝ Արաբական խալիֆայության հետ: Դվինի ապակեգործական արտադրանքը Մերձավոր Արևելքում լավագույններից էր: Քաղաքը հայտնի էր նաև իր խեցեգործական արտադրանքով: Արևելքի և Արևմտաքի հետ կապերի մասին են փաստում հայտնաբերված հնագիտական հարուստ նյութերը, որոնք ներմուծվել են Իրաքի, Սիրիայի, Եգիպտոսի, Միջին Ասիայի, Փոքր Ասիայի արհեստավորական խոշոր կենտրոններից:

1999

97. Նորահայտ բուրվառներ Քրիստոսի պատկերագրությամբ, Աստվածաշնչական Հայաստան, գիտաժողովի թեզեր, Օշական, 1999, էջ 122-124 (հեղինակակիցներ՝ Ն. Հակոբյան, Հ. Մելքոնյան):

Ներկայացված են Արցախից (Գանձասարի վանք) և Վայոց ձորից (Թանահատի վանք) հայտնաբերված մի քանի բուրվառների պատկերագրությունը, գեղարվեստական նկարագիրը և թվագրությունը: Միջնադարյան նյութական մշակույթի այս նմուշները (Գանձասարի օրինակը հատկապես շատ լավ է պահպանվել) հնագիտական և արվեստաբանական մեծ արժեք ունեն:

98. Լեռ, Հայաստանի ուղիների և պաշտպանական միջոցների մասին (ոռուսերեն), Վավերագրեր, 1, Եր., 1999, 22 էջ (հեղինակակից՝ Ա. Ղազիյան):

Հոդվածը նվիրված է նշանավոր հայագետ-պատմաբան Լեոյի «Օ պուտյա Արմենիա և օք օборонիտելինիք սредствах этой страны» գիտական հետազոտությանը: Այն գրվել է 1919թ. և կարևոր էր Հայաստանի պաշտպանական ուղմավարության ու տնտեսական խնդիրների լուծման առումով: Լեռն ներկայացնում է Հայկական լեռնաշխարհով անցնող առևտրական ու ուղմական ուղիները, շեշտում դրանց պաշտպանված և ապահով լինելու անհրաժեշտությունը նաև իր օրերում: Նա առաջարկում է ստեղծել պաշտպանական համակարգ՝ նորմակախ հայոց պետականությունը թշնամուց պատնեշելու համար:

99. Հայաստանը Բյուզանդիայի դրամակշռային համակարգում V-VII դարեր (ըստ Դվինի նյութերի), Հայաստանը և քրիստոնյա արևելքը, Եր., 2000, էջ 115-119:

Հնագիտական նյութերի և դրամական գտածոների հիման վրա ներկայացված է Հայաստանի V-VII դդ. դրամակշռային համակարգի պատկերը: Վեպանական է, որ բյուզանդա-իրանական համաձայնագրով ոսկե դրամ կտրելու քացարձակ իրավունքը պատկանում էր կայսությանը: Վաղ միջնադարում Արևելքում հայտնի բոլոր ոսկե դրամները բյուզանդական սովորություններ էին, իսկ արծաթները՝ իրանական: Պատահական չէ, որ բյուզանդական ոսկե դրամների տարածման ոլորտում գտնվել են դրամների կշիռները ստուգելու համար նախատեսված կշռաքարեր: Դրանք հայտնի են էքսագիոն անունով, որոնց վրա կշռաչափի և միավորի քաշի անվանման սկզբնատառեր կան: Դվինում գտնված կշռաքարերից երեքն ապակուց են, չորսը՝ բրոնզից: Բոլոր կշռաքարերը մակագրություններով են: Գտնված նյութերի միջոցով հնարավոր է պարզել դրամակշռային համակարգի առանձին միավորների մեծությունները, որոնք, համադրվելով մատենագրական տվյալների հետ, կարող են կարևոր աղբյուր դառնալ Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանման համար:

100. Կաթողիկոսանիստ Դվինը, Հայաստանը և Քրիստոնյա արևելքը, Եր., 2000, էջ 75-79 (հեղինակակից՝ Ն. Հակոբյան):

Դվինը, շուրջ չորս դար (V դ. երկրորդ կես-IX դ. 20-ական թթ.) լինելով կաթողիկոսանիստ, կարևոր դեր է խաղացել հայ հոգևոր ճարտարապետության զարգացման, Առաքելական եկեղեցու հիմքերի ամրացման գործում: Սակայն հայագիտության մեջ հստակ չէ կաթողիկոսությունը Վաղարշապատից Դվին փոխադրելու թվականը: Ըեղինակները, հիմնվելով մատենագրական աղբյուրների և հնագիտական պեղումների արդյունքների վրա, հանգում են այն եզրակացության, որ կաթողիկոսարանը Դվին է տեղափոխվել Գյուտ կաթողիկոսի օրոր՝ V դ. 60-70-ական թթ.:

101. Мавзолей туркменского эмира Пир-Хусейна в селе Аргаванд Армении (историко-архитектурные аспекты).
Культурное наследие Туркменистана, материалы к международной научной конференции, Ашгабат-Санкт-Петербург, 2000, стр. 152-153.

Ներկայացված է Երևանի մոտակա Արգավանդ գյուղում գտնվող Փիր-Հուսեինի դամբարանը: Այն կառուցված է տեղական կարմիր տուֆով, բարձրությունը 12 մ է: Շինության գմբեթը ծածկված է կապույտ հախճասալերով: Դամբարանն ունի արձանագրություն, որտեղ Փիր-Հուսեինը հանդես է զալիս որպես քաղաքական հմուտ գործիչ, արիեստների ու գիտության հովանավոր: 1998 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Թուրքմենիայի պատմության ինստիտուտի համատեղ արշավախումբը դամբարանում պեղումներ է ձեռնարկել: Հայտնաբերվել են հետաքրքիր գտածոներ, որոնք կարևոր են ինչպես հայոց, այնպես էլ թուրքմենների պատմության համար: Ինչպես իրավացիորեն նկատել է արշավախմբի ղեկավար Խ. Յոսուպովը, Արգավանդի դամբարանի հիմքում դրված է մահմադական գերեզմանական կառույցների գաղափարը, սակայն այն կատարված է հայ վարպետների ձեռքով:

2001

102. Հնագետ Հարություն Մարտիրոսյանի գիտական ժառանգության հարցի շուրջ (ծննդյան 80-ամյակի առթիվ), ՊԲՀ, Եր., 2001, №3, էջ 172-179 (հեղինակակից՝ Ա. Բորովյան):

Հոդվածում ներկայացված է ականավոր հնագետ Հարություն Մարտիրոսյանի գիտական վաստակը: Նա ուր տասնյակից ավելի աշխատությունների և տասը մենագրությունների հեղինակ է: Մասնակցել է Հայաստանի բազմաթիվ հուշարձանների պեղումներին (Կարմիր բլուր, Գոլովինո, Գառնի, Կիրովական, Գեղարքուտ, Նոր Արեշ, Արմավիր, Գեղամա լեռներ և այլն): Էական էր նրա կատարած աշխատանքը բրոնզերկաթեղարյան ժամանակաշրջանի համար պարբերացման ու ժամանակագրության սանդղակ ստեղծելու և ժայռապատճենների ու նշանագրերի ուսումնասիրման գործում, որնոր այժմ էլ պահպանում են իրենց գիտական բարձր արժեքը:

**103. Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական
արձանագրությունները, ՊԲՀ, Եր., 2001, №2, էջ 169-199
(հեղինակակից՝ Ֆ. Բարայան):**

Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոն Ուշիի վանական համալիրում 1999-2000 թթ. ամրողավին պեղվել են Սրբ Սարգսի մատուռ-դամբարանը, գլխավոր եկեղեցին ու գավիթը, հարավային պարիսալը, համալիրի մեջ մտնող տարրեր նշանակության այլ շինուազներ: Հայտնաբերվել են հարուստ և բազմազան հնագիտական նյութեր: Բացահայտվել են նաև մի շարք անհայտ արձանագրություններ, որոնք կարևոր առբյուրագիտական հենք են Վաչուտյան իշխանական տան և վանական համալիրի ուսումնասիրության համար: Հոդվածում ներկայացված է 26 արձանագրություն, որոնցից 19-ն առաջին անգամ է շրջանառվում:

104. «Ժողով մանուկ» հուշարձանների հարցի շուրջ, «Ժողով մանուկ» նատաշրջան, Եր., 2001, էջ 85-88 (հեղինակակից՝ Հ. Սարգսյան):

Քննվում են «Ժողով մանուկ» կրողող հուշարձանների առկայության պատճառները Հայաստանի գրեթե բոլոր քնակավայրերում: Ճարտարապետական առումով «Ժողով մանուկները» մատուռանման կառույցներ են: Ուսումնասիրությունները պարզել են, որ «Ժողով մանուկ» անոնուվ լեռնանցքներ, քարածայոեր, ավերակայուեր, խաչեր, գետեր, աղբյուրներ, ծառեր ու ավետարաններ կան: Այս սրբավայրերի ակտիվ այցելուներից են եղել հատկապես կանայք՝ պտղաբերության, հաջողության և բուժման ակնկալիքներով: Զնայած համաժողովրդական քնոյթին՝ դրանք ընդգրկված չեն ազգային քրիստոնեական սրբերի շարքում, ինչը կարող է վկայել դրանց խոր արմատների մասին:

**105. Ավետիսի քահանա, Ժամանակագրություն, Քաջքերունի,
Բազմամիլիոն ժառանգություն, Վավերագրեր, 2, Եր., 2001,
116 էջ (հեղինակակից՝ Ա. Ղազիյան):**

Գրույկում կազմողները գետեղել են Քաջքերունու կազմած երկու ձեռագրեր: Սրանցից առաջինը զրի է առել XIX դ. սկզբին (մինչև 1824 թ.) Կարս քաղաքի հայոց եկեղեցու քահանա (մականունը՝ «Վարժապետ») տեղ Ավետիս Գևառյանը:

Գրքով գետեղված երկրորդ աշխատությունը շարադրել է Քաջքերունին 1920թ.՝ մահվանից առաջ: Այն վերաբերում է 1918-1920թթ. թուրքերի կողմից Շամախի նահանգի հայկական գյուղերում կատարված ավերածություններին և հարց է բարձրացված հասցրած վնասների փոխհատուցման խնդիրների վերաբերյալ:

2002

106. Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980թթ.), Եր., 2002, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 254 էջ (հեղինակակից՝ Կ. Ղաֆադարյան):

Գիրքը Դվին քաղաքի պեղումների շուրջ 43 տարվա տարեգրությունն է: Այն գիտական ամենալայն հասարակության դատին ներկայացված «Դվին I» և «Դվին II» աշխատության լրացված շարունակությունն է: Հեղինակներն ամենայն բարեխսդությամբ քննության են ենթարկել պեղումներով ձեռք բերված հնագիտական գտածոների հարուստ ընտրանին: Ծանոթանալով աշխատությանը՝ ընթերցողը կարող է լիարժեք պատկերացնում կազմել միջնադարյան Հայաստանի «տիեզերաշահ, տիեզերական» մայրաքաղաքի վերաբերյալ, որտեղ հոյս պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու խոսքերով խաչվում էին Հնդկաստանից Բյուզանդիա, Իրանից Եգիպտոս տարանցիկ առևտությունները: Քաղաքի համբավը վաղուց եր դուրս եկել երկրի սահմաններից: Այդ են վկայում արաք պատմիչների (Իբն Հաուկալ, Ալ Բալագրի, Մուկադասի և ուրիշներ) տեղեկությունները: Կ. Ղաֆադարյանն ու Ա. Քալանթարյանն առանձնակի քննարկել են քաղաքաշինությանը վերաբերող խնդիրները: Առանձին գլուխ է նվիրված կաթողիկոսական պալատների ճարտարապետությանը՝ իբրև աշխարհիկ շինությունների եզակի օրինակներ: Բազմամյա պեղումների և հնագիտական բացառիկ արժեք ներկայացնող գտածոների շնորհիվ վեր են հանվել շերտագրական խնդիրները, վերականգնվել է մշակութային շերտերի հաջորդականությունը ժամանակագրական տարբեր դարաշրջաններում:

107. Օշականի ուրարտական ամրոցի 2002թ. պեղումների նախնական արդյունքները, Մաշտոցյան ընթերցումներ, թեզեր, Օշական, 2002, էջ 55:

Օշականի մերձակա Դիդի կրնդ բլրի վրա գտնվող ուրարտական ամրոցը IV դ. կեսերին վերածվել է Ամատոնիների նստոցի: Ամրոցի միջնադարյան մշակույթին են վերաբերում IV դ. մատուռը, վաղքրիստոնեական շրջանի խեցեղենն ու կղմինդրը: Որպես ուրարտական հուշարձան՝ ամրոցը նշանավոր է իր պաշտամունքային շինությամբ:

108. Ուշիի U. Սարգիս վանքը, Աճեմյան մատենաշար Ա, Եր., 2002, էջ 236-255 (հեղինակակից՝ Ֆ. Բարայան):

Ներկայացված են միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր և կրթամշակութային կենտրոններից մեկի՝ Ուշիի վանական համալիրի պեղումները: Ուշիի վանքը թեև հիշատակվում է վաղ միջնադարում, սակայն վանական համալիրի ծաղկման շրջանը համընկնում է Զաքարյանների կողմից հայոց աշխարհը սեղուկներից ազատազրելու ժամանակի հետ: Զաքարյաններն իրենց տիրույթները բաժանեցին տարրեր իշխանական տների միջև: Արագածոտնը տրվեց Վաչուտյաններին, որոնք ել բուն շինարարական գործունեություն ծավալեցին իրենց տիրույթներում, այդ թվում և Ուշիում:

Պեղումներով բացվել է վանքի գլխավոր Սր Աստվածածին եկեղեցին, որը պատկանում է գմբեթավոր սրահների տիպին: Եկեղեցու որմին հայտնաբերված Վաչե Վաչուտյանի նվիրատվական արձանագրությունը հիմք է տալիս, որ կառույցի շինարարությունը վերաբրվի նրան և թվագրվի XI դ.: Ըստ արձանագրության՝ եկեղեցու գավիթը կառուցվել է 1264թ.: Պեղումներով բացվել են նաև զանգակատունը, արտաքին սրահը, հասարակական, բնակելի և տնտեսական նշանակության տարրեր շինություններ: Վերջին կառուցապատումներն իրականացվել են Ռուկան Երևանցու վանահայրության տարիներին: XVIII դ. վանքն աստիճանաբար ամայանում է, իսկ 1827 թ. երկրաշարժի ժամանակ արդեն լրված էր: Պեղումներով հայտնաբերվել են արհեստագործական արտադրանքի բազմաթիվ օրինակներ, որոնց մեծ մասը վերաբերում է վանքի գործունեության վերջին շրջանին:

109. Անին XX դարի 20-ական թվականներին, Ասիի Կաթողիկէ տաճարի 1000-ամյակը, նստաշոջանի թեզեր, Եր., 2002, էջ 53-54 (*հեղինակակից՝ Ա. Ղազիյան*):

XX դարի սկզբին Անդրկովկասում ընթացող պատերազմներն ու քաղաքական վայրիվերումները ծանր հետևանքներ են թողել Ասի մայրաքաղաքի ուսումնասիրության վրա: Չնայած Հայաստանի Սուածին հանրապետության պետական մարմինների ջանքերին՝ հուչարձանի հետագա ճակատագիրը վտանգված էր: Ի վերջո Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը Ռուսաստանի կողմից Թուրքիային զիջելու հետևանքով հայոց հոչակավոր մայրաքաղաքն անցավ Թուրքիային:

2003

110. Армения: раннее средневековье (IV-VIII вв.). «Археология», «Крым. Северо-восточное Причерноморье и Закавказье в эпоху средневековья (IV-VIII вв.)», М., Наука, 2003, стр. 321-334, 426-453.

Աշխատությունը հեղինակի երկարատև գիտական գործունեության արգասիքն է: Այն կազմված է երեք բաժիններից. 1. Վաղմիջնադարյան հուչարձանների ուսումնասիրության պատմությունը. քաղաքներ և քերդեր, 2. հոգևոր ու աշխարհիկ կառույցների շինարարություն, 3. առևտուր ու արհեստներ: Առաջին անգամ մեկ ամբողջությամբ շրջանառության մեջ են դրվում Վաղմիջնադարյան հուչարձանների՝ Դվինի, Հացավանի, Այգեվանի, Գառնիի պեղումներից հայտնի այն գոտածոները, որոնք արհեստագործական արտադրանքը ներկայացնում են ամենալայն դրսևորումներով, շինարվեստն՝ իր նորարարական ձեռքբերումներով, կառուցողական հորինվածքով, շինանյութով, ծավալատարածական լուծումներով, գործառնական նշանակությամբ: Այս հենքի վրա հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել պաշտամունքային և աշխարհիկ կողթողները: Առանձին բաժին է հատկացված արհեստներին ու առևտրին: Գտածոների տեխնիկական վերլուծությամբ վերականգնվել են վաղ միջնադարում Հայաստանում գործող արհեստները, դրանց գրանցում առանձնահատուկ և կարևոր տեղու տնտեսության մեջ ու կենցաղում: Հայաստանով էր անցնում Հնդկաստան-Միջին Ասիա-Իրան-Եգիպտոս հարավ-

արևելյան ճանապարհը, իսկ հյուսիսային ճանապարհով դուրս էին գալիս Սև և Միջերկրական ծովափնյա երկրներ: Միջազգային առևտրական լայն կապերի վկայություն են Դվինում գտնված մեծաթիվ կավե կնքաղրոշմները, որոնցով կնքվում էին ապրանքահաները:

111. Ուշիի Սբ Սարգիս վանքի պեղումները և պահպանության խնդիրները, Conservation of ruined Monuments, Եր., 2003, էջ 120-128 (հեղինակակից՝ Ֆ. Բարյան):

Ուշին պատմական Հայաստանի Արագածոտն գավառի նշանավոր վանական համալիրներից է: Հիմնադրվելով դեռևս V դարում Մեսրոպ Մաշտոցի կողմից՝ այն մինչև XVIII դ. եղել է կրոնական-մշակութային կարևոր կենտրոն: 1999 թ. սկսված հնագիտական պեղումները կարևոր նշանակություն ունեցան միջնադարյան այս հուշարձանի փրկության ու հետագա ուսումնաժրման համար: Բացվել է հնագիտական հարուստ նյութ՝ խեցելեն, դրամներ, քանդակազարդ դետալներ, արձանագրություններ, շինությունների մնացորդներ, ճշտվել է համակառուցի ընդհանուր ճարտարապետական պատկերը:

112. Результаты раскопок 2002 г. в Ошакане. Археология, этнография и фольклористика Кавказа, материалы международной конференции, Ер., 2003, стр. 112-121 (соавторы: У. Мелконян, А. Жамкочян, Ф. Бабаян, А. Пилипосян, А. Карапетян).

Օշականը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Գյուղի կենտրոնում բարձրացող Դիդի կոնդ կոչվող բլուրը բնակեցված է եղել դեռևս II հազարամյակում: Այստեղ 1971-1975 թթ. պեղումներով բացվել է ուրարտական ամրոցի ողջ տարածքը, որն իր հատակագծով, հորինվածքով, ծավալատարածական լուծումով, շինարարական տեխնիկայով բնորոշ է ուրարտական շինարվեստին: Հուշարձանի ճարտարապետական կերպարը, շինարվեստը և պեղումներից գտնված նյութերը հիմք են տվել եգիակացնելու, որ Դիդի կոնդի ամրոցը հիմնադրվել է մ.թ.ա. VII դ. երկրորդ կեսին՝ Ծուսա II արքայի գահակալության տարիներին, երբ Վանի թագավորությունը մի կարճ ժամանակահատվածում կրկին վերելք էր ապրում: 2002 թ. բլրի վրա վերսկսված հնագիտական չորսամյա աշխատանքների շնորհիվ ամբողջությամբ պեղվել են ուրարտական ամրոցի արևելյան, հյուսիսային և մասամբ արևմտյան պատերը: Բացվել են նաև հյուսիսարևելյան մասում գտնվող

մեծ սրահը, արևմտյան «քակի» հարավային հատվածը, մաքրվել է ամրոցի կենտրոնական հատվածում գտնվող փոքր բուրք, որտեղ գտնվում են վաղմիջնադարյան սրբարանը և ուրարտական տաճարը: Այն ուրարտական հոգևոր ճարտարապետության ուշագրավ հուշարձաններից է և լրացնում է Արևմտյան Հայաստանի ուրարտական հուշարձաններում (Այանիս, Ազնավուր-թեփիե, Թոփրակ-Կալե, Չավուշթեփիե, Կայալի դերեւ և այլն) բացված նմանատիպ կառույցների շարքը: Պեղումներ են կատարվել նաև Դիդի կոնդի լանջերին, որտեղ բացվել են ոչ բրոնզի, վաղ երկարի, ուրարտական և անտիկ շրջանի դամբարաններ:

113. Աղբյուրագիտական մի ճշգրտում. արդյո՞ք V դարում է ավերվել Դվինի մելիյանը, Ավարայրի խորհուրդը, Եր., 2003, էջ 82-84:

«Ավարայրի խորհուրդը» վերնագրված գիտական նստաշրջանում կարդացված զեկուցման մեջ քննության է առնվել հայոց պատմության մի դրվագը՝ V դ. հակապարսկական ապստամբությունը: Հեղինակը փորձել է հարթել հայկական աղբյուրներում առկա շփոթությունը՝ կապված Դվին քաղաքում գրադաշտական ատրուչան հիմնելու, ապա դրա ավերման ու կաթողիկոսական աթոռի հաստատման հետ:

114. Հայ հնագիտության անցած ուղին և ներկա վիճակը, «Գիտություն և տեխնիկա», Եր., 2003, №6-7, էջ 44-53:

Համառոտ ներկայացվում է հայ հնագիտության ձևավորման ընթացքը XX դ. սկզբից մինչև մեր օրերը: Այս ասպարեզում ձեռք բերված նվաճումներն ուղեկցվում են նոր խնդիրների առաջացման ու լուծման հետանկարներով: Հոդվածը ներկայացնում է հնագիտական հուշարձանների ժամանակագրությունը և դրանց տեղը պատմական դարաշրջանների պարբերացման սանդղակում, Հայաստանի տարածքում հայտնաբերված հնագիտական հուշարձանների կարևորությունը և արժեքը ոչ միայն հայկական, այլև տարածաշրջանային ու համաշխարհային մշակույթների ուսումնասիրման համատեքստում:

115. Հայ հնագիտության ձեռքբերումները, արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները, Եր., 2003, էջ 91-93:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ձևավորված հայ հնագիտությունն իր զարգացման հիմնական փուլը թևակոխեց խորհրդային կարգերի հաստատումից հետո: Գտնվելով համաշխարհային քաղաքակրթությունների խաչմերուկում՝ Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթը մեծ հետաքրքրություն առաջացրեց օտար ուսումնասիրողների շրջանում: Աստիճանաբար շրջանառության մեջ են դրվում Արևմտյան Հայաստանի տարածքում կատարված պեղումների արդյունքները, որոնք հնարավորություն են տալիս հնագիտական վերակազմություններն իրականացնելու լեռնաշխարհի բովանդակ սահմանների համար: Արդի հայ հնագիտությունը շարունակում է հայոց նյութական մշակույթի համակարգված ուսումնասիրությունը՝ հայկական մշակույթը դիտարկելով առաջավորապես հին քաղաքակրթությունների ընդհանուր համատեքստում:

116. On Armenian-Iranian Cultural Interrelations, A Collection of Essays of the 2nd. International congress on the Anthropological study of Iran and Caucasia, Tehran, 2003, p. 75-80.

Հոդվածում ներկայացված են հայ-իրանական մշակութային փոխառնչությունները, որոնք առկա են դեռևս քարի դարից՝ առավել ակնառու դառնալով հատկապես աքեմենյան ու պարթևական ժամանակաշրջաններում: Իրանը լավ էր հասկանում Հռոմի դեմ պայքարում Հայաստանի դերի կարևորությունը, որի հետևանքը մ.թ. Իդ. Հայաստանում Պարթև Արշակունյաց դինաստիայի ստեղծումն էր: Հայ-իրանական սերտ համագործակցության շրջանն ավարտվեց մ.թ. III դ., երբ Իրանում զահ բարձրացավ Սասանյան հարստությունը և պայքար սկսեց Արշակունյանների դեմ նաև Հայաստանում, որի հետևանքով 428 թ. հայկական թագավորությունը կործանվեց: Սակայն այս շրջանում ևս հայ-իրանական մշակութային փոխառնչություններն ակնհայտ են մասնավորապես հետևյալ ոլորտներում՝ պետական և ուսումնական կառուցվածք, պաշտոնական հագուստ և զենքեր, ճարտարապետություն, քանդակ, խեցեգործություն, ապակեգործություն, մետաղագործություն, կսիքագործություն և այլն:

117. Պեղումներ Օշականում, Արագածոտն. հոգևոր և մշակութային ժառանգություն, գիտաժողովի հիմնադրույթներ,
Օշական, 2003, էջ 17-19 (հեղինակակիցներ՝ Հ. Մելքոնյան,
Ա. Ժամկոյան, Ֆ. Բարայան, Ա. Փիլիպոսյան, Ա. Կանեցյան):

Հայատանի վաղագոյն և միջնադարյան մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Օշականի Դիդի կոնդ բլուրի պեղումները: 2002թ. նոր, ուշագրավ բացահայտումներ կատարվեցին: Մասնավորապես ամբողջացվեց դեռևս 1970-ական թթ. բացված ուրարտական ամրոցի հատակագծային, շինարարական, ժամանակագրական, գործառութային պատկերը: Հայտնի դարձավ, որ ամրոցն ունի նաև պաշտամունքային նշանակություն: Ամրոցի արևմտյան պարսպին հպված բացվել է տաճարային կառույց, որը ըստ հատակագծի, դասվում է ուրարտական դասական տաճարների շարքում, որոնք հայտնի են նմանատիպ բազմաթիվ հուշարձաններում և նվիրված են ուրարտական պանթեոնի գլխավոր աստծուն՝ Խալդին: 2002թ. պեղվել են շուրջ 30 երկաթեղարյան և մեկ միջին բրոնզի դարաշրջանով թվագրվող դամբարաններ:

2004

118. Հոռոմոսի վանքի նվիրատվական արձանագրությունները,
Շիրակի մշակութային ժառանգությունը, Գյումրի, 2004,
էջ 45-46 (հեղինակակից՝ Գ. Սարգսյան):

Հոռոմոսի վանական համալիրը հայտնի է վիմագրական հարուստ նյութով: Նախկինում և վերջին տարիներին հրատարակված աշխատություններից կարելի է ընդհանրացնել վանքի նվիրատվական արձանագրությունների ընդարձակ ցուցակը, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հոռոմոսի վանքի տնտեսական գործունեության, կալվածքների, անշարժ ու շարժական ունեցվածքի մասին:

119. Среднебронзовое погребение №30 в Ошакане. Археология, этнология, фольклористика Кавказа, межд. конференция,
Тб., 2004, стр. 69-71 (соавторы: А. Пилипосян, У. Мелконян).

2002թ. Հասպիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը ձեռնամուխ եղավ Օշական գյուղի հյուսիսարևմտյան ծայրամասում շինարարական աշխատանքների ժամանակ պատահական

բացված դամբարանի պեղման աշխատանքներին: Այն արևելք-արևմուտք առանցքով, չորս սալերով ծածկված թաղում էր: Դամբարանից հայտնաբերվել են հարուստ հնագիտական գտածոններ (խսցեղեն, մետաղե կաթսա, ձիասանձի մասեր, դաշոյն, նետալարներ, տարբեր զարդեր և այլն): Հայտնաբերվել են նաև տարրեր կենդամինների (ցոլ, կով, ձի, խոզ, այծ, ոչսար, շոն, աղվես, նապատակ) ուկրային մսացորդներ: Ըստ դիտարկումների՝ կատարվել է դիակիզում: Գտածոնների առաջակորածախական և անդրկովկասայան գուգահեռների հիման վրա դամբարանը թվագրվում է մ.թ.ա. XVII-XVI դդ.:

2005

120. Գինին հայոց ավանդական մշակույթում, Եր., 2005,
Ազգորիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ,
306 էջ (հեղինակակիցներ՝ Ս. Հարությունյան, Հ. Պետրոսյան,
Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Ս. Հորոսյան, Պ. Ավետիսյան):

Աշխատությունը նվիրված է հայոց ավանդական մշակույթի ամենաատարածված ճյուղերից խաղողագործության և գինեգործության պատմությանը: Գինու մշակույթը վեր հանելու համար հեղինակներն օգտագործել են հնէարուսարանական, հնագիտական, մատենագրական, վիմագրական, ազգագրական, բանահյուսական հարուստ տվյալներն ու ուսումնասիրությունները: Ա. Քալանթարյանը՝ որպես գրքի գլխավոր խմբագիր, աշխատել է բոլոր տեքստերի վրա, իսկ իր և հեղինակակից՝ մասնակցել «Գինեգործությունը միջնադարյան Հայաստանում», «Գինին միջնադարյան սկզբնադրյուրներում», «Խաղողը և գինին հայկական միջնադարյան պատկերագրության մեջ», «Խաղողի այգին, տեսակները և խնամքը», «Գինու ստացման արտադրական կառույցները» բաժինների շարադրմանը:

121. Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003թթ., Եր., 2005, «Մուղնի» հրատ., 150 էջ (հեղինակակից՝ Հ. Մելքոնյան):

Աշխատանքում ամփոփված են 1990-2003 թթ. Հայաստանում կատարված պեղումների հիմնական արդյունքները: Աշխատությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, պեղված հնագիտական

հուշարձանների ցանկից և հնագիտական դարաշրջանների ժամանակագրական սանդղակից: Աշխատանքում ներկայացված են XIX-XX դդ. և հետագա տարիների հայ հնագիտության զարգացման ուղիները՝ դիտարկված առաջավորասիական հին քաղաքակրթությունների ընդհանուր համատեքստում: Եվրոպական և ամերիկյան տարբեր կենտրոնների տեխնիկական, ֆինանսական ու կադրային հնարավորությունների օգտագործումը դաշտային հետազոտություններին նոր լիցք է հաղորդել: Պեղումների նոր արդյունքների հիման վրա պարբերականացվում է ժամանակագրական ողջ սանդղակը՝ հին քարե դարից մինչև ուշ միջնադար: Բնական գիտությունների տվյալներով հայ հնագիտության մեջ օգտագործվում են անալիտիկ և սինթետիկ հնագիտության մեթոդները: Բնարկվում է նաև Կովկասի օրսիդիանի աղբյուրների ուսումնասիրության միացյալ ծրագիրը, որի շրջանակներում դիտարկվում են նեղության մարաշրջաններում հումքի տարածման և արհեստների խնդիրները Մերձավոր Արևելքում:

Հայաստանում պլեստոցենյան նախամարդու բնակեցման վայրերի հայտնաբերման նպատակով լուսաբանվում է «Հայկական միջանցքը»՝ Աֆրիկայից Եվրասիա կատարված ներգաղթի հնարավոր ուժիները գտնելու նպատակով: Քննարկման առարկա է Վասիթագավորությունը: Հայաստանի դասական հուշարձանների պեղումները լուսաբանում են աքեմենյան, հունա-հռոմեական աշխարհների հետ քաղաքական, տնտեսական, մշակութային կապերը: Քաղաքաշինության, հոգևոր և աշխարհիկ շինությունների, արվեստների, արհեստների, նյութական մշակույթի ուսումնասիրության համար լուրջ ձեռքբերումներ ունեն միջնադարյան շրջանին պատկանող հուշարձանները: Աշխատանքը տպագրվել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի թիվ 1408 դրամաշնորհի շրջանակներում:

**122. Նորահայտ հիշատակագրեր Սումիկի տոհմի մասին,
Հայոց պատմության հարցեր, 6, Եր., 2005, էջ 183-194
(հեղինակակիցներ՝ Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան):**

2004թ. Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղի մերձակա Ներքին Ուղարքուր կոչվող գյուղատեղում, Ս. Աստվածածին եկեղեցու վերակառուցման հետ կապված, հուշարձանի շուրջն իրականացվել են

մաքրման աշխատանքներ: Այդ ընթացքում պեղվել է միջնադարյան հայ նշանավոր ճարտարապետ, քանդակագործ ու մանրանկարիչ Սումբիկի ընտանեկան տապանաբակը, որտեղ թաղված են Սումբիկի ծնողները, եղբայրն ու նրա ընտանիքի անդամները: Տապանաբարերի արձանագրությունները նոր լույս են սփռում տաղանդավոր հայ վարդապետի գերդաստանի պատմության և տոհմագրության վրա:

**123. Աղցքի հնագիտական արժեքները (1974-1975 թթ.
պեղումների արդյունքները), Հուշարձան, Գ, 2005 թ.,
Էջ 140-150 (հեղինակակից՝ Հ. Սիմոնյան):**

Աղցքի Արշակունյաց դամբարանը վաղքրիստոնեական ուշագրալ հուշարձաններից է: Այստեղ 1974-1975 թթ. պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը ժամանակագրորեն բաժանվում են հետևյալ խմբերի՝ IV-VIII, IX-XIV և XV-XVIII դդ.: Հողվածում մանրամասն քննարկվել է հիշյալ ժամանակահատվածների խեցեղենը: Վաղմիջնադարյան շինարարական խեցեղենի խոտանի հայտնաբերումը վկայում է տեղական արտադրության մասին: Ներկայացված են նաև պատկերազարդ աղյուսները: Զարգացած միջնադարին վերաբերող նյութերը ևս հարուստ են ու բազմազան: Դամբարանի հարավային հատվածում հայտնաբերվել են տարբեր նյութեր պարունակող, XII-XIII դդ. թվագրվող թաղումներ: Ուշ միջնադարում դամբարանի շրջակայքը լրված է եղել:

2006

124. Հայաստանում հնագիտական պեղումների արդյունքները 2005 թվականին, Հայ արվեստ, Եր., 2006, №1, Էջ 6-7:

Ներկայացված են 2005 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբերի աշխատանքները, մասնավորապես Հայաստանի նշանավոր մայրաքաղաքներ Արմավիրի և Արտաշատի վերսկսված պեղումները: Քարեղարյան ժամանակաշրջանի ուսումնասիրության համար կարևոր էր Հովք գյուղի տարածքում գտնվող քարայրերի հետազոտումը: Նեղլիթյան շրջանի հիանալի հուշարձաններ են պեղվել Առատաշեն և Ակնաշեն գյուղերում: Միջագետքի հետ կապերի բացահայտման առումով կարևոր հայտնագործություններ

են արվել Սիսիանի Ներքին Գողեձոր հուշարձանի պեղումների ժամանակ: Վաղբրոնգեղարյան մշակույթի վերաբերյալ բացառիկ տվյալներ են ստացվել Ծաղկասար և Ազարակ հնավայրերի պեղումներից: Վերջինս նաև կարևոր է պաշտամոնքային լանդշաֆտի ուսումնասիրության առումով:

125. Археологические работы в Армении 1990-2003 гг.

Археология Кавказа, 1, Тб., 2006, стр. 10-22.

Հողվածն ընդգրկում է Հայաստանի հնագիտության տեսական ու գործնական ձեռքբերումները նշված ժամանակաշրջանում: Մանրամասն ներկայացված են 1990-2003 թթ. կատարված պեղումները և դրանց արդյունքները: Մամսավորապես պակուիթյան շրջանի հուշարձաններից պեղումներ են իրականացվել Լուսակերտում, Ծիծենակարերդ 2-ում, Հատիս լեռան շրջանում, Որոտան ու Քասախ գետերի կիրճերում և այլն:

Նեռլիք-Էնեռլիթյան հուշարձաններից պեղվել են Աղարլուրը, Առատաշենը, Ներքին Գողեձորը: Բրոնզի և երկաթի դարաշրջանների հուշարձաններից պեղումներ են իրականացվել Լճաշենում, Թալինում, Ջրահովտում, Մեծամորում, Օշականում, Այգեշատում, Լոռի բերդում, Հոռոմում, Ախամբիրում, Չկալովկայում, Լանջիկում, Սիսիանում, Ծաղկահովտում, Գեղարոտում, Շենգավիթում, Ապարանում, Ազարակում, Վերին և Ներքին Նավերում, Նորատուսում, Ներքին Դետաշենում, Հացառատում և այլն: Ուրարտական շրջանի հուշարձաններից պեղվել են Դովրին, Օշականը, Սևանի ավազանի մի շարք հուշարձաններ, Էրեբունին: Աստիկ շրջանի հուշարձաններից պեղվել են Արմավիրը, Արտաշատը, Գառնին, Հողմիկը, Բենիամինը, Կարճաղբյուրը և այլն: Միջնադարյան հուշարձաններից պեղվել են Դվինը, Հառիճը, Դաշտադեմը, Աղիտոն, Աշոցքը, Ակոռին, Ծիծենակաբերդը, Ուշին, Թալինը, Ար Հովհաննես Կարապետի վանքը, Եղեգիսը, Հայկաձորը: Այս տվյալները իհմք են տալիս նորովի դիտարկելու և մեկնաբանելու մի շարք հարցեր՝ երեսմ նաև հերքելով նախորդ ուսումնասիրությունների արդյունքները:

126. Հայաստանը Բյուզանդական դրամակշռային համակարգում. Հին Հայաստանի ուսկին (մ.թ.ա. III հազար-ամյակ - մ.թ. XIV դար), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., գլ. IX, էջ 276-278:

Բյուզանդիան ուներ զարգացած դրամակշռային համակարգ, որով կարգավորվում էին դրամական հարաբերությունները թե՛ կայսրության ներսում և թե՛ նրան ենթակա երկրներում: Բյուզանդական դրամական միավորը ոսկե դահեկանը էր, որը կայսրության իշխանական դրամակշռային միավորն էր: Ոսկե դահեկանը սոլիդ անվանմամբ շրջանառության մեջ էր մտել 324թ.⁴ Կոստանդին Մեծ կայսեր դրամական փոփոխություններից հետո: Ոսկե դահեկանը, ապա և սոլիդները կտրվում էին միայն Բյուզանդական կայսրության դրամահատարաններում: Համաձայն Սասանյան Իրանի և Բյուզանդիայի կորպած համաձայնագրի՝ ոսկե դրամ հատելու և շրջանառության մեջ դնելու բացարձակ մենաշնորհը Բյուզանդիային էր: Այդ է պատճառը, որ Մերձավոր Արևելքում վաղ միջնադարում գործածության մեջ եղած բոլոր ոսկե դրամները բյուզանդական են: Բյուզանդական ոսկե դրամների կշռաքարեր են հայտնի բոլոր այն երկրներից, որոնք ենթակա էին կայսրությանը կամ էլ ընդգրկված էին նրա դրամակշռային համակարգում (Եգիպտոս, Սիրիա, Բուլղարիա, Ռումինիա, Վրաստան): Նման կշռաքարերը հայտնի են էքսագիտն անվամբ և կազմված են կշռաչափի ու կշռաքաշի անվանման սկզբնատառներից:

Հայաստանը, ունենալով աշխարհաքաղաքական կարևոր դիրք, ևս ընդգրկված էր բյուզանդական դրամակշռային համակարգում: Այստեղ գործածական էին վաղբյուզանդական ոսկե դրամները՝ սոլիդները: Հետինակն այս փաստերի համադրմամբ փորձում է հիմնավորել, որ Հայաստանն ընդգրկված էր ոչ միայն սասանյան, այլև բյուզանդական դրամակշռային համակարգում: Հայաստանի շուկաներում առևտուրը կատարվում էր երկու պետությունների դրամակշռային միավորներով:

Հայաստանը չուներ սեփական դրամահատարան ու դրամակշռային միավոր, դրամ կտրելու իրավունքն անկախ պետականության, ինքնուրույնության խորհրդանշիչներից է:

Դրոկոպիս Կեսարացու վկայությամբ Դվինի շոկաներում հայ, հոյն, պարսիկ, վրացի, սիրիացի խուժիկը և այլ ազգի առևտրականներն ակտիվորեն առևտուր էին անում իրանական դիրիեմներով ու բյուզանդական սոլիդներով: Դվինի պեղումներից հայտնի են ոչ միայն դրամական միավորներ, այլև կշռաչափը մատնանշող ապակե և ոսկե կշռաքարեր: Ապակե կշռաքարերը երեքն են (4.52, 4.12, 4.40 գ կշռով), բրոնզե կշռաքարերը՝ չորսը (8.8, 8.8, 49.86, 640.6 գ մեծություններով): Ապակե կշռաքարերը նոմինալ էքսագիննին համարժեք միավորներ են՝ համապատասխան նշումներով: Նշումների կշիռները համընկնում են բյուզանդական ոսկեդրամի քաշին: Նոյն նպատակին են ծառայել բրոնզե կշռաքարերը, որոնցից երկուսն ոնեն երկու նոմինալ քաշ:

Կշռաքարերից (ապակե և բրոնզե) գտնվել են Միջնաբերդում բացված ոսկերչի արհեստանոցում, որը հետազոտողին թույլ է տվել եզրակացնելու, որ այստեղ դրամակոխանակություն է կատարվել: Բյուզանդական սոլիդի քաշն Ասանիա Շիրակացու ժամանակ եղել է 4.53 գ-ից քիչ ավելի: Ապակե կշռաչափը, որ գտնվել է ոսկերչի արհեստանոցում, կշռում է 4.52 գ:

127. Ոսկերչությունը միջնադարյան Հայաստանում (V-XIV դդ.).
Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ - մ.թ. XIV դար), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, գլ. IX - ա, թ, գ, էջ 227-240 (հեղինակալից՝ Հ. Մելքոնյան):

Ուսումնասիրությունը կազմված է նախարանից և երեք բաժիններից. ա. Միջնադարյան ոսկու հանքերը. բ. Ալիբիմիան միջնադարյան Հայաստանում. գ. Ուսկին միջնադարյան գրավոր աղբյուրներում:

Սատենագրական աղբյուրները պարունակում են հարուստ տեղեկատվություն Հայաստանի ոսկու հանքերի և դրանց շահագործման վերաբերյալ: Ուսկու հանքեր կային Սաքեր գավառում, Ճորոխ գետի ակունքներում, Դերսիմում, Արարատյան դաշտավայրում և այլուր: Հատկապես հոչակված էին Սաքերի ու Տայքի հանքերը: Ուսկու հանքերի շահագործման մասին հիշատակում են Եղիշեն, Ղազար Փարավեցին, Եզսիկ Կողբացին, Պրոկոպիոս Կեսարացին, Դավիթ Անհաղթը և ուրիշներ: Պետք է ենթադրել, որ ոսկերեր հողեր կային նաև Գեղամալեռների հարավարևմտյան ստորոտներում: Արծաթի ամենահարուստ

և մշտապես շահագործվող հանրավայրը գտնվում էր երկրի հյուսարձնության շրջանում՝ Գյումուշխանե քնակավայրի տարածքում (Հակոբ Կարնեցի): Ուկու հանքերն ու ոսկերեր հողերը համարվում էին թագավորի ու մեծ իշխանների սեփականությունը: Գոշի «Դատաստանագրքում» արձանագրված են թագավորի և մեծ իշխանների իրավունքները ոչ միայն ոսկու հանքերի, ոսկերչական արհեստանոցների, այլև հողից գտնված ոսկե ու արծաթե զանձերի, ավարառութանկարժեք իրերի նկատմամբ:

Ոսկին առանձնահատող տեղ ուներ հայոց հոգևոր և աշխարհիկ կենցաղում: Հնագիտական գտածոները վավերացնում են մատենագրական վկայությունները: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Ալքիմիան միջնադարյան Հայաստանում» բաժինը: Ալքիմիան միջնադարյան ընդհանուր և տեսական նախաքիմիան էր: Ալքիմիայի ձևավորումն ու զարգացումը կապված էին արհեստագործական և քաղաքային կյանքի բարգավաճման հետ, որը Հայաստանում նկատելի էր IX դ. վերջերից: Պատահական չէ, որ Դվինի պեղումներից գտնվել են կավե և ապակե տարատեսակ փորձանոթներ, փոքրաչափ հալքեր, որոնք օգտագործել են ալքիմիկոսները: Նրանց առաջնային խնդիրն արհեստական ճանապարհով ոսկի ստանալու փորձերն էին: Հարկավոր էր ստանալ քաղադրություն՝ «Էլերսիր» (հայերենում՝ «արսիր», «իքսիր»), որն ստացվում էր ոչ ազնիվ մետաղներն իրար խառնելով: Ուկի ստանալու գործընթացը կոչվում էր «Մեծ խորհուրդ» և խիստ զաղտնի էր:

Հսում ոսկին համեմատվում էր արեգակի հետ և իրու կենսատու արեգակ սրբագործվում ու պաշտվում՝ «Ուկիազարդ-արեգնահակահրաշ»: Հայերեն ձեռագրերում ոսկու հոմանիշը արևն էր:

128. *L'archeologie Armeniene d'hier à aujourd'hui, Au pied du mont Ararat, Splendeurs de L'Armenie antique, Paris 2007, p. 15-22.*

Հոդվածում ներկայացված է հայ հնագիտության անցած ուղին: Հայաստանում հնագիտությունը ձևավորվել է XIX դ. կեսերից, անցել զարգացման երկարատև ճանապարհ և գրանցել աննախադեպ հաջողություններ: Լայնածավալ պեղումներ են իրականացվել այնպիսի նշանավոր հուշարձաններում, ինչպիսիք են Ասին, Դվինը, Արմավիրը,

Գառնին, Ամբերդը, Արտաշատը, Լճաշենը, Մեծամորը: Դրանք մեծ դեր խաղացին հին և միջնադարյան Հայաստանի տնտեսության, քաղաքական հարաբերությունների, մշակույթի բոլոր բնագավառների ուսումնասիրության առումով: Հեռանկարում նախատեսվում է շարունակել հետազոտական աշխատանքները, կազմել Հայաստանի հնագիտական քարտեզը, հրատարակության պատրաստել հայ հնագիտության պատմությունը:

129. Կարո՛ Ղաֆադարյան. Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Դիտական ժառանգություն I, հԽ. 5, Եր., 2007, էջ 21-26 (հեղինակակից՝ Գ. Կարախանյան):

Անուրանալի է մեծանուն գիտնական, հայ հնագիտության անխոչ ուսումնասիրող, պրոֆ. Կարո՛ Ղաֆադարյանի վաստակը հայոց պատմության, ճարտարապետության, մշակույթի, վիմագրության, թանգարանագիտության բնագավառներում: Հայագիտության երախտավորի բեղուն գրքին են պատկանում շորէ մեկ տասնյակ մենագրություններ: Նա աշխատել է Էջմիածնի ձեռագրատուն-մատենադարանում, Գրականության և պատմության ինստիտուտում: Այդ ընթացքում ուսումնասիրելով հայերեն ձեռագրերը՝ հրատարակում է «Հայկական գրի սկզբնական տեսակները» և «Ալիքմիան պատմական Հայաստանում» աշխատությունները, որոնք մինչ օրս պահպանում են իրենց արդիականությունը և սեղանի գիրք են սկսնակ ուսումնասիրողների համար: Գիտնականը, նոր սկզբունք կիրառելով վիմագրական նյութերի հավաքման ու հրատարակման ասպարեզում, հրատարակում է Հովհաննավանքի, Սանահինի, Հաղպատի, Երևանի և նրա շրջակայքի, Ավանի հուշարձանների արձանագրությունները: Երկար տարիներ լինելով միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի հնագիտական արշավախմբի ղեկավար՝ նա ուսումնասիրել է քաղաքի առևտուի, արհեստագործության տարբեր հարցեր, որոնց արդյունքում հրատարակել է «Դվին քաղաքը և նրա պեղումները» գրքի առաջին հատորը: Կարո՛ Ղաֆադարյանի կյանքը հայագիտությանն անմասցորդ նվիրվելու ու ծառայելու վառ օրինակ է:

130. Двин IV. Город Двин и его раскопки (1981-1985 гг.). Ер., 2008, изд. «Гитутюн» НАН РА, 244 стр. (соавторы: Н. Акопян, А. Жамкочян, Ф. Бабаян, Г. Коcharян, К. Кафадарян).

Աշխատությունը լույս է տեսել «Ֆլորա Ֆեմիլի» (ԱՄՆ) հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և «Հայաստան» համահայկական հիմնադրամի օժանդակությամբ: Աշխատանքը կատարվել է «Project Discovery» (ԱՄՆ) հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Դվինի երկարատև պեղումների արդյունքները պարբերաբար հրատարակվել են: Այս աշխատանքը կազմում է նախորդների օրգանական շարունակությունը և ներկայացնում է քաղաքի Միջնաբերդի տարրեր տեղամասերում կատարված պեղումները:

Առանձին խումբ են կազմում Կենտրոնական թաղամասում բացված V-VI դդ. պալատական կառույցը, 893 թ. երկրաշարժի հետևանքով ավերված շինությունները և տարածքում հայտնաբերված նյութերը: Միջնադարյան շերտագրական սանդղակը դիտվում է երեք փուլերով՝ V-VI, VIII-IX, X-XIII դդ. սահմաններում: Միջնաբերդի հարավային բուրգի շրջակայքում բացված կրաշաղախ պատերով մոնումենտալ մեծ շինությունը թվագրվում է V-VI դդ.: Շերտագրական տարրեր հորիզոնները վերաբերում են մ.թ.ա. III հազ. մինչև XIII դ. երկրորդ կեսին:

Ստորին բերդի տարածքում բացվել է առևտրաարհեստավորական թաղամաս: Դարավանդան դասավորված ժողովրդական բնակելի տները, տնտեսական և արտադրական կառույցները ճարտարապետական առումով մեկ ամբողջություն են կազմում և ունեն XII-XIII դդ. բնորոշ հատակագծային որոշակի լուծումներ:

Կենտրոնական թաղամասի և Միջնաբերդի առանձին հատվածներում ուսումնասիրվել է հեղենիստական շրջանի մշակութային շերտը: Այն տորածն խարիսխներով սենյակները և հնագիտական նյութերը հիմք են տալիս անտիկ շերտը թվագրելու մ.թ.ա. II-I դդ.: Միջնաբերդում նորովի բացված եռանակ սրահը հայ քրիստոնեական ճարտարապետության վաղագույն օրինակներից է (IV դ. երկրորդ կես):

Միջնաբերդից, քաղաքի տարածքից և Տիկնունի ամրոցից հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ օրինակները վկայում

են Դվինում III-XIV դդ. ապրող վարպետների հմտության ու քարձը ճաշակի մասին:

Պեղավայրի շերտագրական պատկերը հստակեցվել է դրամների մեծ թվով: Պեղումները վկայում են, որ Դվինը Մերձավոր Արևելքում միջազգային տարանցիկ առևտություն է եղել:

**131. Служение армянской археологии. У подножия Араката.
Каталог выставки, Санкт-Петербург, 2008, стр. 1-3.**

Պետական Էրմիտաժի և Հայաստանի պատմության թանգարանի կազմակերպած «Արարատի ստորոտում» խորագրով ցուցահանդեսի կատալոգում հեղինակն անդրադարձել է հայ միջնադարյան նյութական մշակույթի լավագույն գիտակներից մեջին՝ Հոփսիմե Զանփոլայյանին: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն էր, սակայն առանցքային դեր ունեին միջնադարյան Հայաստանի ապակեգործական խոշոր կենտրոններին՝ Դվինին և Անիին նվիրված հետազոտությունները: Ուշագրավ է նաև գիտնականի ուսումնասիրությունը Հայաստանի հնավայրերից հայտնաբերված սնդկամանների մասին:

**132. Returning to a Great Excavation of the Past, a new joint project in Armenia, Annual Review of the Costen Institute of Archaeology at UCLA. Backdirt. 2008, P. 50-59 /co-author:
G. Areshian/.**

Օտարալեզու ընթերցողին են ներկայացվում Դվին հնավայրը, ուսումնասիրության պատմությունը, հնագիտական պեղումները, որոնք սկսվել են 1937 թ. և որոշ ընդհատումներով շարունակվում են մինչ օրս: Մանրամասն անդրադարձ է արված Դվին քաղաքի մասին հայ և օտար պատմիչների հաղորդած տեղեկություններին: Հայտնաբերված հարյուր հազարավոր գտածոները փաստում են պատմիչների տեղեկությունների հալաստիությունը: Դվինում հայտնաբերված հնագիտական նյութերը պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում, Սարդարապատի ազգագրության թանգարանում, նաև Դվինի հնագիտական հանգրվանում կառուցված փոքրիկ թանգարանում:

Հնավայրի ուսումնասիրության մասին հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ, իսկ ընդհանրացնող մենագրություններով հանդես

են եկեղ Դվինի արշավախմբի ղեկավարներ Կարո Ղաֆադարյանը և Արամ Քալանթարյանը:

2006 թ. Դվինում համատեղ պեղումներ իրականացնելու համար ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը պայմանագիր կսքեց Կալիֆոռնիայի համալսարանի Քոթսենի ինստիտուտի հետ: 2007 թ. օգոստոսին վերսկված պեղումները կարևոր արդյունքներ տվեցին, որոնք այսուհետև հասու կլինեն նաև օտարակեզու ընթերցողներին:

133. Դվինի հնագիտական արշավախմբի 2006 թ. աշխատանքների հիմնական արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XIV, նյութերի հանրապետական գիտական նստաշրջանի, Եր., 2008, էջ 265-286 (հեղինակակիցներ՝ Ն. Հակոբյան, Ա. Ժամկոչյան, Ֆ. Բաբայան, Գ. Քոչարյան):

2006 թ. Դվին հնավայրում պեղումները կենտրոնացվել էին նախորդ տարիներին կիսատ մնացած տեղամասերում՝ Կենտրոնական թաղամաս, Միջնաբերդի հարավային բուրգի շրջան, բլրի գագաթ, Միջնաբերդի հյուսիսարևելյան ստորոտ:

Կենտրոնական թաղամասում պեղումները վերսկվել են պալատական կառույցներից արևմուտք՝ սասանյան կրակի տաճարի շրջակայքում: Այսուել IX դ. իրականացրած կառուցումների հետևանքով թեև խաթարվել էր շերտագրական պատկերը, սակայն հնարավոր եղավ հստակեցնել հետևյալ ժամանակաշրջանների շերտագրությունը՝ մ.թ.ա. VIII դ., մ.թ. V-VI դ., VII դ.: Բոլոր շերտերից հայտնաբերվել են ուշագրավ գտածոներ: Միջնաբերդի հարավային բուրգի շրջակայքում շարունակվել են դեռևս 1976 թ. սկսված վաղմիջնադարյան մեծ շինության պեղումները: Ողջ երկարությամբ՝ 42,3 մ, բացվել է կառույցի հարավային պատը, մաքրվել են արևմտյան անկյունը և համեմատարար լավ պահպանված դեպի հյուսիս թեքվող հատվածը՝ 5,3 մ երկարությամբ:

Միջնաբերդի գագաթին պագարին պեղումները կենտրոնացվել էին հումանուութեան մեջ շինության տարածքում: Հատկապես կարևոր էր նախկինում կիսատ պեղված երկու հորերի բացումը, որտեղ գտնվեց X-XI դդ. թվագրվող բազմաքանակ խեցեղեն: Դրանցով հնարավոր եղավ

հստակեցնել նախորդ տարիներից հայտնի նմանատիպ անոթների թվագրությունը:

Միջնաբերդի հյուսիսարևելյան ստորոտի պեղումները վերսկսվել են 1991թ. ընդհատված հատվածում և շարունակվել XII-XIII դդ. թվագրվող երեք սենյակներից բաղկացած համալիրում: Արդյունքում հնարավոր եղավ արձանագրել շինարարական երկու հորիզոնն, թեև հարուստ գտածոները հիմնականում թվագրվում են XII-XIII դդ.:

2009

134. Armenia In The Cultural context of East and West. Yerevan, 2009, 177 p., LXX pl (co-authors: G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hagobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Nawasardyan, A. Hayrapetyan):

Գրքի հրատարակությունն իրականացվել է ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարագետների ու Ցյուրիխի Լանդեմուլետում շանթերով:

Ուսումնասիրության մեջ Հայաստանի ողջ տարածքից հայտնաբերված հնագիտական նյութերը ներկայացվել են մինչ օրս ընդունված պատմափուլերով՝ IV-VII, IX-XI, XI-XIII, XIII-XIV դդ.: Հայաստանի մոտ 30 հնավայրերից պատահական հայտնաբերված կամ պեղումներով ձեռք բերված նյութերը համակարգված են որակական հատկանիշներով՝ զատորոշելով տեղական կամ բերովի լինելու հանգամանքը: Խեցեգործության տարբեր ճյուղերը՝ հասարակ ու ջնարակած, հախճապակին, ինչպես և ապակեգործությունը ներկայացվում են Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի հենքի վրա:

Հետազոտությունն առաջին անգամ միջնադարյան մշակութային այդ արժեքները քննության է առնում ճշգրիտ գիտությունների առաջնով: Երևանի պետական համալսարանի հնագիտական հետազոտությունների լարորատորիայում և ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտում միջնադարյան խեցելենի և ապակու քիմիական, լուսապատկերային ու պետրոգրաֆիական (քարաբանական) քննությունը պարզել է հնավայրերից հայտնաբերված ցուցանմուշների բա-

դադրական մասնաբաժինները: 400 նմուշի քննությունը պարզել է, որ դրանց մեծ մասի հումքը տեղական կավատեսակներն են:

Ուսումնասիրությունը հայկական միջնադարյան խեցեգործության ու ապակուն վերաբերող կարևոր ձեռնարկ է և օգտակար օտարազգի մասնագետների համար:

135. Կորի (2008թ. դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները), Տավոշ, Նյութական և հոգևոր ժառանգություն, հանրապետական գիտ. նատուրալ նյութեր, Եր., 2009, էջ 247-269 (հեղինակակից՝ Ս. Հորոսյան):

Հոդվածը նվիրված է Կորի գյուղի ճարտարապետական և հնագիտական հուշարձանների ուսումնասիրությանը: Որոշակի դիտարկումներ են կատարվել Կորիգեղ գյուղատեղիի և գերեզմանոցի, Զորիգեղի, Ամրխանանց, Քոռ աղբյուր, Վերին ղողի չալեր կոչվող գյուղատեղիների և Շահնանց գերեզմանոցի վերաբերյալ: Հիշյալ շրջանը հարուստ է նաև անտիկ և վաղմիջնադարյան թաղումներով: Խեցի դար կոչվող բլրի վրա պեղվել են վաղմիջնադարյան թաղակապ մատուի մսացորդները: Հետաքրքիր է, որ մատուն ունի ուղղանկյուն խորան, որը բնորոշ չէ վաղ միջնադարին: Քոռ աղբյուր և Կավահող կոչվող տարածքներում պեղվել են համապատասխանաբար մ.թ.ա. VIII-VII և V-IV դդ. թվագրվող դամբարաններ, որտեղ ուշագրավ նյութեր են հայտնաբերվել:

136. Նորահայտ թևավոր խաչեր Իջևանից, Տավոշ, Նյութական և հոգևոր ժառանգություն, հանրապետական գիտ. նատուրալ նյութեր, Եր., 2009, էջ 270-276 (հեղինակակիցներ՝ Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան):

Հոդվածում ներկայացվել են Իջևանից հայտնի երեք թևավոր, արձանագիր խաչերը: Առաջինը գտնվում է Ալսաղբյուր գյուղում և հայտնաբերվել է 1996թ.: Այն ունի 26 տողից կազմված ուշագրավ արձանագրություն, որտեղ խոսվում է գործարքի վավերականացման մասին, և որի առիթով փաստորեն խաչ է կանգնեցվել: Նաև քննվում է վիմագրում հանդիպող «բրինձ» բառեզրը, որը նշանակում է իշխան: Ըստ արձանագրության՝ խաչը թվագրվում է XIII դ.: Հաջորդ արձանագիր թևավոր խաչը կանգնեցված է հաղարձնի վանք տանող ճա-

նապարի ձախ եզրին և դարձյալ թվագրվում է XIII դ.: Համաձայն արձանագրության՝ չորս Եղբայրները խաչը կանգնեցրել են ի հիշատակ իրենց ծնողների: Երրորդ խաչը տեղադրված է Վերին Դանաղուն կոչված Վայրում՝ աղբյուրի մոտ: Խաչքարը կանգնեցրել է Ավետիսը 1301թ. իր և ծնողների հիշատակի համար:

137. Եղեգիսի հնավայրի պեղումները, Հրեաները Հայաստանում. միջնադար, Եր., 2009, էջ 45-47, 132-134, 217-219 (հեղինակակից՝ Հ. Մելքոնյան):

Հոդվածը նվիրված է 2001-2002թթ. հայ-հրեական համագործակցության շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղի մերձակա միջնադարյան հնավայրում իրականացված հնագիտական պեղումներին: Պեղումները կենտրոնացվել են հրեական գերեզմանատան հյուսիսային կողմում: Այստեղ բացվել են 19 մ ընդհանուր երկարությամբ արևելքից արևմուտք ձգվող պատր և դրան կցակառուցված սենյակները: Հայտնաբերվել են IX-XV դդ. թվագրվող ուշագրավ հնագիտական նյութեր: Պեղումների նյութերի և գրավոր վկայությունների հիման վրա հեղինակները ենկել են հետևյալ եզրակացությունների. 1. Հրեական համայնքը Եղեգիսում հաստատվել է XIII դ. Երկրորդ կեսին և գոյատևել շուրջ 70 տարի: 2. Տապանաքարերը պատրաստվել են տեղական հումքից հայ վարպետների ձեռքով: Նկատի ունենալով 1912թ. Գարեգին Հռվիսելիյանի հրատարակած տապանաքարի բրովանդակությունը՝ հրեաները Հայաստանում գրադարձել են առևտուվ, մանավանդ որ Եղեգիսը գտնվում էր Դվին-Դարտավ միջազգային տարանցիկ առևտրական ճանապարհին:

2010

138. Dvin Capitale administrative et siège patriarchal, Les douze capitales d'Arménie; Paris, 2010, p. 125-137:

Հոդվածը վերաբերում է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի ուսումնասիրության պատմությանը: Սանրամասն նկարագրված են պատմիչների տեղեկությունները Դվինի հիմնադրման, այստեղ կատարված քաղաքական, կրոնական, ուղմական իրադարձությունների մասին: Քաղաքի պատմությունը ներկայացված

է հիմնադրման շրջանից մինչև 1236թ. վերջնական անկումը Զալալ ադ-Դինի կողմից: Քաղաքի մասին տեղեկությունները լուսն են մինչև XVIII դ., որից հետո հայ և օտար ճանապարհորդները, ապա նաև տեղագիրները (Զաքարիա Ազուլեցի, Մեսրոպ Թաղիառյան, Շարդեն, Դյուրուա դե Մոնպերիե և այլք) խսում են Դվինի ավերակների մասին: Քաղաքի հնագիտական ուսումնափրությունն սկսվել է 1850թ.: Ավելի ուշ՝ 1899թ., այստեղ պեղումներ է իրականացրել Նիկողայոս Մառը, ապա՝ Խաչիկ Դադյանը (1907 և 1908 թթ.): Դվինի մշտական պեղումներն սկսվել են 1937թ. Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ: Ավելի ուշ պեղումների ղեկավարությունը ստանձնվել է Կարո Ղաֆադարյանը, այնուհետև՝ Արամ Քալանթարյանը: Պեղումներով բացված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կաթողիկոսական երկու պալատները, հասարակական և տնտեսական տարրեր շինությունները կարևոր նշանակություն ունեն հայկական միջնադարյան ճարտարապետության, շինարարական արվեստի ուսումնափրության համար: Երկարամյա պեղումներով հայտնաբերված հնագիտական ուշագրավ գտածոնները տեղեկություններ են հաղորդում Հայաստանում խեցելնի, ապակու, մետաղի արտադրության, ինչպես նաև տարրեր երկրների հետ առևտրական ակտիվ կապերի մասին:

2013

139. Դվինի 2007-2008 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Էջմիածին, 2013, Եր., էջ 102-112 (հեղինակակիցներ՝ Ն. Հակոբյան, Կ. Ղաֆադարյան, Ա. Ժամկոյյան, Ֆ. Բարայան, Գ. Քոչարյան, Ի. Քալանթարյան, Դ. Միրիջանյան):

Միջնադարյան մայրաքաղաք Դվինի 2007-2008 թթ. պեղումներն իրականացվել են Կենտրոնական թաղամասում (ղեկ.՝ Ն. Հակոբյան), Միջնաբերդի հարավյային բուրգի շրջանում (Ա. Ժամկոյյան), հյուսիսային և կենտրոնական հատվածներում (Ֆ. Բարայան և Գ. Քոչարյան): Հետախուզական, շերտագրական խրամատը պեղվել է Միջնաբերդի հյուսիսային հատվածում (Ի. Քալանթարյան):

Կենտրոնական թաղամասում պեղումները կատարվել են սասանյան կրակի տաճարից արևմուտք ընկած հատվածում: Նախորդ տարի այստեղ բացված վաղմիջնադարյան կառույցի սպահատակի շորջը հայտնաբերված հնագիտական գտածոններից ուշագրավ էին ղեկորա-

տիվ եղուստավոր կանթով սանդ-հավանգը, կավե ամբողջական տաշ-տը և որձաքարե կափարիչը:

Միջնաբերդի հարավային բուրգի շրջանում պեղումները շարունակվել են մոնումենտալ կառույցի արևմտյան պատի շրջանում, որպեսզի հետազոտվեն պատը և հետազայում դրա վրա դրված պարիսպը: Առավել ուշագրավ գտածոներից էին կնոջ դիմապատկերով սափորի բեկորը, ինչպես նաև փայտի և մետաղի խառնորդից պատրաստված դիմակը:

Միջնաբերդի հյուսիսային հատվածում խոտանված իրերով միջնադարյան հորի հայտնաբերումը հաստատեց մոտակայրում խեցեղենի թրծման վառարանի գոյության վերաբերյալ նախորդ տարիներին արված ենթադրությունը: Միջնաբերդից հյուսիս՝ դաշտում գտնվող հետախուզական-ստուգողական խրամատի ուսումնասիրությունը պարզել է, որ քաղաքի այս հատվածում ևս բնակեցում ու կառուցապատումը եղել են ինտենսիվ: Հայտնաբերվել են ջնարակապատ խեցեղենի բազմաթիվ նմուշներ: Առավել ուշագրավ գտածոներից է ապակե ուղունքը՝ իրար դեմ երկու օձերի վերադիր պատկերով, ինչպես նաև կապտավոր ապակուց արաբատառ դրամը:

Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Ա. Ժամկոյյան, Ա. Ա. Քալանթարյան, Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970 թթ., ՊԲՀ, Եր., 1976, 115 էջ, 1979, №3 (86), էջ 260-262:
2. Ա. Ժամկոյյան, Aram Kalantaryan, Dvin histoire et archeologic de la ville medieval, Paris, 1996, P.115, Bibliogr. 173-189, ՊԲՀ, Եր., 1999, №1 (150), էջ 255-259:
3. Հ. Մելքոնյան, Արամ Քալանթարյան 70, ՊԲՀ, Եր., 2007, №3 (86), էջ 269-271:
4. Հ. Մելքոնյան, Aram Kalantaryan 70, Aramazd. Armenian journal of Near Eastern studies, volume II, Yerevan, 2007, p. 218-219.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

Եր. - Երևան

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀՀ - Հայաստանի հնագիտական հուշարձանները

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես

АПА - Археологические памятники Армении

АО - Археологические открытия

ВОН - Вестник общественных наук

ЕГУ - Ереванский государственный университет

ИФЖ - Историко-филологический журнал

Тб. - Тбилиси

М. - Москва

ՀԱՄԱՐԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

- Ավետիսյան Պ. 120
Արեջյան Գ. 32, 132
Բարսեղյան Լ. 1
Բյազով Լ. 28
Բաբայան Ֆ. 29, 53, 103, 111, 112, 117, 130, 133, 134, 139
Բոբոխյան Ա. 102
Եսայան Ս. 25–28, 38, 67
Ժամկոյյան Ա. 15, 29, 53, 78, 82, 95, 97, 100, 130, 133, 134, 139
Խաչատրյան Ժ. 1, 9, 16
Կանեցյան Ա. 67, 113, 117
Կարախանյան Գ. 2, 91, 129, 134
Կոստանյան Կ. 34, 36, 72
Հակոբյան Հ. 92, 135
Հակոբյան Ն. 29, 53, 78, 82, 95, 97, 100, 130, 133, 134, 139
Հայրապետյան Ա. 134
Հարությունյան Ս. 120
Հարությունյան Վ. 80
Հմայալյան Ս. 32
Հորոսյան Ս. 120, 135
Դագիյան Ա. 98, 105, 109
Դաֆադարյան Կարո 37, 106
Դաֆադարյան Կորյոն 32, 37, 53, 62, 66, 75, 78, 82, 86, 139
Մելքոնյան Հ. 94, 97, 112, 117, 119–122, 127, 130, 133, 134, 136, 137
Միրիջանյան Դ. 139
Նավասարդյան Ք. 134
Պետրոսյան Հ. 134, 120
Ջանփոլադյան Հ. 26, 53, 68, 72
Սարգսյան Գ. 30, 42, 45, 89, 94, 118, 120, 122, 136
Սարգսյան Հ. 104
Սիմոնյան Հ. 32, 123
Վարդանյան Ռ. 53
Տիրացյան Գ. 32
Փիլիպոսյան Ա. 28, 84, 88, 92, 112, 117, 119
Քալանթարյան Ի. 139
Քոչարյան Գ. 29, 82, 130, 133, 139

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արամ Քալանթարյան	5
Արամ Աշոտի Քալանթարյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	11
Արամ Կալանտարյան	13
Основные даты жизни и деятельности	
Арама Ашотовича Калантаряна	18
Աշխատությունների ժամանակագրական ցանկ	
Хронологический список трудов	19
Ա. Քալանթարյանի մասին	94
Հապավումների ցանկ	94
Համահետինակների այրբենական ցանկ	95

Տպագրված է «Հայկարի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 60×84 1/16: Ժողով՝ օֆսեթ:
6 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0438017

